



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գ. ԽԱՉԿՈՆՅ

ՀԱՅՈՑ ԿՐՕՆԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

(ԱՐՏԱՏՊՈՒՄԻՆ «ԼՈՒՄԱՅ» ՀԱՆԳՐԱԽՈՒՄ)



891-99-09

Խ-29

Թ Ի Յ Ա Ի Ս

Տպարան Տ. Ս. Ռոտինեանց

1904

- 6 NOV 2011

9793.

891.99.09

Խ-29

118.

Դ. ԽԱՉԿՈՆՑ

ՀԱՅՈՑ ԿՐՕՆԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԺՈՒԹԻՒՆ

1002
4260

(ԱՐՏԱՏՊՈՒՄԻՆ ԵՂՈՒՄԱՅ ՀԱՆԴԻՍԻՑ)



Թ Ի Յ Լ Ի Ս
Տպարան Տ. Մ. Ռոտինեանց
1904



ՀԱՅՈՑ ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԺՈՒԹԻՒՆ

1. Մեր հին մատենագրութիւնը, շատ քիչ բացառութեամբ, զուտ կրօնական է, և մեր նախնիք, ընդհանուր գիծերու մէջ, բոլորովին կրօնական հասարակութիւն մ'էին, իրենց եկեղեցիով: Սա ինքզինք իբրև ազգային ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ շեշտել տուաւ Զ. դարու կիսուն: Այնուհետև է որ կունենանք մեր տօմարն ու կրօնական բանաստեղծութիւնը:

2. Ն. դարուն, «Ոսկեզէն դարուն», ս. թարգմանիչներու ձեռքով կսկսի մեր Եկեղ. մատենագրութիւնը, որ երկու մասի կը բաժնուի՝ Ժողովրդային ու վարդապետային: Առաջինը կը բովանդակէ 1. Վրձաբանութիւն, այսինքն Շարականներ, Տաղեր, Գանձեր. նաև կրօնական առասպելներ, Հաւատալիքներ, Տեսիլքներ և այլն. 2. Վարդապետութիւն, այսինքն Վարդ սրբոց և Տօներու նշանակութիւնը. 3. Արեւմտեանութիւն, գլխաւորապէս և. կեղեցական ճառեր, ներբողներ ու խրատներ. 4. Հավուական, կեղեցական կոնդակներն ու չրջաբերականները: այսինքն եկեղեցական կոնդակներն ու չրջաբերականները: կը զբաղեցնէ մասնագէտ եկեղեցականները, կը բովանդակէ 1. Վարդապետութիւն. այսինքն ուսումնասիրութիւն այնպիսի կրօնական գիրքերն որ կը վերաբերին Աստուածութեան գաղափարին, եկեղեցական խորհուրդներուն և այլն, և որ կը լուսաբանէ ուղիղ վարդապետութեան ու հարափառ վարդապետութեան տարբերութիւնը: 2. Մեջնաբանութիւն, որ ս. Գիրքը կը բացատրէ Աւանդութեան և ս. Հարց զրուածներուն համաձայն: Նա 3. Վարդապետութիւն կամ Կանոնային ուսում, այսինքն եկեղեցական կանոններու քննութիւնը, ծագումն ու պատմութիւնը:

3. Եկեղեց. Մատենագրութեան աղբիւրներն են Վարդապետութիւն կամ Վարդապետութիւն, Մեջնաբանութիւն այսինքն Մարգարէ, Ժամագիրք և

Дозволено цензурою. Тифлисъ, 20 Октября 1901 г.

այլն. որոնց մէջ են կրօնական երգերը, Տօները և Խորհուրդներու վերաբերեալ աղօթքներն և այլն. ճառարար կամ Տէրապետ, ժողովածուներ, սուրբերու մասին պատմութիւն, ներբող և այլն. Զանազան եկեղեցական ժողովներու կանոններու հաւաքածուներ: Ասոնցմէ զատ կան նաև սա նիւթական աղբիւրները՝ եկեղեցական սլառներ, Խաչեր, Աւետարաններ, Չարդեր, Սպասներ, Անօթներ և այլն, որոնք ունին իրենց պատմութիւնը. նաև տաճարներն որոնց շինուածքի տարբերութեան մասին ատենօք քննութիւններ և վէճեր եղած են: Նմանապէս աղբիւր են հին ձեռագիրները, որոնց թէ՛ արտաքին և թէ՛ ներքին կազմութիւնը ծանօթութիւն կուտայ կղերին արուեստագիտութեան վրայօք: Ասոնց մասին մինչև անգամ առանձին հրահանգներ կային: Ձեռագիրներէն ոմանք ճոխ յիշատակարաններ ունին, որոնց մէջ տեղեկութիւն տրուած է թէ ո՞ր գրուած է գիրքը, որո՞ւն ձեռքով և ո՞վ թելադրած է: Ասոնց մէջ կան գեղարուեստի վերաբերեալ բառեր, դարձուածքներ: Նախնիք մեծ ջանք է գործ կը դնէին՝ ու Գիրքը ծաղկելու համար, որովհետև աղիկա իրենց համար ապաշխարութիւն կամ բարի գործ կը համարուէր:

4. Եկեղեց. Մատենագրութեան ժողովրդական մասը միայն ժողովրդի կեանքին հետ կապ ունի. հոն պատկերացուած են հայոց կրօնական զգացումներն ու պահանջները: Իր գոյութեան պատճառն ու նպատակը նոյն իսկ ժողովրդական կեանքն է:

Եկեղեցական մատենագրութեան այս մասին մէջ գլխաւոր տեղը կը բռնէ կրօնական բանաստեղծութիւնը: Սա բանահիւսութեան կամ գրականութեան այն ճիւղն է ուր կարելի է ճանչնալ իւրաքանչիւր ազգի զանազան դասակարգի ըմբռնած կրօնական կատարելատիպ էակներն ու իրենց պարագաները: Հոս երանգներով պատկերացուած է ժողովրդի երևակայութիւնը կրօնական գաղափարներու մասին, որոնք այնքան աւելի լսեմ ու ընտիր կերևան, որքան զարգացած է նոյն իսկ այդ գաղափարներն ընդունող ժողովուրդը, Կրօն. բանաստեղծութեան մէջ խտացած է ժողովրդի գաղափարը գերագոյն էակի, երկնային զօրութեանց աջակից կամ հակառակ ոգիներու, իրենց գործերուն և մարդոց վրայ գործած տպաւորութեան մասին: Հոս իրականը խառնուած է մտացածինին հետ:

4. աւելի յստակ կարտայայտուի ժողովրդի երևակայութեան ուժն ու իրենցմէ յառաջ եկած հաւատքը: Եւ որովհետև կրօն. բանաստեղծութիւնը զարգացած է ժողովրդի երևակայութենէն, իր գոյութիւնը կը շարունակէ անխափան. դարերու ընթացքին մէջ, ցորչափ նոյն ինքն ժողովուրդն ապրի: Այդ բանաստեղծութիւնը յաւիտենական է: Հին հաւատքի ատեն հաստատուած կրօնական բանաստեղծութիւնը կը մշտնջենաւորէ իր գոյութիւնը՝ պատուաստուելով քրիստոնէական հայեացքով: Այդպէս կարելի կըլլայ քրիստոնէական կրօնի բանաստեղծութեան մէջէն հետազօտել հին հաւատքի բեկորները:

5. Կրօնական բանաստեղծութեան աղբիւրներն են. 1. Նոյն իսկ ժողովրդական Եկեղեց. 2. Կրօնական Եկեղեց. 3. Քրիստոնէական Եկեղեց. պարսկական նախնի ժամանակները կամ Երեսնները. 4. Ծագումնաբան Եկեղեց. կամ Մեծաբան Երեսները. 5. Բնական Երեսները Բացարձակ Երեսները Երեսները Երեսները:

Ժողովուրդը կրօնքով կապրի: Ունի իր Սրբութիւններն որոնց մասին հիւսած է զանազան երգեր ու զրոյցներ: Ասոնք դարերու ընթացքին մէջ փոխուած են ժողովրդի զարգացման համեմատ: Ժողովրդական կեանքն է եղած այն գլխաւոր ուժն որով պահպանուած են նախնի կրօնի զանազան սկզբունքները. հազար ու մէկ փոփոխութեանց ենթարկուելով, և ատկէ զատ, ժողովրդական կեանքը պահպանած է իրեն մէջ հին հաւատքի քրիստոնէական կրօնքի հետ մրցման նկարագրութիւնն և ասոնց հետեւողները: Ժողովուրդը պահած է Հին հաւատքի սրբատուփին ծէսերը, արարողութիւնները, Սովորութիւններն որոնք քրիստոնէական կրօնքի հետ կապ չունին երբեք, ասոնց մէջ քրիստոնէական բան մը չկայ, ինչպէս Ուխտագնացութեան մասին ժողովրդական հայեացքները, Ընկնաւորները, Գուշակները, Թղթամայ ու Գրահմայ, Գեներու հաւատալ և այլն¹⁾:

Կրօնական կեանքն ըսելով որ շատ բազմակողմանի ազդեցութիւն ունի կրօն. բանաստեղծութեան վրայ՝ կը հասկնանք այն բոլոր կարգերը, ծէսերն ու արարողութիւններն որոնք կրօնին կը վերաբերին: Ասոնք երկու մասի կը բաժնուին. 1. Կրօնական Ծէսեր, զորոնք եկեղեցին ընդունած է և որոնց մասին տա-

¹⁾ Ասոնց մասնաբաժան վերլուծումը համա. Բիւրակն, շաբաթաթերթի, 1898, մեր «Ժողովրդ. բանահիւսութեան ազդեակները»:

ռանձին կանոններ սահմանած է, 2. Այն սովորութիւնները զորոնք թէև եկեղեցին չէ ընդունած ու սրբագործած, սակայն ժողովուրդն իր բազմադարեան սովորութեամբ նուիրագործած է:

ձգնաւորական կեանքն ալ որ ծագած է արևելքի մէջ՝ մեծ ազդեցութիւն ունեցած է Կրօնական բանաստեղծութեան վրայ: Արհամարհելով աշխարհն ու աշխարհածին մարմինն ին տանջելով՝ յոյս կը տածէին երկնաւոր վարձատրութեան. ուստի կը հեռանային գուարճութիւններէ և մինչև անգամ աշխարհէն, և առանձնական կեանք կը վարէին այրերու և ծառի խուռջներու մէջ: ձգնաւորական կեանքը մեծ ազդեցութիւն ունեցաւ ժողովրդին վրայ, և այնքան մեծ էր ատիկայ որ յերկրուեցան զանազան հրաշքներ ու առասպելներ: Ասոնցմէ շատ կը գտնուին Վկայաբանութեան մէջ, ինչպէս Նարեկացւոյ աղուներն, Յովհաննիստասէրին վիշապը և այլն:

Առ հասարակ բնութեան երևոյթներու վրայ տարբեր գաղափար ունէին մեր նախնիք: Ասոնք տեղեկութիւն չունենալով այն երևոյթներու պատճառի մասին, մէն մի երևոյթ կը բացատրէին իբրև ժողովրդի մեղքի հետևանք: Տարածած Մահը, Սովը, Լուսնի և Արեգական խաւարումներն ամէնքն ալ մեղքի հետևանքներ էին: Յովհաննէս «Վոզեռն» ճգնաւոր 1036 ին տեղի ունեցած Արևի խաւարումը կը վերագրէ Քրիստոսի 1.000 թուականին ու Նեռի ծնելուն: Այդպիսի աւանդութիւններ շատ կան և հասած են մինչև մեր օրերը, և ատոնք մեծ ազդեցութիւն գործելով ժողովրդին վրայ՝ հետզհետէ Առասպելաբանութեան նիւթ դարձած են և մտած են Կրօնական բանաստեղծութեան մէջ:

Կրօնական բանաստեղծութեան առատ նիւթ կը մատակարարին նաև զանազան պատմական դէպքեր, ինչպէս Պետրոս Գետադարձի համար կաւանդուի թէ խաչը ջուրը ձգելու ատեն ձորոխ գետի հոսանքը կեցած է, Սահակ Զորափորեցին մինչև անգամ իր մեռած ատեն ժողովրդին օգտակար եղաւ՝ Ամիրապետին բարկութիւնն իջեցնելով: Վանքերու մասին աւանդութիւններն ալ նոյնպէս մեծ նշանակութիւն ունեցած են Կրօնական բանաստեղծութեան մէջ:

Կրօնական բանաստեղծութեան ազդակները կը կազմեն նաև կրօնական գրոյցները: Ունէ մէկ նշանաւոր դէպք կը զբօշմուի ժողովրդին մէջ և հետզհետէ ճոխ ընդմիջարկութիւններով

կը զարգարուի: Ասոնց վրայ կը հիւսուին զանազան պատմութիւններ, գրոյցներ, որոնք տեղէ տեղ, բերնէ բերան անցնելով՝ կենթարկուին զանազան փոփոխութեանց: Այսպիսի գրոյցներուն ընդհանուր հանգամանքն է պատկերացրել իրողութիւնը հրաշալի ձևով, գերբնական գործողութիւններով, որոնց կը միջամտէ Նախախնամութիւնը: Հոս իրար կը խառնուին Իրականն ու Մտացածինը, և հրաշալի նկարագրութեանց առջև կը նսեմանայ Բուն պատմական իրողութիւնը, գրոյցին պատճառը: Սուրբերէն, Սրբազաններէն շատերու մասին կան կրօնական գրոյցներ, որոնց մեծ մասը մինչև հիմայ գոյութիւն ունի ժողովրդի մէջ: Նթէ վերլուծուին երևակայութեան այս արդիւնքները, պիտի տեսնուի որ ատոնք կը բովանդակեն եկեղեցական պատմական գլխաւոր կէտերը: Ասոնցմէ կարելի է քաղել ամբողջութիւն մը ուր պիտի պատկերանայ ժողովրդի կրօն, հայեացքը, աւելորդապաշտութիւնը, պատմական կեանքի մասին ունեցած տեղեկութիւնները, նաև իր տնտեսական վիճակը:

6. Բանաստեղծութիւնը կը բաժնուի 1. Դրատիկական (կամ մեր նախնեաց լեզուով «Վիպական») առարկայական (objectif) կամ Ոսկեղէն դարու լեզուով «Յանդիմանակացական» իրերը, արտաքին դէպքերը կը պատկերացրէ: 2. Բանաստեղծութիւնը (Dratalique), որ Դիւցազներգական առարկանութիւնն ու Քնարականին անձնաւորութիւնն է միանգամայն, այսինքն ներքին աշխարհին արտաքին դէպքերով պատկերացումը, և 3. Քնարական (Lirique), որ աւելի ենթակայական (Subjectif) կամ Ոսկեղէն դարու լեզուով «Անձնական» է, որովհետև պուէտը (=Բանաստեղծ) իր ներքին զգացումը ցաւը կամ ուրախութիւնը կը յայտնէ:—Քնարական կոչուած է այս բանաստեղծութիւնը՝ երգերը քնարով երգուելուն համար: Քնար երբայեցերէն բառ է, Քնար:

Քնարական երգերը նախապէս ուրախութեան նուազներ էին որ յիշեցնելով անցաւոր կեանքը՝ աշխարհային բարութիւնները վայելել կը յորդորէին: Սակայն և որովհետև Քնարաններուն կէսը կերպէին անցաւոր կեանքը, վիշտ ու հոգը, ասկէ ծագեցաւ Սուգի ու Աշխարանքի (Եղերական) երգերը:

7. Կրօնական բանաստեղծութեան Քնարական մասը խտացումն է հեղինակի կրօնական զգացման որ կարտայայտուի զանազան ձևերով, կամ իբրև պատկառանք, երկիւղ Գերագոյն էակէն, Խոնարհական զգացում, կամ իբրև Փառաբանութիւն,

Գովեստ սքանչանաց. և վերջապէս Ակնկալութիւն, Շնորհք, Ռ-
դորմութիւն սպասել Գերագոյն էակէն: Այսպիսի զգացումներ
կարտայայտուին նաև սուրբերու և վկաներու նկատմամբ, որոնց
բարեխօսութեան ակնկալութիւն ունին: Այս զգացումներով լի-
ցուն են Հայոց հոգևոր երգերն որոնցմով հայ գրականութիւնը
շատ ճոխ է: Ի՞նչէն է այս.— Մէկ կողմէ ջերմեռանդ կրօնասի-
բութիւնը, միւս կողմէ Քրիստոնէական կրթութիւնն՝ որ մեր
նախնեաց մէջ շատ մեծ եղած է: Քնարական բանաստեղծու-
թեան նախատիպն էր Ս. Գիրքը, գլխաւորապէս Սաղմոս: Սաղ-
մոսբողութիւնը Հայ եկեղեցւոյ հոգեգմայլ երգերէն մէկն է:
Ս. Գիրքն Ե. դարուն թարգմանուելով՝ Հայ գաղութներու և
Գաղթականներու գլխաւոր դասագիրքն եղաւ, ուր կը գտնէին
ուսումնասիրութեան համար բազմակողմանի նիւթ: Ս. Գիրքին
մէջ կը տեսնէին Կրօնական բանաստեղծութեան վերաբերեալ
օրինակներ, որոնք կը զարթնցընէին Հայոց մէջ ձկտումը նոյն
պիսի երգեր յօրինելու: Մանաւանդ որ Սաղմոսի և նաև Աս-
տուածաշունչի միւս գիրքերու զանազան օրհնութիւններն այն-
քան խորապէս տպաւորուեցան նախնեաց մէջ որ ասոնց հե-
տևողութեամբ յօրինեցին նոր երգեր: Քրիստոնէութենէ առաջ
Հին հաւատքի աստն, կային կրօնական զգացումներ պարու-
նակող երգեր, հարկ էր որ անոնց յաջորդէին Քրիստոնէական
երգերը, որպէս զի մէկ կողմէ զօրացնէին քրիստոնէական
կրօնի վերաբերեալ զգացումները, և միւս կողմէ Հին հաւատքի
ոչ նուազ վսեմ գաղափարներն ամփոփէին իրենց մէջ: Այս նը-
պատակին հասնելու համար հարկ էր նոր կտակարանի գլխա-
ւոր անցքերը քնարերգել ժողովրդին ծանօթացընելով կրօնի
էական կէտերը, այսինքն Աստուածութեան անձնաւորութիւն-
ները, անցնիլ երկրորդական կէտերուն, այսինքն քրիստոնէու-
թեան տարածողներուն, վկաններուն, ս. հարց և հին կտակա-
րանի վերաբերեալ սուրբերուն: Այս կարգը կը տեսնուի նոյն
խի երգերուն մէջ: Այն երգերն, որ կը բովանդակեն Աւետա-
րանի գաղափարները, հին աստն դրուած են, ինչպէս կը մատ-
նանիչուին իրենց բովանդակութենէն ու ոճէն: Կրօնական բա-
նաստեղծութիւնը զարգանալու պատճառներէն մէկն ալ եղած
են ասոնքը. իւրաքանչիւր օտնի պատիւը բարձրացընելու և
խորհուրդը ընդհանրացընելու համար՝ նախնիք յօրինեցին եր-
գեր, որոնց մէջ մէկ կողմէ կարծարծուէր ս. Գիրքի բովանդակու-

թիւնը, և միւս կողմէ կը յայտնէին իրենց զանազան կրօնական
զգացումները:

8. Հայոց հոգևոր երգերը այսպէս կը բաժնուին. 1. Եր-
գեր որոնք իսկ առին էլեղեցալան աստուծոյ հետ և այդ աստուծոյ էլեղեցալան:
Ասոնք կը կոչուին Շարափներ: 2. Երգեր որոնք և ոչ մէկ էլեղեցալան
արարողութեան հետ իսկ չառին: Ասոնք ալ կը կոչուին Տաղեր: Եւ 3.
Այն երգերն որ էլեղեցալան ծախարարութեան արարող մընոյն և ինքնաշարժին
խնդրուածքներ: Ասոնք ալ կը կոչուին Գանգեր. (գանձ, գանդ
պարսկերէն բառ է և կը նշանակէ կրօնական երգ): Ասոնցմէ
զառ կան խառն երգեր որ կը բովանդակեն խնդրուածք և
գովեստ (ներբող) սուրբերու մասին:

Տաղերը, գանձերը, նաև մեղեդիներն ալ Շարափան կը
կոչուին առհասարակ (թէն զանազանութիւն կայ ասոնց միջև,
արգէն ըսինք) ինչպէս կը տեսնուի Ներսէս Շնորհաւոյ «Հրեշ-
տակաց» ոտանաւոր մաղթանքին. նաև ասոր յաջորդ Գրիգոր
Տղայ կաթողիկոսին «առ հաղբաւտացիս» թղթին և Ներսէս Լամբ-
րոնացւոյ «Մեկնութիւն պատարագի» «Տէր թագաւորեսցէ ի»
մէջ— Զոր երգէ եկեղեցի խորհրդապէս նախ սկիզբն սրբոյ
պատարագին ընդ որ և շարական յարմարին պատշաճապէս ի
փառս Աստուծոյ:

Գալով «շարական» բառի նշանակութեան, մեր եկեղեցա-
կան մեկնիչները աւելի կը համարեն «Շարական»ը բարդուած
Տաղ և ալ՝ բառերէ, այսինքն ազնիւ քար, իբրև թէ նշանակէ
«շարականաց պատուականաց» երգին վայելչութիւնն այլաբա-
նելով: Սակայն հայ լեզուի բարդութեան կանոնն ասոր դէմ
կելլէ, որովհետև Ալ՝ իբրև ազնիւ քար նշանակիչ, սովորաբար
նախադաս կը գրուի բարդութեան մէջ, ինչպէս «Ականակապ»,
«Ականագոյն» և այլն, իսկ ուրիշ բան եթէ նշանակէ, բառն
անփոփոխ կը մնայ, ուղղական, ինչպէս «մեծակն», «շարակն»
և այլն: Ասոր համար նախամեծար է Տաղալան բառն ածանցուած
համարել երբայական սեմական շէր կամ շէր բառէն որ «երգ»
կը նշանակէ, այս սեմական բառն նոր պարսկերէնի մէջ ալ
կայ՝ արաբացիներէն փոխ առնուած:

9. Հայոց կրօնական երգերուն այս բաժանումը կը հա-
մապատասխանէ հին երբայական բանաստեղծութեան սաղմոս-
երգութեան: Սաղմոսի երբայեցերէն անունն է Դէհլէլ, այս-
ինքն գովեստներ փառաբանութիւններ, թէպէտ և Սաղմոսնե-

րէն շատերը մասնաւանդ Ողբ կամ Նղերերգութիւն են՝ Գնար-
երգական ըլլալուն: Սաղմոսներուն մեծագոյն մասն իբրեւ վեր-
նագիր ունի Մեծօր որ կը նշանակէ «բանաստեղծութիւն»:
«երգ»: Այս բառն եօթանասնից յունարէն Աստուածաշունչի
մէջ թարգմանուած է Փառաբան, ուրկէ Հայերէն «Սաղմոս», այս-
ինքն նուագերգութիւն կամ քնարական քերթուած:

Սաղմոսերգութիւններն իրենց բովանդակած նիւթին հա-
մեմատ կը բաժնուին. 1) Նշուած կամ որ ճիշտն է Նահապետի «Ա-
լիւսեաները», «Գովեստի երգեր», Դէհլէի բուն նշանակու-
թեամբ: 2) Տօներու հոգեւորականութիւն «Նրգ աստիճանաց» և 3.
Այն հոգեւորականութիւն որ է բովանդակէն «Կարգաւոր» և 4. Սաղմոս
հոգեւոր, Նղերական, Մեծօրական սաղմոսներ:

10. Որոշակաբար կամ Տաղաչափութեամբ զանազան կանոններու
համեմատ վանկերը չափով կամ թուով կարգաւ չարել, կամ
բանաստեղծական լեզուով խօսիլ կը սովորեցնէ: Հետեւապէս
Տաղաչափութիւնը բանաստեղծութեան իբրեւ թէ քերականութի-
ւնն է:

11. Տաղաչափութիւնն երեք տեսակ է. շէշտայ վանկային,
կամ բառային ու չափային:

Շէշտալ ոտանաւորին մէջ բառերուն և վանկերուն շէշտ
որոշ կանոնի տակ է: Նրգութեւն համար եւրոպական եղանակ-
ներու վրայ յորինուած երգերը շէշտալ ոտանաւոր են:

Վանկային կամ թուական ոտանաւորը վանկերու թուով
կը կազմուի:

Թուական ոտանաւորներն ընդհանրապէս յանգաւոր կըլ-
լան: Չափականն ալ, թուականին հակառակ, ոչ թէ վանկ կը
համարէ, այլ վանկերու թուէն անկտիւ, վանկերու երկայն ու
կարճ չափերով ոտը կը ձևացնէ: Չափական ոտանաւորը բո-
լորովին անյանգ է: Շարականները մեծ մասամբ չափական ո-
տանաւորներ են:

12. Չափականին ոտքերէն ոմանք երկավանկ են և ոմանք
եռավանկ, կը գտնուին նաեւ բազմավանկներ, սակայն երկա-
վանկներուն և եռավանկներուն բաղադրութիւնն են: Չափա-
կան ոտքերն ու իրենց անուններն ըստ հնոց հետեւեալներն են,
երկավանկ ոտքերն են Տեծալէրջ, Տեծաւոր, Համբոյր ու անգայր:

Երկավանկ բառի մը առաջին վանկն եթէ սուղ ու վեր-
ջինն երկար ըլլայ, կը կոչուի մեծավերջ, եթէ առաջինն երկար

ու վերջինը կարճ ըլլայ, մեծասար, երկու երկար միավանկ
բառեր կը կոչուին համբոյր, երկու սուղ բառեր՝ անգայր: Ե-
ռավանկ ոտքերն են հոգեւոր, վերջապահ, հոգեւոր, հոգեւոր, հոգեւոր
հոգեւոր, հոգեւոր: Եռավանկ բառի մը առաջին վանկն եթէ
երկար ու վերջին երկուքը, կարճ ըլլան, կը կոչուին ստեղն,
առաջին երկուքը սուղ ու վերջինն երկար ըլլայ, վերջապահ-
եթէ առաջինը սուղ, երկրորդը ու երրորդը սուղ ըլլայ, քո-
ղաղօտ, առաջինն ու երրորդն երկար ու երկրորդը սուղ՝ քո-
ղաղօրք, առաջինը սուղ և երկրորդն ու երրորդն երկար՝ ա-
ւարտեղ, առաջինը և երկրորդն երկար՝ հաւեղ, երեքն ալ եր-
կար ըլլան՝ սոնք, և եթէ երեքն ալ կարճ ըլլան՝ ներգև:

Այս ալ և այլ չափերուն համեմատ, ոտանաւորները կը
զանազանուին Տեծալէրջան, Տեծաւորան, հոգեւորան, վերջապահան, կամ
խառն մեծավերջ ու վերջապահ, մեծասար ու ստեղն, մեծա-
սար ու մեծավերջ, ստեղնեան և ուրիշ համբոյրով խառն:

Հայկական չափերու բուն ու յաճախ գործածականն է
վերջապահ կամ վերջապահ կոչուածն որուն բովանդակ էական յատ-
կութիւնները հետեւեալներն են.

1—3—4—3. ուր 1) պահապան՝ որ ծագեցար՝ յնդեմայ,

4—2—4—3. նշան յաղթութեան՝ ընդդէմ՝ աներկոյթ թշնամուն:

4—4—4—4. դու փակելոյ դրախտին բացող՝ և առաջնորդ՝
աւազակին,

4—4—3—3. որ զբոցեղէն՝ սուրբն կապտեաց անդին՝ հրա-
մանաւ:

4—3—4—3. որովք և մեք՝ վերջացեալքս՝ յամենառատ՝ քո շնորհէ:

3—3—4—3. ձօխանա՝ մըք նոքօք՝ գեր ի վերոյ՝ քան զարժանն:

3—3—4—4. ողորմեա՝ մաղթանօք՝ սոցա երկրորդ՝ բանաւորացս:

Շատ մը այլաչափ կարծուածներն ալ, ինչպէս ըրած է
հ. Արսէն Բագրատունի, «Մշակական», էջ 18, կրնան դիւրաւ
վեցաչափի վերածուիլ:

Վեցաչափ տողի մը մէջ կրնայ 12—16 վանկ ըլլալ՝ չորս
անգամի բաժնուած, որոնց իւրաքանչիւրը (երկար և սուղ
խառն) երեք երեք վանկ կը համարուի: Այսպէս իւրաքանչիւր
տողը 12 չափական վանկ կամ 6 ոտք կուտայ: Կրնան ան-

1) Այս «բութ» (') կէտը հատածի կամ անգամի տեղ նը-
շանակուած է:

դամները՝ չորս վանկի տեղ երեք կամ երկու նաև մեկ վանկ միայն ունենալով։ Միավանկ կամ երկավանկ անդամները սովորաբար տողին կէսէն առաջ կըլլան։

Շատ վարժութիւն պէտք է չափական ոտանաւոր մը կարգալու՝ երգելու և անոր գաղտնիքներուն թափանցելու համար։ Նրբեմն որչափ կը սխալին մեր երաժիշտները Շարականը կամ Փաղուածքն երգելու ատեն։ Քաղուածք երգել ամէն երաժշտի դործ չէ, ինչպէս դիտուած է շատ անգամ։

13. Նրաժշտութիւնն ալ բանաստեղծութեան նման ունի իր տաղաչափութեան օրէնքները, այսինքն իւրաքանչիւր երգ շեշտերու զրութեան համաձայն բաժնուած է հատածներու։ Նրաժշտական երկու գլխաւոր հատած կայ՝ *Յեծասար ու Կոճակ* մնացածները ասոնցմէ ածանցուած կամ բաղադրուած են։ Մեծասարը $\frac{2}{4}$ երաժշտական հատած մըն է, եթէ պարունակէ զոյգ ամանակ ուր կը շեշտուի առաջինը, մինչ երկրորդը անշեշտ կանցնի. ստեղն է $\frac{3}{4}$ ։ Եթէ կը բովանդակէ երեք ամանակ (կոճակ) ուր կը շեշտուի կրկին առաջինը, մինչև վերջին երկուքն անշեշտ կը մնան. մեծասարի ածանցներն են $\frac{4}{4}$, $\frac{4}{2}$, $\frac{8}{4}$, $\frac{2}{2}$, $\frac{3}{8}$, $\frac{4}{8}$, և այլն, ասոնց $\frac{4}{4}$, $\frac{2}{4} + \frac{2}{4}$ կը շեշտուի մեծասարի ($\frac{2}{4}$) նման, այն զանազանութեամբ միայն որ առաջին $\frac{2}{4}$ շեշտն աւելի զօրաւոր է քան երկրորդին և այլն. ստեղնի ածանցումն են $\frac{3}{8}$, $\frac{6}{8}$, $\frac{9}{8}$, $\frac{12}{8}$, $\frac{6}{4}$, $\frac{9}{4}$ և այլն, ուր $\frac{9}{8} = \frac{3}{8} + \frac{3}{8} + \frac{3}{8}$ առաջին $\frac{3}{8}$ ը զօրաւոր շեշտ ունի, երկրորդը զրեթէ առաջին կիսուն չափ. և երրորդն աւելի պակաս և այլն։ Բարդութիւններն են $\frac{5}{4}$, $\frac{7}{4}$, $\frac{5}{8}$, $\frac{7}{8}$ և այլն, ուր $\frac{5}{4} = \frac{2}{4} + \frac{3}{4}$ ին կամ $\frac{3}{4} + \frac{2}{4}$ ին և կը շեշտուի պարզերուն շեշտազրութեան օրէնքով։ Մեր եկեղեցական եղանակներու մէջ կան թէ մեծասար և թէ ստեղն և թէ անոնց ածանցներն և բարդ—ածանցներ։

14. Նրաժշտութեան և լեզուի շեշտադրութեան օրէնքները սերտ կապ ունին իրարու հետ, երկուքին շեշտն ալ ի բարձէ անբաժան ըլլալով՝ անքակտելի ներդաշնակութիւն մը կը ներկայացնեն։

Մեր լեզուին մէջ կը շեշտուին բառերու վերջին վանկերը միայն։ Բացի կոչականներէ, երգեցողութեան մէջ ներքին է բազմավանկ բառերուն երկու շեշտ տալ և եթէ հնարաւոր է, բառի արմատը շեշտել, ինչպէս ըրած են մեր նախնի բանա-

ստեղծ—երգիչ—երաժիշտ հայրերը։ Ուրեմն նախ պէտք է երգի խօսքը լեզուական չափի վերածել, յետոյ հատածներու բաժնել, որպէսզի լեզուի և եղանակի շեշտերն իրար համընդունեն։

Լեզուի շեշտերն երաժշտութեան խաղերէն առնուած են՝ լաւ *առաջնութեամբ* համար։ «Առողջանութիւն» կը կոչուի բառերն ուղիղ արտաբերելու կանոնը, իր նշանները, ինչպէս շեշտ, բութ, երկար, սո՛ւղ, ոլորակ կամ պարոյկ, ձայնաւորներ. բոլ վրայ կը դրուի։ Ասոնց անուններէն քերականական բացատրութիւններ յառաջ եկած են.—*շշտէլ, բթէլ, ելլալէլ և սո՛ւլ*։ Այս նշաններով կը ցուցուի *առաջնութեամբ* լեզուական ձայնին աստիճանը կամ տեղութեան չափը։

15. Առողջանութիւնը ըստ նախնեաց (կամ մանաւանդ ըստ յունաց) ձայնաւոր դրերու բարձրութեան ու ցածութեան և երկայնութեան ու կարճութեան վրայ զբաղելով՝ լեզուին իր թէ լեզուական մասն է, որուն համար յոյներն աւելի բացայայտ *առաջնութեամբ* կոչած են զոր մերիները *առաջնութեամբ* թարգմանեցին։ Նիւթական նմանութենէն չխափուելով հանդերձ կըսենք թէ *առաջնութեամբ* *առաջնութեամբ* մէկ եղանակաւորումն է, ձայնաշարքումը, քան *առաջ* բառին մէկ բարդութիւնը։ Մեր լեզուն հիմայ շեշտը գոհած է, միայն պարագաներու համեմատ երկար շեշտ ու պարոյկ կը գործածէ, բնականէն բութ բառ մը կընայ երկարել, շեշտեալ ըլլալ։ Թէն յայտնի չի դժուր շեշտը, բայց առողջանելու, մանաւանդ երգեցողութեան ատեն յայտնապէս կերևան։

16. Հ. Արսէն վրդ. Բագրատունի, երբ 1847-ին Պորլիոսի Վիլգիլեայ Մարովի մշակականքը երկար յառաջաբանով մը հայերէնի թարգմանեց ոտանաւոր, այնպէս կարծուեցաւ թէ չափական ոտանաւորը զուտ հայկական է, հայացի այս պատճառաւ չափական ոտանաւորը կոչուեցաւ «հայկական չափ»։ Սակայն Հ. Յովսէփ վ. Գաթրճեան իր «պատմութիւն մատենագրութեան հայոց, Վիեննա, 1851, էջ 31—38» գիրքի տո՛ւտ թէ «Չափականութիւնն» ու «Համեմատականութիւնը» հին ասիական բանաստեղծութեան ջիղերն են։ Համեմատականութիւնն ուրիշ բան չէ, բայց եթէ մէկ գլխաւոր իմաստ կամ մտածութիւն մը բացատրող երկու կամ շատ նախադասութեանց կանոնաւոր կապակցութիւնն ու շարքը։ Այս գաշնակաւոր կրկնութիւններն

աստիճանաւոր իմաստի յառաջագիծութիւնն է որ մեր նախնեաց «գոսանական» քերթումներուն ոգին ըլլալէ զատ, կան նաև ս. Գրքի մէջ ալ: Աստիճանաց երգերէն մեծ մասն այսպէս է, ինչպէս ձի սաղմոսը, «համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեացէ ինց օգնութիւն»: «Օգնութիւն ինձ ի տեառնէ եկեացէ որ արար զերկինս և զերկիր»: Մի տար ի սասանութիւն զոտն քո, և մի ննջեացէ պահպան քո»: «Որպէս ոչ ննջէ և ոչ ի քուն երթայ պահպան ի սրայելի»: Կամ եւք. Ժէ. «Աչ ոչ Տէր փառաւորեալ է զօրութեամբ իւրով, — Աչ ոչ Տէր խորտակեաց զթշնամին...» և կամ Գատ. է. «Տէր, Յեշուէլ քո ի Սէիրայ, և ի չաւէլ քում յանդատանացն եդովմայ...» Այսպէս Հ. Գաթրճեան կերպով մը մատնանիչ ըրաւ թէ չափական ոտանաւորը զուտ հայկական չէ:

Վերջերս իտալացի հայագէտ Գրիմի նամակին և Մ. Դիւլալի ուսումնասիրութեանց վրայ յենլով՝ Վենետիկեան վարդապետ մը, Հ. Աթանաս Տիրոյեան, երկարօրէն գրեց «Բաղմալէպ» 1899, էջ 105, 249, 345, 502 թէ հայկական ոտանաւորի ծագումն ասորական է և հայկական չափերն ալ, շարականներու չափը, յար և նման է ասորականին:

17. Ասորական ու հայկական տաղաչափութեան մէջ իբրև նոյնութեան կէտեր նկատուեցան չափի, անդամներու և շեշտերու հանգամանքները: Սակայն հայկական ոտանաւորի կազմութիւնը կը տարբերի ասորականէն թէ անդամներու շարահմարտով, թէ իրենց պարունակած վանդերու ընդունակ թէ անդամներու իրարմէ բաժնուէլու հանդէ: Ինչ որ մեր լեզուին ներդաշնակութեան համաձայն չէ, մեր նախնիք զայն ասորերէնէ փոխ առած չեն: Հին ասորականին մէջ մետասանավանկ եռանդակ չափը չիկար. չափ մ'որ հին հայկական ոտանաւորին մէջ շատ յաճախուած է. հակառակ ասորական ոտանաւորի օրէնքին՝ հայկականին մէջ երկավանկ անդամ մ'երբեք չի կրնար քառավանկ անդամի յաջորդել: Այս վերջինները հայուն բնորոշ հանգամանքը կը կազմէ ասորականէն:

Նշելիք էալ. Գուրեան այս կարծիքին դէմ ելաւ, «Մասիս» շաբաթաթերթ. 1900, էջ 176—182, և դիտել տուաւ այս նմանութեան կէտերը հասարակացին և անմանութիւններն ու կերպարձ նմանութիւնները կը հաւաստեն թէ հայկական տաղաչափութիւնը դէթ մեծ բան մը չի պարտիր ասորականին ուրուն չափականութեան հիմնական սկիզբն է ոտանաւորի վան-

կերուն՝ որոշեալ թիւը, և այդ կերպն ի գործ կը դրուէր «Երևոյթ»-ին շաբաթու և օրհանգիւսներու մէջ, այսինքն ամբողջ գրուած մը համաչափ տողերէ կը բաղկանար: Ըստ այսմ Ս. Նիքիեմ եօթնավանկ տողերով յօրինած է իր շաբաթու օրոնք յաճախ 3+4 վանկերու կշռութեամբ կը ձևանան, Մար Բաղայ՝ հնգավանկ տողերով (2+3 վանկերով. Ներսէս՝ վեցավանկ չափով (2+3). իսկ աւելի վերջերը՝ Յակոբ Արճեցի իր քերթումները կը գրէր «Երևոյթ»-ին տողերով օրոնք քառավանկ 3 անգամէ կը կազմուէին: Արդ, կը յարէ Նիշէ եպիսկոպոս, անտեղի չէ մտածել թէ հայերը եթէ հետևող ըլլային Ասորոց՝ պատճառ մը չիկար որ չընդունէին այդ համաչափութիւնը, փոխանակ խառն ի խառն՝ անհամեմատ ու անհանգէտ տողերով յօրինելու իրենց քերթումները, արձակի մը համարձակութեամբ շարժելով իրենց գրիչը:

Հոս պէտք է միտք բերել Գողթան երգերն օրոնք ներքին կազմութեան մէջ մեծ գաղտնիք մ'որոնելու հետաքրքրութիւնն ամուլ մնացած է ցարդ, վասն զի, ինչ որ ալ ենթադրուի, անոնք իրենց ամէնէն պարզ ձևին տակ, արձակէն հազիւ զանազանող տողեր են, լոկ քերթողական շունչ մըն է որ կ'անցնի անոնց մէջէն բնական ներդաշնակութիւն մը տալով բառերուն և երգութեան հանդիմանած ըլլալով՝ հարկաւ վիպասանին գեղգեղանքն ու բամբուլին թրթռանքը կշիռ ելեջներով պիտի կրնային ոգևորել զանոնք: Հայ. եկեղեցւոյ հնագոյն շարականներն օրոնք Ոստանաւորի կաղապարուած ձև մը չունին, մանաւանդ Սաղմոսները (Իբրև երգեր) շօշափելի վկայութիւն մըն են ի հաստատութիւն այսպիսի վարկածի մը. Նրբայական բանաստեղծութեան և Գողթան «Թուեկեաց» երգերուն մէջ ալ նմանութիւն մը չկայ զուգակշռութեան մասին. զուգակշռութիւնը իսրայէլեան քերթողներու մտածութեան յատուկ դարձուածքներ են, մինչդեռ Գողթան երգերուն մէջ երեցածը՝ զգացման ուժգնութիւն տալու կամ իրողութիւն մը շեշտելու բնական ձևն է կրկնման, որովհետև Շիկամորթն անգամ նոյնը կ'ընէ իր երգերուն մէջ: Ամբողջ Գողթան երգերու և նաև սաղմոսարանին գաղտնիքն է սեղմ դարձուածքներ կամ քիչ շատ ներդաշնակաւոր լեզուի մը նախաբանքն իր բնական արտայայտութեան մէջ:

Արձակը՝ բուն արձակն անգամ ունի այդ հանգամանքը: Ծանօթ հայագէտ Ֆէթիք Գողթան երգերու արձակ մէկ հա-

տուածը տաղաչափական կապանքի զարկաւ, «Գիւցազնական չափ» հանդամանք մը տեսնելով անոր վրայ: Թերեւս իրաւունք ունէր պատուական գերմանացին, վասն զի այդ տողերու կազմութիւնը աւելի լրջութեամբ կը համապատասխանէ տաղաչափական արուեստի մը կանոններուն, քան թէ «Տենչայ Սաթի-նիկ Տիկին տենչանս», նոյնպէս և միւս պատառիկները Գողթան երգերուն: Սակայն տարօրինակ բան չէ որ «Երեւն» մէջ ալ այդ չափով տողեր ելլեն մեր դիմաց, ինչպէս Մ. Խոր. Ա. իզ. «Նւ ի մէջ այսպիսեաց խառն երազոց—թըւէր ինձ կալ ի վերայ աանեաց իմոցս...» Խոր. Բ. Ը. չեզերս ծովուն դիպեալ նաւուց թըշնամեաց,—գիմէ ի վերայ, և ի խաղալըն նոցա—ի խորն իբրև ասպարէզս ու թ.— և սա ոչ ժամանեաց նոցա. առնու վէմըս բըլրաձևս— և ձըգէ ըզկնի, և ի սաստիկ սլատաւմանէ—ջուրցն ընկըմին նաւք ոչ սակաւք».

Աւետ. (Մատթ. Ժ. 28—32), եւք Գ. 11, Առակք Գ. 2. 27—28, Մեկն. Մատթ. Ա. էջ 354, «Գիւցազներդական չափի» համեմատ վէջ տողերով են:

Վերջապէս կրնայ ըսուիլ թէ չափական ոտանաւորն յէականն և թէ յանգաւորը մեր մէջ սեմականէն փոխառնուած են:

18. Մինչև ԺԱ. դարը մեր նախնեաց ոտանաւորը չափական էր. այդ դարուն կ'սկսի Յանգաւոր թուական տաղաչափութիւնն Արաբացոց ազդեցութեան տակ: Յանգաւոր թուականն ու երբեմն անյանգ թուականը քիչ ատենէն ազգայնացած սովորական տաղաչափութեան յաջորդեց: Յանգական տաղաչափութեան գլխաւոր արդիւնաւորողներն եղան Գր. Մագիստրոս, Գր. Նարեկացի ու Ն. Շնորհալի: ԺԲ. դարէն ետք շարականներն երբեմն չափական և երբեմն թուական են:

19. Շարականի երգեցողութեան տողերու և հատուածներու վերջաւորութեան ատեն, երկար կամ զոյգ ամանակ ունեցող վանկին կը հետեին ընդհանրապէս կոճատները մինչեւ վերջը, կամ կրկին զոյգ ամանակ ունեցող վանկ մը: «Բարեխօսութեամբ ճօր և և չափ ընկալ զաղաչանս և ոչ աղաչանէն, և այլն «Լեառն վիմաժին», աղբիւր յորդառառս քարունակ ծաղկեալ, այգի վայելուչ» Խորհուրդ մեծ և համբաւելի, որ յայտն առնու յայտնեցաւ, հովիւք երգեն ընդ հրեշտակս, որոն աւերին աշխարհի: «Ձինուորութիւնը հրեշտակոց օրհնէն զընդ...» «Ձայնիւն աւերաբանէն հրեշտակոց».

«... Տէր, որ է ճէշ լեւն աղբիւրաբանէն զընդ է ճէշն»: Այս ընդհանուր օրէնքին համաձայն է գրեթէ շարականներու $\frac{1}{8}$ մասը: Պատարագի արարողութեան մէջ ալ այս կանոնը թէև շատ փոխուած ու այլալուծած, օր. Ամէն և ընդ հոգևոյդ քննմ: Նւ եւս խաղաղութեան ըզմէր աղաչեալս: Ամենայն սրբովք զոր յէշառնէցաւ և աւանդեալս ըզմէր աղաչեալս:

20. Հին տնտեսութեան ատեն, հրեաներն իւրենց օրհնութիւններն ու սաղմոսերգութիւններն այլ և այլ նուագարաններով կ'երգէին, ինչպէս Քնար, Տաւիղ, (երբ. հիւշել) Տասնադի (երբ. որդ) Ջութակ (աղբիւր), Վին (ճանաչել), Նղջերափող (հրեշ), Շեփոր (շփոթ), Սրինգ (շափել), Թմբուկ (շփ), Ծնծղայ (Ասորերէն յէշեշ, երբ. յէշեշէ): Մեր նախնեաց Գոսաներգութեան ընկերակցող նուագարաններն էին Փող եղեգեհայ, եղջերեայ ու պղինձի, Սրինգ, Ծնծղայ, Քնար, Թմբուկ, Ջնար, Տաւիղ, Փանգիւռն, Վին ու Բամբիւռն: Այս վերջինը բարձրակէկ (բամբ—սլրակ. աղաւ) ձայն մ'ունեցող աղեբախ նուագարան մըն էր: Հիմայ Նկեղեցական երաժշտութեան մէջ գործածական են միայն Ծնծղայ, Քչոց ու Ջանգակ, կամ որ հիշտն է ըսել Ծնծղայ ու Ջանգակիկ, որովհետև Քչոցն ուրիշ նուագարան մը չէ, եթէ ոչ քանի մը զանգակիկներէ բաղկացած: Խնդիր է գիտնալ թէ միւս նուագարաններն երբեմն գործածուած են մեր Նուիրական երաժշտութեան մէջ, թէ ոչ:

21. Քրիստոնէութեան նախնական դարերու մէջ աստուածային պաշտամունքի յատկացուած երգեր չկային, այլ սաղմոսներու կանոններն էին սովորական ձայնով, և յետոյ հետզհետէ նոյն սաղմոսութիւնը յարմարեցուցաւ եկեղեցական երգեցողութեամբ ու ձայնի համեմատ: Այս պաշտամունքը կոչուեցաւ սաղմոսերգութիւն: Ժամանակ անցնելէ ետք, աւելի տարածուեցաւ երաժշտական երգերու կիրառութիւնը՝ ժողովրդի ձանձրոյթը բառնալու համար, որ երեկոյեան սաղմոսներէն ու ընթերցումներէն թոյլութիւն կզգար աստուածային պաշտամունքի ատեն: Նղանակներու քաղցրութիւնը փարատեց այս թոյլութիւնը, որովհետև, ինչպէս կըսէ Լամբրոնացի, «Մեկնութիւն պատարագի», «Ազգումն երաժշտական եղանակին... ընդոստուցեալ զարթուցանէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն Շնորհին. քանզի չիք ինչ որ զկամս մեր յեղաշրջէ յուրախութիւն կամ ի սրտմտութեան՝ որպէս երգոցն ձայն... վասն

այսորիկ և Լկեղեցական աւանդութեան ընկալաւ զայն յարտաքնոցն:

22. Ե. դարէն ետք կսկսին շարականները: Ատկէ առաջ ինչպէս ըսինք, միայն սաղմոսերգութիւն կար: Շարականներն ալ հիւստեղէ ետք, երգուած սաղմոսները—ընդ ըսուեցան և ութ ձայնի յարմարեցուած իւրաքանչիւր սաղմոսի տեղ նոր շարականներ յօրինուեցան որով մեր ազգի մէջ հաստատուեցաւ ութ տեսակ շարական, ինչպէս Օրհնութիւն, Հարց, Մեծարանգէ, Ողորմեա, Տէր յերկնայ, Մանկուն, Ճաշու, Հաճարչի, զորոնք կը յարէին իւրաքանչիւր Սաղմոսի:

«Օրհնութիւն» կը կոչուի այն երգն որ յարմարեցուած է սաղմոսարանի մարգարէական Օրհնութեանց իւրաքանչիւր կանոնի և որ կերգուի զիշերային ժամին. ասոնց առաջինն է Մովսէսինը, «Օրհնեսցուք զՏէր, զի փառք է փառաւորեալ», ասոր համար Օրհնութեան շարականն սկսելու ատեն, զայն կերգենք:

«Հարցն» յարմարեցուած է Բաբելոնի երեք մանուկներու օրհնութեան. «Օրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց» և կերգուի առաւօտեան ժամուն:

«Մեծացուցէ» Սրբուհի Աստուածածնի երգին յարմարեցուածն է, «Մեծացուցէ անձն իմ զՏէր», որ առաւօտեան ժամուն կերգուի: Թէև հին ատեն կըսէին միայն կիրակի և ուրիշ կրօնական տօներուն, բայց հիմայ ամէն օր:

«Ողորմեա»ն է առաւօտեան ժամին այն երգն որ պատշաճեցուցած է Մ. Սաղմոսին «Ողորմեա ինձ, Աստուած»:

«Տէր յերկնայ»ն է առաւօտեան ժամուն այն երգն ըստ ձև Սաղմոսին «Օրհնեցէք զՏէր յերկնայ»:

«Մանկունք»ն է առաւօտեան ժամուն երգուածն ըստ ձև Սաղմոսին. «Օրհնեցէք, մանկունք, զՏէր»:

«Ճաշու»ն է երգուած շարականն ճաշի ժամէն ետք, պատարագի ատեն, աւուր պատշաճի այլ և այլ սաղմոսներու համեմատ:

«Համբարձի»ն է իրիկուն ժամուն երգուածը՝ ըստ ձև Սաղմոսի, «Համբարձի զաչս իմ ի լերինս: Ասոնց ամբողջութիւնը կը կոչուի ասորէր կամ Զանն:

Արդ, մինչ շարականները դեռ հիւստուած չէին, զիշերային ժամուն «Օրհնութեան տեղ, Օրհնեսցուք զՏէր», առաւօտուան

ժամուն «Հարցին տեղ», «Օրհնեալ ես Տէր» և այլն սաղմոսերգութիւններն էին, և իրիկունը, «Համբարձի զաչս իմ ի լերինս» սաղմոսերգութիւններն էին, որոնց վրայ քիչ մ'առաջ խօսեցանք:

23. Եկեղեցւոյ արարողութիւնը ծախու բաժնուած է.

Ա. Գիշերային ծախ. «Օրհնեալ Տէր մեր». «Տէր բազումն» ի դէմս Հօր Աստուծոյ:

Բ. Առաւօտեան. «Լցաք առաւօտուն». — «Օրհնեալ տէր Աստուած», ի դէմս Հօր Որդւոյն Աստուծոյ որ երևեցաւ իւղաբերից:

Գ. Արեւելի ժամ. «Եղիցի անուն Տեառն», ի դէմս Հօգւոյն, այլ և ի դէմս Յարութեան և երևան աշակերտացն:

Դ. Երբոր կամ Ճաշու ծախ, «Օրհնեալ հոգիդ ս. Աստուած», որ կատարի ի դէմս իջման Հոգւոյն սրբոյ և ի խորհուրդ նախամօրն ճաշական և աղատութեան, Քր. ծննդեան, ճրագալոյցի, Աւագ եշ. ու Զատիկի ճրագալոյցի ճաշու ժամերը Ժն. դարէն յառաջ գոյութիւն չունէին:

Ե. Երեկոյեան ծախ. «Ես առ Աստուած կարգացի», որ կը կատարուի ի դէմս Որդւոյն Աստուծոյ. «որ էջն ի խաչէն և պատեալ պատառակալաւ և եղաւ ի գերեզմանի»:

Զ. Խաղաղան ծախ. «Ի կարգալ իմումս, որ կը կատարուի ի դէմս Հոգւոյն Աստուծոյ. նաև ի դէմս Բանին Աստուծոյ, որ եղաւ ի գերեզմանի և էջ ի դժոխս և խաղաղութիւն արար հոգւոցն»:

Է. Հաճարչի ծախ. «Առաքեա, Տէր, զլոյս», «Եկեսցէ», որ կը կատարուի ի դէմս Հօր Աստուծոյ, «զի պահպանողական աջով Միածնին պահեսցէ զմեզ ի խաւարային զիշերի»: Ըստ յիշատակարանաց ԺԲ. և ԺԳ. դարերու, չկային օրհնութեան քաղուածներ նախնեաց օրով, այլ միայն տէրունական տօներուն, և Հեռակ շարականները կերգէին օրհնութեանց ետք: Նախ Ժն. դարու սկիզբը կը գտնենք քաղուածք յիշատակուած, բայց Պահք օրեր օրհնութիւն չկար մինչև ԺԸ. կամ ԺԷ. դար:

«Հանգստեան ժամը» հնարեցաւ ԺԳ. դարուն, և կը պաշտուէր «ի վանականաց և երբ առանձինն ի սենեակս իւրեանց» և մուծաւ յեկեղեցի ի ԺԷ դարն, իսկ «Հաւատով խոստովանիմ» և «Որդի Աստուծոյ», յաւելան ի նա ԺԷ. դարուն: (համտ. «Ժամակարգ», «Ներած.» ԻԷ.):

Հսկում կըլլան մեծ տօներու գիշերը սաղմոսով և ընթերցմամբ, և կը դնեն սրբութիւնները բազմոցին վրայ ատենանը՝ Մաղկազարդին, Մեծ ուրբաթին, Զատիկին, Նոր կիւրակէին, Պենտէկոստէի, Վարդավառին, Փոխման, Խաչվերացին ու Աստուածայայտութեան:

24. Նախնի դարերու մէջ, Բշ. օրն ի պատիւ արարչագործութեան որոշուած էր և ի պատիւ հրեշտակներու. Գշ. օրն՝ ի պատիւ մարգարէներու. Դշ. օրն՝ ի պատիւ ս. Աստուածածնի. Եշ. օրն՝ ի պատիւ առաքեալներուն. Ուր. ի յիշատակ չարարանքի, և Շաբաթ՝ ի պատիւ մարտիրոսներու:

25. Եկեղեցական վերին աստիճանի շահեկան խնդիր մըն է գիտնալ թէ մեր եկեղեցին երգերուն երբ կը կցէ «Եփեսոս» Պահոց Առ. Գ. հարց «Երգէին մանկունք» գործատուներն «Եփեսոս» ունին, նոյնպէս, բացի Յարութեան օրերէն ու Մոռնդէն, ալիւուեա կերգուի Մաղկազարդի, Աւագ շաբթու երգերուն մէջ, և նաև քառասորգական կիրակիներն ու ննջիալներու յիշատակին. նոյնը յոյն, սոսորի և ուրիշ արեւելեան եկեղեցիներու մէջ: Լատինական եկեղեցւոյ մէջ շատ դարերէ ի վեր ննջեալներուն յիշատակին ալիւուեա չերգուիր և նաև «Առաջաւորաց բարիկէնդանէն» մինչև Աւագ շաբաթ օրը. և այս օրը, Յարութեան պատարագը մատուցուելէ ետքը, կսկսեն երգել ալիւուեան:

Կ. Պոլսոյ Միքայել Կերուալարիոս պատրիարքն որ բիւզանդական պատրիարքութեան գերիշխանութեան ու անկախութեան աշխատողներէն մէկն եղաւ և որ արեւմտեան եկեղեցւոյն դէմ այնչափ պայքարեցաւ, Հռոմի եկեղեցին կստգտանէ այս մասին: Լատին եկեղեցին կառարկէ թէ եբրայեցիներն ալիւուեա կերգէին ցնծութեան ատեն, հետեալէս հարկ չկայ ննջեցեալներուն և ուրիշ առթիւ երգել:

Նոյնը մտածեցին նաև հայերը Պիլիկեցւոց ատեն, ինչպէս որ Վարդան վարդ. Սաղմոսի ձԺԸ մեկնութեան առթիւ, կըսէ «ի յիշատակ ննջեցելու ալիւու չվայելէ ասել: Սոյն պարագաներու մէջ ալիւուեա երգելու կամ չերգելու համար բաւական վիճաբանութիւններ կատարուած են:

Ալիւուեան երեք անգամ կը կրկնուի, կամ իրարու ետեւ, և կամ ընդհատմամբ խօսքերու «Որ վեր օրհնիս» ի Գ. տունին մէջ վերջինին պէս է. ինչպէս «Ուսաննա ի բարձունս»

ալիւուեա», «Բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն, ալիւուեա» և «Օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ տեառն, ալիւուեա»: Աս ալ երբեակ մտածումով: Նախ՝ «Ուսաննա ի բարձունս» երկրորդ՝ Փրկչին մարմնով գալն երգելու, և երրորդ՝ դատելու համար փառքով գալուստը երգաբանելու համար:

26. Հարցերը երեք տուններէ կազմուած են և բոլոր տուններ միևնոյն եղանակով կերգուին:

Երեք երեք տներէ բաղկացած ըլլալը երրորդութեան նըշանակ է, իսկ միևնոյն եղանակով երգելը՝ երեք Անձն, մի Աստուածութիւն ըլլալուն:

27. Աւանդութեամբ, Կիրակոս պատմիչի մէկ աղօտ վկայութեամբ, Շարականներու առաջին հեղինակներն են ս. Սահակ, ս. Մեսրոպ, Մ. Խորենացի ու Յովհ. Մանգակունի, թէև ստոյգ ապացոյցներ կը պակսին, ինչպէս քանի մը անգամ ըսուեցաւ:

28. Շատ հետաքրքրական ու բաղձալի էր Շարականներու և Գանձերու մէջէն բուն հին և առաջին ըսուածներուն հեղինակը ճանչնալ. սակայն ատոնց վրայօք ձեռունընիս եղած քանի մը անվաւեր ու յարմարցուած աւանդութիւններ արժէք չունին: Բանասիրօրէն, այսինքն ոճի և արտայայտուած գաղափարին ու զգացման տեսակէտով կարելի է որոշել Շարականներու հեղինակները ու դարերը: Միայն սաչափը յայտնի է, որ հին շարականները նմանութիւն են սաղմոսներու և յարմարցուած մեր կեանքին: Ասոնք սովորաբար երեք տունէ կը բաղկանան: Առաջին տունը սաղմոսէն առնուած է, միւս տուններն ալ կը պարունակեն քրիստոնէութեան հիմնական գաղափարները: Ոճի կողմէ շատ պարզ են, կարտայայտեն պարզ զգացումներ, կարճ նախադասութիւններով: Հին արեւելեան բանաստեղծները երկար պարբերութիւններով խօսելու սովորութիւնը չունին, այլ հասարակօրէն կարճ վճռական նախադասութիւններ կը գործածեն: Բայց որպէսզի այս նախադասութիւնները միօրինակութեամբ մտադրութիւնը չյոգնեցնեն, դանոնք յօրինաւոր (systématique) համեմատութեամբ մը իրարու հետ կը հիւսէին: Այսպէս այլ և այլ նախադասութիւններ բոլոր խօսքին նկատմամբ մէյմէկ անգամ կըլլան: Սոյն շարականներու մէջ երկու զգացում կայ, նախ փառաբանութեան, երկրորդ ու ակնածանք, յետոյ խնդրուածք ու ակնկալութիւն:

29. Շարականներու երգեցողութեան եղանակն հիմա-
կուրնէ կը տարբերէր: Ժամակարգութեան հին հրահանգնե-
րու մէջ գրուած է որ շարականը, սաղմոսն աւարտելէ
ետք չէր սկսուէր, այլ սաղմոսին քանի մը տունը ըսուելով կը
յարէին շարականին առաջին տունը՝ երկու կամ երեք անգամ
կրկնելով, և դարձեալ քանի մը տուն ըսելով սաղմոսէն՝ կը
յարէին երկրորդ տունը՝ նոյնպէս կրկնելով, և երբ սաղմոսը
աւարտէր, կերգէին շարականի վերջին տունը:

Այս սովորութեան հետքը կը տեսնուի հիմայ պահոց Բ.
ողորմեայի (Բ.Կ.) մէջ, «Ողորմեա ինձ, Աստուած իմ, ողորմեա,
դի անպատասխանի եմ և այլն, ուր առաջին տունին սկիզբը
կը դրուի լէւո՛ւ ի՛նձ, որ է սաղմոսին վերջին տունը, այսինքն
քաւեան զանօրէնութիւնս իմ: Երկրորդ տունին սկիզբը կը գը-
րուի «տառապեալք» որ է իններորդ տունին վերջինը, այս-
ինքն «լսելի արա ինձ... և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք»:
Իսկ երրորդ տունին մէջ կը գրուի լէւո՛ւ ի՛նձ, որ է ժ.Ն. տունին
վերջինը. «Փրկեա դիս յարհնէ... ցնծասցէ լեզու իմ յարգարու-
թեան քո»: Սոյն սովորութիւնը կը ցուցնեն դարձեալ զանազան
հարցերու շատ գործատուներ, ուր գործատուին առաջին
տունին սկիզբը կը գնենք «Օրհնեցէք, ամենայն գործք տեսուն:
զՏէր, և այլն. նոյնպէս ուրիշ գործատուներու մէջ կան «Գի-
շերք, զՏէր օրհնեցէք», «Աղբերք, զՏէր օրհնեցէք», «Իսրայէլ
զՏէր օրհնեցէք», որ երկոց մանկանց օրհնութեան այլ և այլ
տուններն են:

Այս սովորութիւնը մնացած է նաև Մաղկադարդի երե-
կոյեան ժամերգութեան ատեն, ուր «Խոնարհեցո», «Ապրեցո»
սաղմոսներուն կը յարենք նոյն օրուան ողորմեան «Աւրախ լեր»
ու Տէր յերկնից «Գրիստոս թագաւոր», քանի մը տուն սաղ-
մոսէ ետք, երեք անգամ շարականին մէկ տունը կրկնելով ըստ
Տօնացոյցին:

Ձայներու աստիճանն ալ տարբերութիւն ունէր: Գրուած
է որ «Մեծացուցէն» և «Ողորմեան» ցած պիտի երգուին ու
«Տէր յերկնիցը» բարձրաձայն, իսկ «Օրհնութեան» և ուրիշ շա-
րականներու մասին բան մը ըսուած չէ:

30. Հնազանդ ձևադիր շարականներու մէջ շարականնե-
րու խորագիրն ալ ուշադրութեան արժանի է, ինչպէս «Խոնարհեցո՛ւ
օրհնութիւն», «Երգէ՛ր երգ և շարա՛ն»:

«Կանոն»՝ էջմիածին գտնուած 1588 — ժ.Ն. շարականի մէջ
իրբն անգրանիկ խորագիր գրուած է առաջին անգամ ս. Սա-
հակի և ս. Մեսրոպի վերագրուած շարականներու ձևատը:
(Հմմտ. «Արարատ» 1894, էջ 178—179):

Նոյն շարականին մէջ «Կանոն» և «Կարգ» համագոր խո-
րագրերը կը գործածուին միայն այն ատեն, երբ ամբողջովին
կամ պակաս են իրենց հետևող օրուան տօնի պատշաճ շարա-
կանները: «Հարց» և «Օրհնութիւն» իրբն անգրանիկ խորագիր
առաջին անգամ գրուած են Բ. դարուն ապրող Սիւսեաց Ստե-
փանոս եպիսկոպոսի Յարութեան ութ ձայն կրճատ ձևով գը-
րուած օրհնութիւններու վրայ: Կարգ իրբն խորագիր առաջին
անգամ գրուած է ժ.Ս. դարուն ապրող Պետրոս «Գեառադարձ»
կաթողիկոսի գրած Մարտիրոսաց ութ ձայն կրճատ ձևով շա-
րականներու վրայ: «Նրգ» իրբն անգրանիկ խորագիր գրուած
է մի միայն Ներսէս Շնորհալի հայրապետին բաց ձևով գրուած
բոլոր երգերու վրայ, ինչպէս «Այսօր անճառ»:

«Շարական» իրբն անգրանիկ խորագիր առաջին ան-
գամ շարականի մէջ կերգուի Յինանց՝ կրճատ ձևով իրարու ե-
տե գրուած 6 հատ «Գովեաներու» վրայ:

31. Շարականներու ութ ձայնի բաժանումը ծագած է
Կանոն — սաղմոսներէն: Ութ ձայն ու իրենց երկու դարձուածքի
եղանակներն ունին նոյնպէս իրենց անուանակոչութիւնը. ինչ-
պէս կը տեսնուի Յայսմաւորքի մէջ: «Չորս ձայնք ի չորս ի
տարերց ունին զգայունքն որպէս Ա. ձայնն ի հողոյն, Բ.ն ի
ջրոյն. Գ.ն ի յօգոյն, Դ.ն ի հրոյն, Ե.ն յերկաթոյ, Զ.ն ի ծո-
վու ծփանաց, Է.ն յանասնոց, Ը. ի գաղանաց, Թ. և Ժ. ի հա-
ւոց»։ «Շնորհ. և իւր պարագայ», էջ 88, Վենետիկ:

«Նրանելոյն Բարսեղի» գրուածքին մէջ զոր թարգմա-
նած է Ստեփաննոս փիլիսոփայ, ձայները բաժնուած են 24.
բառաչել, բջել, կանչել, գոչել, բնչել, մնչել, բըջել, կառնջել,
մըռմուել, ճչել, կանչել, գոհգոհել, վչել, խանչել, հառչել, հա-
ռաչել, կաղինձել, հաչել, կարկաչել, սողալ և այլն:

Շարականները 20 մայր-եղանակ ունին, ասոնցմէ կեղա-
նակաւորուին ուրիշ 20 եղանակ ալ: Նթէ մանր մունը կղա-
նակաւորումներն ալ նկատի առնենք՝ ընդհանուր գումարն
կըլլայ 140 կամ 120:

Ըստ «Մանր ուսմունքի» ութ ձայնի եղանակաւորումներ

բըն և կամ մանրուսումներն են,

ԱԶ=Առաջին խումբ:

1. Գլած, 2. Կիրակամտի, 3. Մասրենակ, 4. Անմեղուկ, 5. Խօսող, 6. Զագ, 7. Մամկոն, 8. Զագն, 9. Հիւանդ, 10. Գուսան, 11. Հոռոմ, 12. Զուլահակ, 13. Փորակն, 14. Հոռմակ, 15. Մովսէս, 16. Աշակերտ, 17. Բրաւոր, 18. Երկաթ, 19. Պիծակ, 20. Խոռ, 21. Ծիծեռն Հաթերբեցի, 22. Աւել, 23. Թալբուկ:

ԱԿ=Առաջին խումբ:

1. Գուռուգ, 2. Կինայ, 3. Եկեղ, 4. Քնքչակ, 5. Գոճնակ, 6. Առաւելիկ, 7. Ծովցի, 8. Զահրիկ, 9. Մեռելբաշ, 10. Զոջատող, 11. Տարօնեցի, 12. Վաչգարձէք:

ԲԶ=Երրորդ խումբ:

1. Կատուն, 2. Զորեքաշ, 3. Արծիւ, 4. Զագն, 5. Հովիւ, 6. Լալիան, 7. Անձեղն, 8. Զիտ, 9. Բագէ, 10. Շահեն, 11. Զաղացք, 12. Աւելի:

ԲԿ=Առաջին խումբ:

1. Շնորհազարդ, 2. Հարնձի, 3. Մեղու, 4. Ս. Նշանեցի, 5. Կարմիր վանեցի, 6. Ուղան, 7. Կողեռն, 8. Հաս, 9. Միծ գլուխ, 10. Խաբուսիկ, 11. Զորուկ:

ԳԶ=Երրորդ խումբ:

1. Զաւտող, 2. Գայլ, 3. Զակ, 4. Տաւալտուղ, 5. Սայլ, 6. Առէջ, 7. Արջ, 8. Մշեցի, 9. Շաւառն, 10. Զագ, Տիրոցի, 11. Սրինգ, 12. Առոյծ, 13. Զար:

ԳԿ=Վառ:

1. Տարած, 2. Խեղեփ, 4. Մագնէ, 4. Առաւօտ-երդ, 5. Յանիկ, 6. Հաւտուր, 7. Յեաքաշ, 8. Գայնիկ, 9. Գաբրիէլ, 10. Միքայէլ, 11. Յեմակ, 12. Յեղմն, 13. Եղնակ, 14. Պարնկուր, 15. Վարուժնակ, 16. Անձէթ, 17. Աւելորդ, 18. Մառիչն, 19. Զոր, 20. Տանուտրակ:

ԴԶ=Երրորդ խումբ:

1. Ռամ վառ, 2. Փող, 3. Դարբին, 4. Աշակերտ, 5. Տուկատ, 6. Այսօր մտնէ, 7. Ովէսայն, 8. Աւելի, 9. Գէտ, 10. Կակժոտ, 11. Հաւ, 12. Բթեշ, 13. Ծնծղայ, 14. Զոխ գետ, 15. Բերդ, 16. Ոչխար, 17. Յովանեցաք, 18. Զոր:

ԴԿ=Վառ:

1. Աղաջանք, 2. Կաղ, 3. Կիրակոնք, 4. Սարկաւագ, 5.

ձեջողն, 6. Զագն, 7. Փող, 8. Թագաւոր, 9. Գալստեան, 10. Խաչի, 11. Աւելի, 12. Կցխակ, 13. Քրեղ, 14. Վարսեղն:

32. Մեր ութ ձայնի համապատասխան են, պարսկական, արաբական ու թրքական սա ութ եղանակները:

ԱԶ=Հեֆտիլեհան:

ԱԿ=Սեկեհան:

ԲԶ=Հիւսէյինի:

ԲԿ=Աճէմ:

ԳԶ=Հիճաղ:

ԳԿ=Սապահի:

ԴԶ=Նէվիս=Իսվահան:

ԴԿ=Իւշլագ:

33. Կաւանդուի թէ ս. Սահակ ու ս. Մեսրոպ յօրինեցին հայկական երաժշտական խաղերն ու եղանակները: Սակայն խաղերն ալ, եղանակներն ալ ծագումով հայացի չեն, այլ հայացած են: Երաժշտական խաղերը սեմականին եղանակաւորումները, հայացածներն են: Խաղերը ձայնանիշներ չեն, այլ ամանակներ: Եղանակներն ալ ոմանք Յունարէնէ և ոմանք ալ արևելեան մանաւանդ ասորի եկեղեցիէն փոխ առնուած են: Ասորական եկեղեցւոյ երգերու առաջին հեղինակն է Գնոստիկեան աղանդաւոր Բարդեժանի (174—152) որդի Հարմոն: Բայց Ս. Եփրեմ (Գ. դար) այդ երգերուն տեղ ուղղափառ երգեր յօրինեց և տուաւ ժողովրդին, իսկ յունական եկեղեցւոյ երգերու առաջին հեղինակներն են Գրիգոր Նազիանցի (մեռած 390) և Մեծն Բարսեղ Կեսարացի (329—379), հռոմայական եկեղեցւոյն ալ Ս. Ամբրոսիոս (340—397): Մեծն Գրիգոր Պապը (մեռած 604): H. Petermann, ZDMG թերթին մէջ, 1851, էջ 365—72, նաև «Բագմավէպ», 1876, էջ. 399—406, մանաւանդ և «Արարատ», 1894, էջ. 176—186, 218—222. և այլն. Սահակ վրդ. Ամատունի ու Սողոմոն Ա. Ս. Սողոմոնեանի «հայոց եկեղեցական եղանակներ» մակագրուած ուսումնասիրութիւնը կը ցուցնեն թէ Ս. Սահակէն յառաջ չորս ձայներ, այսինքն ԱԶ. ԲԶ. ԳԶ. ԴԶ. գտնուած են յոյն երաժիշտներու ձեռքով որոնց անունները կը յիշուին Երանդուի Բարդէ յաղագի խումբի գրաւածիս Դջ: Ինչպէս խաղերուն և եղանակներուն հեղինակը Ս. Սահակ չէ, (տես 27) նոյնպէս չարականներու առաջին հեղինակներն ալ չեն կրնար Ս. Սահակ և Ս. Մեսրոպ ըլլալ, որովհետև Ս. Սա-

հակառակ Գործադիր Կոմիտեի կողմից (տես «Սովետական հայկական» հատոր Բ, էջ 8) պաշտոն սաղմոսերգութեան միայն կը յիշէ: Նշելով (ը. եղանակ) սաղմոսը էին մշտնջենաւորը՝ միմուռը ի բերան նոցա: Ն. դարու առաջին կիսուն այդ սաղմոսներէն ոմանք, ինչպէս են Երկուրեաները, շնորհիւս. Սահակի ուս. Մեսրոպի սկսան չորս ձայնով երգուիլ, մինչ անկէ առաջ պարզ արտասանութեամբ էին այս սաղմոսները:

Ութ եղանակ կայ սովորաբար, ինչպէս ըսինք, բայց Յայսմաւորքի մէջ տեղ մը կը յիշուի 10 եղանակ: Անշուշտ երկու աւելորդ եղանակը դարձուածքի համար ըսուած է: Դիտած ենք որ արեւելեան եկեղեցիներէն յունականին մէջ. անօրինական օրերուն ինչ եղանակ սաղմոսերգութիւն կերպուի, նոյն եղանակով է նաև մեր շարականը: Հրէից պատէքին, սինակոններու մէջ երգուածներն աւագ կողմ—ԲԿ են, ծաղկազարդի համբարձին ալ, «Այսօր ընդ հրակերպեան» ԲԿ է: Նրկար պիտի ըլլար մի առ մի թուել այսպիսիները:

Շարական ուսուցանողը կը կոչուէր «փրիստփայ» և արուեստի գրքերը կը կոչուին ծանօտութիւն: Կիրիկեցւոց ասան մանր ուսման կեդրոն էին Արքայականը, Գրադարի, Սկիւռոյ, Կարմիր վանք և այլն:

34. Ոմանք կը կարծեն թէ շարականները կամ գանձերն չէ եղանակով կ'երգուին: Սակայն և ոչ, շարականները յատուկ եղանակ ունին: Մեր երանաշնորհ նախնիք շարական մը յօրինելէն առաջ կը խորհէին թէ որ եղանակին համեմատ պիտի գրէին, այնպէս որ ԲԶ. շարական մը ԳԶ չի կրնար երգուիլ: Ասով սա կը հասկցուի որ եղանակներն ալ ունէին իրենց յատուկ տաղաչափութիւնը. նախնեաց արուեստին հմուտ անձ մը կրնայ երաժշտապետներէ աւելի, եթէ եղանակները նշանակուած իսկ չըլլան, որոշիլ թէ շարականն որ եղանակով պիտի երգուի:

35. Մեր եկեղեցական մատենագրութեան մէջ ամենէն գերազանցն են շարականները, իբրև պատկ Սատուածային պաշտօներգութեան: Այս գերազանցութեան պատճառներն են 1. Նրաժշտական արհեստին չափաւորութիւնն որով ամէն եղանակներու զանազանութիւնը կը պատկերացընէ ութ գլխաւոր ձայնի համեմատ իրենց եղանակաւորութեանը, 2. Եւրոպի ու ասորական լեզուներն որ իբրև հոգի միացած ձայներու եղանակին հետ՝ կենսանորոգ կը գտարթացնեն երգեցողը Սատուած փառաբանելու համար: Ս. Գրքի խորհրդաւոր իմաստներն օրհներգուած՝ տօնին կամ

օրուան զեղեցկապէս պատշաճեցուցած են, մանաւանդ որ շատերը Ս. Գրքէն առնուած խօսքեր են՝ օրհներգուած ու եղանակուած, որով յիշուի շարականներն արժանի է համարել Ս. Գրքի համառօտութիւնն իմաստի ու խօսքի համեմատ. 3. Հասկայն վարդապետական ասացուածքներն որ խտացած են շարականներու մէջ, ինչպէս հայ Նիւէրոս վարդապետութիւնը ու երորդութեան, Աստուծոյ բանին մարդեղութեան, շնորհաց ու հատուցման, ու եկեղեցւոյ և իր խորհուրդներուն նկատմամբ, մէկ խօսքով հին և նոր աղանդաւորներու դէմ արդարութեան զենքերը, ինչպէս որ իրենց կարգին պիտի տեսնենք: Հայ եկեղեց. մատենագրութեան մէջ բացարձակապէս չկայ գիրք մը որ շարականին չափ խտացընէ հայ. ու եկեղեցւոյ վարդապետութիւնը, ինչպէս, 1. որդւոյն յաւիտեանական ծնունդն ի հօրէ կամ Բնիկան, հմմտ. Շնորհ. Բղիստման ի հօրէ, Բղիստման ի հոգւոյն: Բղիստման ու ծնունդ համադրու: 2. Խորհուրդ Տարեգրութեան Ասորական բանին մասին՝ մի անձն աստուածային ի Բրիստոս՝ ընդդէմ Նեստորի և Երեմի Բնիկան՝ աստուածային և մարդկային՝ ընդ դէմ Նեստորեայ, այս է միևնոյն Բրիստոս՝ կատարեալ Աստուած և կատարեալ մարդ: Ինչպէս «մանուկ՝ անժամանակ ի հօրէ, և ժամանակաւ գոյացեալ ծնեալ լինի Ասորական և Տարե, Բ. օր ծննդեան շար. օրհն. ԴԿ. — այս առաջ բան զյաւիտեանս որդի նախապաւիտեան, այսօր յերկրի երևեալ Ասորական և Տարե չարաբան: Ն. օր ծննդեան, ողորմ. ԴԿ. — «Իսկապէս բանն Աստուած Բայոս ի Տարեի անվտիտիս գոյով յեղութեան»: Որդւոյ որոտման, օրհ. ԴԿ. — «Կենդանութիւն Բաշխող Բրիստոս... անօրինաբար արտասուելով... որպէս Տարե հարցանէր, մեր եղիք զՎազարոս. — և որպէս զԱսորական բարբառով յարուցանէր ի մեռելոց զշորեքօրեայն» Ղազ. յար. հեռուալ շար. ԱԶ. «այսօր գոյով, — անսկզբնակից հօր որդի, որ այսօր նախաստեղծին բնութեամբ ի կուսէն ծնար, Ասորական և Տարե. Դ. ծնդ. ողորմեա. — «զի կատարեալ էառ զբնութիւն Աստուածն բան զմարդկութեան» Այսօր անձառի զօղեալ տունին մէջ, — «Հուր կենդանի որ ի մորենին վառեցաւ, զոր անվնաս յարգանդի քում կրեցեր և ծնար Ասորական և Տարե, ողորմեա. — անեղանելիք Աստուած, բանդ անմեկնելի ի հօրէ՝ ընդ ժամանակաւ լինի հաճեցար և մարմնացար ի սուրբ կուսէն՝ Ասորական և Տարե յայտնեալ», Ծնդ. Բ. օր. ճաշու — «անսկզբն բանն յանսկզբնական ի հօրէ և սկզբնաւորեալ ի կուսէն մարմնոյ զգեցմամբ,

բովանդակելով յորովայնի և ընդ հօր գոլով, և սահմանեալ ժամանակաւ ծնեալ լինի Աստուած և Տարբ. Տեսաւ ընդառաջ ճաշու Գ. Կ. մտեալ ընդ օրինօք աննիւթական հողանիւթ գոլով, զի զհողածնեալքս հօրն ընծայեացէ, Աստուածորդին որ ի ծոց հօր, տղայ քառասնօրեայ բառն ի գիրկս ծերունւոյն և յայտնապէս ծանուցանի Աստուած և Տարբ. նոյն:—Որ առաւել քան զմարգարէս մեծ ի ծնունդս կանանց որ Զքեղ մեղ յայտնեաց Աստուած և Տարբ. յերկրի երևեալ, Գլխտ. Կարապետի ողորմեա ԱԶ.—բանն անսկիզբն ի կուսէն սկզբնաւորեալ ի յերկիր մարմնով երևեցաւ, զոր տեսին քարոզք բանին ճշմարտութեան և ծանուցին տիեզերաց Աստուած և Տարբ. որդւոց ողորման, օրհ. Գ. Կ. ծանուցար տիեզերաց Աստուած և Տարբ. գոլով, մարմնացար ի սուրբ կուսէն ի փրկութիւն ազգի մարդկան, աւագ օրհն. Ա. Կ. ծածկեալ խորհրդոյն յաւիտենից լուեցելոյ և անճառին, ի հասանել ժամանակին պարգեւեալ մարդկան ազգին, էական Բնութեան Բանին խառնեալ անշիւղ իմէր Բնութեան, Բ. օր փոխման, «Արևելք գերարփին»:

36. Աւելցնենք նաև հայ. եկեղեցւոյ «Աստուած կատարեալ և մարդ կատարեալ» վարդապետութիւնը: Ներքարեան փառատրութիւն «որ խաչեցար»: Ս. Աստուածը կերգենք ի դէմս որդւոյն Աստուծոյ որ նաև կը խոստովանի զբանն Աստուած՝ Աստուած ուրբ, Աստուած հղբ, Աստուած անճառ՝ ըստ աստուածա-յայտնութեանն, և աւելցնելով որ խաչեցար՝ յայտնի կը քարոզէ զայն բան Աստուած ըստ մարդկային բնութեան խաչեալ, ըստ հոգերգող խօսքերուն Շնորհալոյ «Սոսկալիդ Սերովբէից»-ն ահաւորել փերովբէից, խոնարհեցար ի չարչարանս չարչարելի Բնութեան Տարբ. դարձեալ՝ «Մերով Բնութեան Դասին, Աստուած անճառ խոստովանի»: Իսկ Ժ. Գ. դարուն մտած է «որ խաչեցար» մէջ երգել ըստ պատշաճի օրուան հանդիսի, ինչպէս «Որ ծնար և յայտնեցար».— «որ եկիր և գալոցդ ես»,— «որ մատնեցար», «որ թաղեցար», «որ յարեար ի մեռելոց», «որ համբարձար», «որ յայտնեցար ի թափոր», «որ եկիր ի փոխումն», Պենտեկոստէին՝ «որ եկիր և հանգեար»:—Ուստի հայ. եկեղեցին երգելով ս. Աստուածն ի դէմս որդւոյն Աստուծոյ, կը դատապարտէ միանգամայն Նետիքէս և Նեստոր և Աստուածաչարչար աղանդաւորները. ինչպէս որ Տարսօնի, Եսոյ և Ատանայի ժողովներուն մէջ ալ պարզուեցաւ, նաև Ն. Շնորհալի հայրին Մանուէլ Կոմնենոս կայսեր փեսայ Ալեքս Պրոսպ.

րատորի գրած թղթին մէջ ալ, տպագր. Ս. Պետր. 1788, էջ 93. (հմտ. «Ժամակարգութեան». Ներած. էջ ԺԲ—ԺԳ):

Արևելեան ու արևմտեան եկեղեցւոյ ս. հայրերը կը գործածեն խառնել, խառնում, խառնարան, աստուածախառն Տարբ. բանին մարմնոյ հետ միաւորութեան վրայ ճառելու ատեն, և այն՝ աշխարհաշէլի, ինչպէս, անշխարհաշէլի, ճշմարիտը ցուցնելու համար Նեստորի դէմ, որովհետև խառնել՝ ոչ թէ խառնակել կամ շփոթել, այլ զօդել, «միաւորել» կը նշանակէ, «Որ ընդ հողէն Բնութեան Դասին խառնեցեր զԲնութեան հոգին» Ե. օր Պենտեկոստէի, հարց ԳԶ.

Թէոդոս թագաւորի շարականը կըսէ անոր վրայօք. «Հիմա յայնչ զէլեղցի, հիմա յայնչ ս. հաւարոյ» որ ոչ թէ կը նշանակէ աշխարհական թագաւորն կը հիմնէ եկեղեցի կամ հաւատքն ուղղակի և անմիջապէս, այլ խօսքին իմաստ է թէ «բարեպաշտ թագաւորք յայսմ ամենայնի՝ յոր ինչ կարող էր աշխարհական իշխանութիւնն, ջանային այնու ձեռնտու լինել սրբոց հարց՝ ի վանել զմոլորութիւն հերձուածողաց և հաստատել զեկեղեցի կամ զհաւատս»:

37. Սրբոյ Բարեբօրութեան. «Որ անպարագրելի աստուածութիւնդ տեսուչ և բարեխօս իւր ուխտաւորաց», Ստեփ. Նախավ. հարց ԳԶ.—«Որք ի մահու իւրեանց կենդանացան, եւ ինչ ի կամարն երկնից. խառնեցան ի գունդ զուարթնոցն, սոցա բարեխօսութեամբ ողորմեա».—«Այսօր հրաւիրեցաւ յերկնից արքայութիւնն ս. Հռիփսիմէ—որ գտիկնութեանդ քո թողեր զփառս... բարեխօսեալ». ս. Սանդուխտի մանկունք Գ. Կ.—«ձայն բարբառոյ յանապատի, ազօթիւք սորա լուր մեզ: Յովհ. զլխտմ. ողորմեա ԱԶ.—«Որ քոյին առաքինասէր... Տէր ս. Գրիգոր, անդադար բարեխօսեալ»: Նին ի վիրապէն Որհ. Գ. Կ. Ննջեցելոյ շարականին մէջ ալ խառնելու վերջին ընդհ. դատարանը. վերահաս դատաստանը հաւատացեալներուն առջև դնելով՝ կը յորդորեն զանոնք Քրիստոսի աջ կողմը դասուելու արժանանալ:

38. Այս եռակի տեսակէտով, այսինքն շարականներու երաժշտական արուեստին կազմութեամբը, իմաստու ասացուածքի վսեմութեամբ և հայ. եկեղեցւոյ վարդապետութեան գանձարանն ըլլալով հայ. եկեղեցւոյ շարականները մեծ յարգ և համբաւ ունին և ոմանք եւրոպական լեզուներու թարգմանուած են, ինչպէս 1. Ֆ. Նելպելիկացի հայագէտին Les-

hymnes funèbres de église arménienne, L'ouvain, 1855
և L'Hymnologie arménienne. 2. Մկրտիչ Էմին ռուսերէնի
Թարգմանած է Վարդապետի, Ութօրէից, Հոգեգալստեան, Յով.
Մկրտչի, Պետրոսի և Պողոսի, սրբոց Վարդանանց, ս. Հռիփսի-
մեանց, (Մոսկուա, 1879) և 3. Վենետիկցիներն ալ լատինե-
րէնի Թարգմանած են (1877) Աստուածածնի շարականները,
Laudes et Hymni at sS. Mariae Virginis honorum. Պիոս Թ. Ի
քահանայութեան յիսնամեային առթիւ, Էօփէն Պորէ հայագէտն
ալ, 1840 ին, իր ծանօթ գործին մէջ ս. Լուսաւորչի շարակա-
ն, և խալալցի Լուիճի Քարէր՝ ս. Հռիփսիմեանցը:

Ո՛չ միայն արդի ժամանակներու մէջ մեր շարականները
հայ. եկեղեցւոյ վարդապետութեան տեսակէտով մեծ յարգ և
համբաւ ունին, այլ և հին ատենն ալ, ինչպէս որ Կիւ Մա-
նուէլ կայսեր տսեն յունաց վարդապետներուն քովն ալ: Կիւ
Մանուէլ կայսրը կը գրէ ն. Շնորհաւոյն. «Ծանիր զայս, զի
զգայթակղութիւնս որ կայր ի սիրաս մեր յերէ՛ ձեր և ի պաշ-
տամունս որ առ Աստուած՝ բժշկեցաք քննութեամբ, վասն զի
ի մէջ ածաք և ծանեաք երեւելապէս ի նոցանէ»: Սոյն խօսքը
կը յիշեցնէ Գրիգոր կաթողիկոս հաղբատացի վարդապետե-
րուն գրած թղթին մէջ. «Վկայեցին եթէ ծանեաք յերգս ձեր և
յօրհնութիւնս որ է շարականդ որ առ Աստուած զճշմարիտ
հաւատոյ ձերոյ ուղղափառ դաւանութիւն»:

39. Գրիգոր Տաթևացի ու Ստեփաննոս երէց ունին յի-
շատակարան մը «Վասն շարականաց թէ յումէ ասացան»:
Բայց հեղինակներու անունները չփոթուած են: Զ. օր. Մ.
Խորենացւոյ անունով կը յիշուին այնքան շարականներ, որքան
չէ գրած. մինչև անգամ մէկ շարակտնը կը յատկացնեն քանի
մը հեղինակներու: Ասոնց հեղինակը բանասիրօրէն կարելի է
գտնել: Կիրակոս պատմիչ Խաչի շարականները կը վերագրէ Ն.
գարուն: Սակայն խաչի տօները է. գարուն հաստատուած են
ու շարականներն ալ Սահակ Զորափորեցի հայրապետը գրած
է: Անկէ առաջ Խաչի տօն հաստատուած չէր որ ասոր շարա-
կանն ալ ըլլար:

Ապաշխարութեան, մեծ պահի շարականները ս. Մես-
րօպի անունով մնացած են, որ բանասիրական ինչ ինչ ցու-
ցումներով հաւանական չերևար: Ս. Սահակ գրած է կըսեն,
Ծաղկազարդի «Որ վերօրհնիս», Ղազարու յարութեան և Աւագ

շաբաթի շարականները, Ծննդեան առաջին օրուան օրհնու-
թիւնը «Խորհուրդ մեծ» հարցն, իսկ Մեծաշաբաթները կը վե-
րագրեն Ն. գարու Խորենացւոյն: Սակայն և այնպէս Մեծա-
շաբաթն է. գարու չի պատկանիր, այլ Ը. գարուն, որովհետեւ
Ը. գարէն առաջ ս. Աստուածածնի տօներէն և ոչ մէկը հաս-
տատուած էր, ինչպէս պիտի տեսնենք իրենց շարականներու
կարգին մէջ:

Քիչ բացառութեամբ շարական մը գրած են, երբոր ունէ
տօն մը կատարուած է: Անտօն Անպատաւանի, Աւաքեւոց,
Մարգարէից շարականներն ալ կը վերագրեն Մ. Խորենացւոյ,
բայց ոճի տարբերութենէն կը տեսնուի որ աւելի վերջին գա-
րերու գործ են, մանաւանդ որ այս տօները վերջերը հաստա-
տուած են:

40. Ն. գարու մեր եկեղեցւոյ մէջ փայլող լուսափառ
փարոսներէն ու հաստահողոյս սիւներէն մէկն էր Յովհ. Ման-
գակունւի մեծանուն հայրապետը: Մեր հին մատենագիրներէն
և ոչ մէկն որոշակի նշանակած է այս հայրապետին հիշատակա-
նան և ծննդավայրի մասին համաձայն չեն: Ստեփաննոս Ա.
սողիկ կը գրէ թէ ծնած է Ծախնոտ գեղը, իսկ ուրիշներ տար-
բեր կը գրեն: Փարպեցւոյն «առ Վահան» գրած թղթէն զի-
տենք թէ Գիւտ կաթողիկոսին եղբօրորդին էր սա: Ըստ հ.
Բարսեղ վ. Սարգսեանի «Քննադատութիւնք Յովհան Մանգա-
կունւոյ և իւր երկասիրութեանց վրայ» գործին, էջ 21,
Մանգակունին ծնած է 400-ին մօտ, 450-ին քահանայ ձեռնա-
դրուած, 454-ին Տիգրանէն վերագարձած, 484—485 կաթողի-
կոս և 498-ին վախճանած:

Վենետիկի վանքը, 1345-ին գրուած Մաշտոցին վերջը
շարադրութեան հայրապետին հայոց ընտիր պատառիկ մը կայ որ
Յովհ. Մանգակունւոյ համար կ'աւանդէ թէ «ա՛նա զիւր զիւր»
հայ. Ժամբրօւլէան: Հ. Բարսեղ, գարձեալ նոյն գործին մէջ, էջ
26—28, գիտել կուտայ «Յիշատակարաննիս «գիր» բառով եր-
կու բան կը հասկցուի. 1) ժամակարգութեան վերաբերեալ տ-
ղթք, մալթանք, քարոզք, երգք, և ամենայն որով կը կադ-
մուի ժամերգութեան ամբողջական չէնքը, կամ գիրքն, որ
Մանգակունիէն յառաջ կամ գոյութիւն չունէր կամ որ ինձ
հաւանադոյն կը թուի՝ միայն սաղմոսերգութեանց, ընթեր-
ցուածոց և աւետարանի կարգացմանց մէջ կը կայանար: 2.

Նշանագիր կամ խազ երգոց և շարականաց, ըստ ութ ձայնից, Հ. Բարսեղ կեղերակացընէ թէ Մանգակունիէն առաջ «ժամակարգութիւնը բաղդատմամբ շատ անկազմ ու անկերպարան էր: Մանգակունիին եղաւ որ մեր ժամակարգութեան բնորոշ կերպարանք տուաւ: Նախ յօրինեց խորին աղօթքներ, քարոզներ, մաղթանքներ և օրհներգներ՝ իրենց յատուկ և քաղցր եղանակներով ու խազերով, երկրորդ, այն սաղմոսականոնները, ընթերցուածքները, աւետարանները, երգերը կամ նուագներն որ իրեն ատեն կը գործածուէին անշուք ու ցրուած կերպով, գեղեցկագիտօրէն հիանալի վայելչութեամբ և հանճարեղ կերպով հիւսեց իրարու հետ: Կ'աւանդեն թէ «կանոն տապանակի տեառն» շարականը գրած ըլլայ, բայց հաւանական չերևար ոճէն դատելով: Ս. Հռիփսիմեանց համարձին ալ Մանգակունւոյ կը վերագրուի, բայց ս. Հռիփսիմեանց տօնն է. դարուն հաստատուած է. հետեւապէս ս. Հռիփսիմեանց համարձին աւելի Օձնեցուն կերեւայ, մանաւանդ որ այս համբարձն տաղաչափական արուեստն այբուբենական կարգաւ է: Այդ ձևը մտաւ հայոց մէջ է. դարուն: Ուրիշ շարականներու մէջ Յովհ. Մանգակունւոյ կընծայուին այն շարականները զորոնք ուրիշներ Ս. Խորենացւոյ ու Անանիա Շիրակացւոյ կը վերագրեն: Հ. Տաշեանի «ցուցակ ձեռագրաց». էջ 523. թիւ 222, 1313-ին գրուած շարական մը հռչականուն հայրապետին կը ընծայէ «կանոն ս. Առաքելոց», «կանոն դալատեան», «կանոն Յովհ. Մկրտչի». ս. Գրիգոր Լուսաւորչի «Ով երջանիկ» շարականները, թէև ոչ հարազատ:

41. Այս հայրապետէն ետքն է որ յետագայ ծաղկող մատենագիրները չեն բաւականանար ընդ «աղմուկներով և օրհներգներով», այլ կը յօրինեն շարականներ ու գանձեր որոնց ընտրութիւնն ըրաւ Բարսեղ ձօն է. դարուն որ Շիրակի դպրեւանքին առաջնորդն էր: Ներսէս Գ. Շինող կաթողիկոս երբ Դունայ մէջ ժողով գումարեց (645) եկեղեցական ինչ ինչ խնդիրներու կարգադրութեան համար, Բարսեղ ալ ներկայ էր այդ ժողովին, ուր իրենց յանձնուեցաւ ընտրութիւն ընել շարականներու, որոնց թիւը չափազանց շատնալով՝ ժամերգութեան խանգարման պատճառ կըլլար, այնպէս որ Վարդապետին Բագաւանի եկեղեցւոյն մէջ հարկաւոր է եղեր ութ գանա-

զան հարց փոխել: Բարսեղի ընտրած շարականները կոչուեցան ձօն—ընտիր:

Թէև ամէն շարակնոցի սկիզբը ծննդեան շարականները կընծայեն Մովսէս Խորենացւոյ, նաև աստուածայայտնութեան ճրագալոյցի կանոնն ալ, «Ուրախացիր, սրբուհի», սակայն Վարդան վրդ. «Անթառամ ծաղկի» տեսութեան մէջ աւելի Բարսեղ ձօն վրդ. ի կուտայ այդ շարականը: Ճրագալոյց բառը յունարէնի հետևողութեամբ եղած է. ինչպէս նաև լատիններն ալ լատինաւ «antiphona», որովհետև ճրագալոյց հին ատեն կը կատարուէր իրիկուան մութին՝ ճրագները վառելով: Բայց մեր մէջ սովորութիւն եղաւ ճրագալոյց կոչել բոլոր ժամակարգութիւնն աստուածայայտնութեան նախատօնակին, նաև Զատիկինն ալ: Ճրագալոյցի տօնը հիներէն մէկն է: Հարցը ԴԶ. «Որ դասուց անիմանալին աստուածաբանօրէն բաւական նրբութիւններ կը բովանդակէ և կը մատնանշէ հեղինակին ս. Գրքի հմտութիւնը: Աստուած բազմաշեյ քերովբէից անտեսանելի կ'երգէ: Անտեսանելին Աստուծոյ ստորոգելներէն մէկն է: Հիներէն Գիտեսսիոս Ոսկեբերան, Գրիգոր Նիւսացի, Եպիփան, Կիւրեղ Աղեքսանդրացի, Կիւրեղ Երուսաղեմացի այդ վարդապետութիւնը կը ջատագովեն: Արևմտեան վարդապետներն ալ ս. Օգոստինոս, Ամբրոսիոս ու Հերոնիմոս արևելցիներուն համեմատ են այս մասին:

Սուրբերը միայն կընան տեսնել Աստուած այսինքն ճանշնալ անոր էութիւնը, ինչպէս մեր շարականներն ալ կ'երգեն, «Որ անպարագրելի աստուածութեանդ տեսող և բարեխօս իւր ուխտաւորաց» («հարց ս. Ստեփանոսի»), «Որ յանձանիլին մերձեալ ի լոյս հուպ երրորդութեանդ» (մանկունք Ոսկեբերանի): «Զի լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց «առնէ» (նորաստեղծեալ): Ճրագալոյցի մանկունքի մէջ կ'երգուի Աստուծոյ բանին հրաշալի ծագումը—ծնունդը, որ իբրև հուր փայլատակալ՝ բնական մարմնի մէջ, որուն համար երկինք կը ցնծար հրեշտակներով և երկիրս ալ հրեշտակներու յայտնութեամբ կ'ուրախանար: Եւ ս. Աստուածածնի բարեխօսութիւնը խնդրելով՝ զայն կը կոչէ «անհաս տնօրինութեան մայր և բոլորից վերկութեան մայր»:

Վարդան վ. Բարսեղ ձօնի կ'ընծայէ նաև Յարութեան հարցերը: ԲԿ. ԳԶ. ԳԿ. ԳԶ. ԳԿ. հարցերն իրենց ոճի վսեմու-

Թեամբ գերազանց ասացուածքներով կ'երևան որ Բարսեղ ձօնի պիտի ըլլան որ է. դարուն միակ շարականագէտ ու երգահիւսը կ'երևայ հայոց մէջ:

42. Հին հայերէնն որ Զ. դարուն մարը մտնող արևու մը պէս իր ճառագայթները ժողովելով հորիզոնէն կը հեռանար, լիալիր լուսնի մը ճաճանչներով երևան եկաւ է. դարուն մէջ Սյս դարը մեծ կարևորութիւն ունի թէ հայերէն լեզուի պատմութեան և թէ եկեղեցական տեսակետով: Լեզուի տեսակետով կարևոր է, որովհետեւ սահմանադրուի մէ հին հայերէնի կամ գրաբարի ու հին աշխարհարարի կամ նախնեաց ռամկօրէնի միջև: Գրաւոր լեզուի մէջ կը մտնեն ռամկօրէն բառեր ու ոճեր, գրաբարի անկում: Եկեղեցական տեսակետով ալ կարևոր է, որովհետեւ Զ. դարուն մարմին առած հայ եկեղեցւոյ ինքնուրոյնութիւնը կը կատարելագործուի, եկեղեցական նշանաւոր գէպքեր կը պատահին, նուիրական երգեր կը շատնան և զանազան տօներ կը հաստատուին:

43. Զ. դարուն վերջերը կրկին կաթողիկոսութիւն ունենք, որուն պատճառը յունաց Մօրիկ կայսրն էր: Սօրիւ, Մովսէս Բ. կաթողիկոսին ի հեճուկս, որ չընդունեց կայսեր առաջարկութիւնը Քաղկեդոնի ժողովին մասին, և որուն կաթողիկոսութեան առաջին տարիները կարգաբերուեցաւ հայոց տոմարը, Ս. Լանցի մէջ Յովհաննէս անունով մէկը կաթողիկոս դրաւ, իսկ Մովսէս Դուինի մէջ մնաց կաթողիկոս:

616-ին Աբրահամ ծայրայեղ հակաքաղկեդոնեան կաթողիկոսին վերջին տարիները ջնջուեցաւ Աւանցի կաթողիկոսութիւնն և դարձեալ մէկ ընդհանրական կաթողիկոսութիւն մնաց: Սյս կաթողիկոսին ատեն, 596-ին վրացի Կիւրիոն եպիսկոպոս որ Մովսէս կաթողիկոսին ձեռնապաշտէր, աշակերտն ու կաթողիկոսարանի երեսի անձերէն մէկը, Դրանիկ եպիսկոպոս, Քաղկեդոնի ժողովն ընդունելով վրացիները հայոց եկեղեցւոյ իրաւասութենէն բաժնեց:

44. Աբրահամին յաջորդեց Կոմիտաս կաթողիկոս (617—625) որ Տարօնի եպիսկոպոս ու Գլաղի վանահայրն էր: Իր հայրապետութեան ատեն, Ս. Հռիփսիմեանց տաճարն (Էջմիածին) նորոգել ձեռնարկեց, և այս առթիւ յօրինեց Ս. Կոյսերու վրայ ալբուքենի կարգաւ Շարական մը. ծանօթ «Անձինք նուրբ» «Երոյն Քրիստոսի»: Այս քնարերգական գեղեցիկ բանաստեղծութիւնը Հայ. Եկեղեցւոյ շարականներու մէջ գրեթէ առաջին տեղը կը գրաւէ զգացումներու փափկութեամբ, լեզուի պարզութեամբ ու իմաստի զանազանութեամբ: Անձինք նուիրեալք Ա. — ձ թարգմանուած է գերմաներէնի Norrenberg — Mache, Literatur 303 - 4 և այլն: Ալբուքենական կարգաւ շարականներու մէջ, ինչպէս «Այսօր զուարճացեալ», «Արեգական արդարութեան», «Արեւելք գերարիին» և այլն, առաջինն է «Անձինք նուիրեալք» ուր Ս. Հռիփսիմեանց մարմնական գեղեցկութիւնը լիմարեցուց հեթանոս թագաւորներն ու ժողովուրդները, իսկ իրենց հոգեւոր սքանչելի աստուածաձիր գեղեցկութիւնը փափագելի եղաւ հրեշտակներուն. և երբ մարդիկ կը աօնեն Սրբուհիները, հրեշտակներն ալ ուրախակից կը ըլլան: Աստուած Ս. Հռիփսիմեանց օգնութեան կուգայ հեթանոսական գունդերու դէմ: Կոյսերը Հայոց, Վրաց, Աղուանից ազգերը կը ծնեն, քրիստոնէութեան կը դարձնեն: Քերթողը Հռիփսիմէ անունին վրայ որ յունարէն Եփրոփիս = «Մեծ խորհուրդ» հալացածն է, խորհրդածելով կ'երգէ «Հռիփսիմէ մեծ խորհուրդ և անուն ցանկալի... Լոբեր օրինակ սրբութեան կուսանաց»: Կոյսերը Ռահպուղովս ցուցին մարդոց արքայութիւն երթալու համար ու աղքատութեան ճամբան. խոնարհութիւն, աշխարհս արհամարհել, կուսութիւն, ժուժկութիւն, վշտամբերութիւն, աղօթասիրութիւն, ընկերսիրութիւն, Աստուծոյ ապաւինել, արի՛ դժուարին պարագաներու մէջ. Ներբողին բովանդակութիւնը առնուած է Ագաթանգեղոսի պատմութենէն:

Ոչ միայն օրհնութիւնն ալբուքենական կարգաւ է, այլ և հարցն ալ. թէն ոչ Կոմիտաս կաթողիկոսի Ս. Հռիփսիմեանց յատկացուած հարցն աւելի Ս. Ղևոնդեանց յատուկ է քան այս կոյսերուն: Հարցը Օրհնութեան վսեմութիւնը չունի: «Անձինք նուիրեալք» չափը հայկական կոչուածն է, իւ-

բաքանչիւր տող ունի չորս շեշտ և 8—14 վանկ. օրինակ.

	Շեշտ	Վանկ
Թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց	4	12
Եւ տկճր կանաչքն վառեցան զինու	4	9
Թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք	4	12
Ի մանուկ ի կուսէն պատեալ ամաչէր.	4	11
Ի վերայ միոյ պատուական մարգարտի	4	11
Խաղացին ցնծալով ամենայն հեթանոսք	4	11
Արևմուտք լարեալս ընթացեալ հասին	4	10
Քարողել լալտնապէս զչքնող տեսութեան	4	10

Նախադասութիւնները բարդ են և կը բովանդակեն ճարտասանական ձևեր, ինչպէս պիտի տեսնենք և բարդ իմաստներ: Այդ ձևին մէջ կերևալ քերթողին զգացումներու վսեմութիւնը. անիկալ ոգևորած է Հռիփսիմեանց նահատակութեամբ, կը գովէ անոնց մարմնաւոր գեղեցկութիւնը, անոնց առաքինութիւնը, աշխարհատեցութիւնը և իրենց համոզման մէջ հաստատուն մնալը: Զանոնք կանուանէ «Ողջակէզք բանաւորք, զոհք փրկութեան և որովք անարատք». «կաթողիկէ եկեղեցւոյ Սուրբ հիմնաքար» և այլն:

45. Կոմիտասի լաջորդ Եղր կաթողիկոս, որուն անունին առաջին տառը Ե. երբեմն գաւազանագիրքներու, ալիսքն կաթողիկոսներու լաջորդական կարգին մէջ հակառակ կողմը կը դարձնէին, քաղկեդոնութեան լարելուն համար, ըստ Յովհ. Իմաստասէր (Օձնեցի) կաթողիկոսին, գրած է Աւետիք սարքը՝ Արևագալի յորդորակներն իրենը չեն. մինչև ժ. Գ. դարը ձեռագիր Շարականներու և ժամագիրքներու մէջ ալ յորդորակները գոյութիւն չունին:

46. Է. դարու Շարականագիրներէն է, կըսեն, նաև Անանիա Շիրակացի, որ հայ հին մատենագրութեան պատմութեան մէջ եղական դէմք մ'է համարողական ու թուաբանական գիտութեան հետամուտ ըլլալուն համար: Հայոց մէջ առաջին աստեղագիտութիւնը [=Յաղագս երկնի] այս հեղինակը գրած է. Անանիայի է նաև Յաղագս Գրեց և իշուց կուսած գործը: Իմաստասիրական և ուսումնական գիտութեանց լատուկ ոճ մը կը գործածէ, ինչպէս ուսման, նոյնպէս և լեզուին զլխաւոր հեղինակն է արժանապէս: Ոճէն դատելով՝ Անանիայի անհարազատ գրութեանքներէն կը համարեն Կանոն

Մեծի Յարութեան, «Որ եկիր ի փրկութիւն», Վարդապետի, Մարգարէից, Վարդապետաց, Պենտեկոստէի Ա. Աւուր շարականները: Ս. Էջմիածնի ձեռագիրներէն 1588-ին գրած Շարական մը Անանիայի կը վերագրէ «Գովեալքն» որ խնդրական կը մնայ:

47. Է. դարու նշանաւոր երգիչն է Սահակ Զորափորեցի կաթողիկոսը [677—703]: Ասոր օրով առաջնակարգ սրբութիւններ ճանչցուեցան—Ս. Եկեղեցիներն ու Ս. Խաչը, և մասնաւորապէս Խաչին փառաւորապէս Ս. Երուսաղէմ դարձը Նիւթ դարձաւ կրօնական աւանդութեանց ու շարականներու: Այդ ատենները կը կառուցուին առաջին անգամ Ս. Խաչ անունով տաճարներ, որոնց կընծալուին Խաչի մասունքներ և կը հաստատուին Ս. Խաչ անունով տօներ: Վարդապ. Խաչի գիւտն և ասոր հետ կապուած աւանդութիւնները նոյնպէս այս դարուն տեղի ունեցան: Այս պատճառաւ է որ Ս. Խաչի շարականներու մեծ մասը Է. դարուն յօրինուեցան որոնք մեղի հասած են Զորափորեցւոյն անունով, բացի երկուքէն. 1. Կանոն Գ. աւուր, «Սրբութիւն Սրբոց» շարականն, որու տունները Ստեփաննոս Մովսէսեան անունին վերառութիւնն ունին և կը համարուի գրուած այս եպիսկոպոսէն, որ կապեր էր Ժ. դարուն և որ շինած է Ագաթանգեղոսի եկեղեցին, ասոր համար տօն մ'ալ սահմանեց և 2. «Կանոն Գ. աւուր», որ Գրիգոր Մագիստրոսին է: Զորափորեցին երգեց նաև «Կանոն Շողակաթի» շարականն որուն մէջ կը ներբողէ եկեղեցւոյ նշանակութիւնը:

Շողակաթի Մանկունքի շինմանին ի հօրէն ի մէջ կը երգուի թէ երբ Միածին որդին, ըստ տեսեան Գր. Լուսաւորչի, ոսկի ուռով բաղխեց երկրին լատալը, սանդարամետները, անդնդոց խորերը ձայներ հնչեցին:

48. Խաչի նաւակատիքը մեր շարակնոցներու մէջ «նաւակատիք եկեղեցւոյ ալ կը կոչուի, սրովհետեւ իսկզբան յօններն ալ այսպէս կը կոչէին, Էնէնէն, նաւակատիք, նուիրումը. Խաչը գտնուելէն ետք, երանելի դշխոյն Հեղինէ Գողգոթայի վրայ Ս. Յարութեան եկեղեցին շինել տուաւ որուն նաւակատիքը մեծահանդէս տօնուեցաւ: Այնուհետեւ Երուսաղէմի եկեղեցին տարուէ տարի հանդիսաւոր տօն կը կատարէր ի

քիշատակ ասոր: Այս հանդիսաւոր տօնին քիշատակն է որ կը կոչուի նաւակատիք եկեղեցւոյ:

Խաչը կը կոչուի «Փայտ կենաց»: Գ. օրուան Օրհնութեան Գ. տունին մէջ քերթողը կերգահիւսէ երաւական աւանդութիւն մը «Արեւելք ի գրախտին ընծայեցին զփայտ խաչին»: Թէ Սեթ Աստուծոյ հրեշտակին հրամանաւ գիտութեան ծառին սերմը առնելով՝ զրաւ թաղուած Ադամի բերանը ուր աճեցաւ և ծառ եղաւ: Այդ ծառին բունը, կըսեն, կար Քրիստոսի ատեն, զինուորները կամ հրէաները զաջն առնելով՝ խաչ չինեցին և անոր վրայ զամեցին Քրիստոսը:

49. Միջին դարուն, եւրոպական բոլոր եպիսկոպոսանիտ մայր եկեղեցիներն ու վանքերն ունէին իրենց զպրօցը՝ կղերին պատրաստութեան համար: Կաւանդէին ինչ որ պէտք էր կղերին, կարգաւ գրել լատիներէն, երգելու ծիսակատարութիւն: Աշակերտողները խիստ կարգապահութեան ենթարկուած էին: Ամէն տարի զպրօցականները մեծ հանդէսով կերթային կտրելու խրճաձև գաւաղաններ որով իրենք պիտի ծեծուէին: Նոյն սովորութիւնը կար նաև գաւառներու մէջ մեր տղալութեան զպրօցականներու մէջ՝ չափահաս մարդիկ ալ կային: Սեր մէջ ալ այդպէս էր: Բարձր ուսումն էին Քերինքն Lirourinm: Ասունք աւարտելէն ետքը, կ'աւանդէին Մաթեմատիք, Երաժշտութիւն, Երկրաչափութիւն և Աստղաբաշխութիւն, այսինքն Quatrum: Մեր մէջ ալ, մայրավանքերու զպրօցները կ'աւանդէին այս ուսումներն է: Դարէն սկսեալ՝ Նախնիք այս մասին բանմ' աւանդած չեն, բայց այդ ուսումներու վերաբերեալ, գիրքերն որ է. ու Բ. դարուն Թարգմաթի ընծայուած երկերն և Թարգմանութիւններն ոչ նուազ զօրաւոր փաստեր են թէ Մայրավանքերու մէջ գէթ կ'աւանդէին Միջին դարու նախամեծար ուսումներն և գիտութիւնը:

Ս. Լուսաւորչի քարոզութեամբ Քրիստոնէութիւնը մեր մէջ արմատ ձգեց: Այս մասին կղեր պէտք էր: Եպիսկոպոսանիտ մեծ քաղաքներու և եկեղց. մայրաքաղաքներու մէջ Եպիսկոպոսանիտ — կային զպրօցներ որ եկեղեցիներու կից մատուռն էին: Բիւզանդ Տարօնի մայր եկեղեցւոյն Ս. Յովհաննէս աղպիսի մատուռը կը կոչէ Մարգարէանց [Բիւզանդ. Գ.

ժ.Գ. ժ.Զ.]: Ե դարու Մայրավանքը, ուսման վառարան էր Ս. Սահակի ու Մեսրոպի զպրօցը, զոր «Թարգմանչաց զպրօց» կրնանք անուանել: Զ. ու Է. դարուն ալ գլխաւոր ուսումնատեղիներն էին Վարդէի հայր, Շիրակի Գարեգին: Կարն, Խաչի, Վանքի, Իսկ Բ. դարուն անուանի էին Մաթեմ. Սրբաշէն, Թաւառ, Զէրմաշ, ու Զառմայր վանքերը. մանաւանդ Սեւանց վարդապետը: Այս վերջինը մեր եկեղեցական մատենագրութեան ու կրօնական բանաստեղծութեան մէջ շատ նշանաւոր տեղ մը գրաւած է:

50. Ս. Մեսրոպի քարոզութեամբ հին հաւատքի նշխարքը ընաձինջ ըլլալով՝ այդ տեղերը քրիստոնէացան, ուր կրօնական ուսման հիմը դրաւ Ս. Մեսրոպի աշակերտ ու լետոյ ալի շրջանակներուն եպիսկոպոս Անանիա, որուն վրայ վերջերս ընտիր ուսումնասիրութիւն մը հրատարակեց հայր Բարսեղ վարդապետ Սարգսեան: Ոչ նուազ ծաղկեցոյց ալ տեղերը նոյն ուսումը է. դարուն սկիզբը Մաթուսաղա քերթողը, ըստ Ուսպիւկեանի «Մեծ քերթող և Անյաղթ փիլիսոփայ», որ նաև Սիւնեաց վարժարանին բոլոր վարժապետներուն զլուխ կարգուեցաւ, այնպէս որ Ամիրտան կաթողիկոս չբաւականանալով կաթողիկոսարանի վարդապետներէն, իր Թէոդորոս Քաթենաւոր եղբորորդին ասոր քով զըրկեց՝ ուսումը կատարելագործելու համար: Ստեփաննոս Ուսպիւկեան այդպէս կը գրէ «[Ստեփաննոս Սիւնեցի, որուն մասին քիչ մը ետքը] ելեալ ի մենաստանէ անտի [Մաքնոցաց] փութալ ձեպի լաղբիւրն իմաստից, ի վարդապետարանն Սիւնեաց, որ էր գլուխ ամենայն գիտնոց հայոց, և պայծառացեալ զպրօցքն որ ի նմա, քանզի որպէս Աթէնացիքն ի մէջ հոռոմոց և յունաց ձոխացեալ էին, և մայր իմաստից կոչեցեալ ի Սպանիացոց աշխարհին լատին և հելլէն զպրօթեամբ, այսպէս և սոքա ի մեզ»: Այսչափ հռչակաւոր էր Սիւնեաց վարդապետարանին աստուածաբանութիւնն ու վարդապետութիւնը, մանաւանդ որ ասոր եպիսկոպոսներն ալ կաթողիկոսէն ետք, Մեծն Ներսէսէն ի վեր, առաջինն էին, ըստ Ուսպիւկեանի Պատմութեան որ լուսարէն է և կը նշանակէ «նախատես», «նախապատիւ» եպիսկոպոս: Այնուհետև այս եպիսկոպոսները Միտրապոլիտ կը կոչուին: Զ. դարուն այս պատիւը նուազեցաւ, Աբրահամ կաթողիկոսի օրով, երբ Ալրայ

ու Աղուանից մէջ գահերիցութեան մասին հակառակութիւն ծագեցաւ, դարձեալ այս պատիւը վերստացան: Սիւնեաց եպիսկոպոսներուն Աստուածապատիւ և հոգևոր Տէր տիտղոսը կը տրուէր:

51. Ը. դարուն, Սիւնեաց դպրոցի ձեռքով հեղինարանութիւնը մեր մէջ արմա՝ ձգեց: Բանասիրօրէն մեղանշած չենք ըլլար ըսելով. (հակառակ այն վարկածներուն թէ հելլենականութիւնը կրտսեր թարգմանիչներուն ձեռքով Ն. դարուն վերջեր մտաւ մեր մէջ) Ն. դարուն վերջերն սկսաւ աւտիկա ու Ը. դարուն՝ այն ոճով գրել սովորութիւն մը դարձաւ: Ն. դարու վերջերը հեղինարանական մատենադիրներ այս դարուն կը պատկանին, այսինքն Սիւնեաց դպրոցին: Սոյն հեղինարանութեան քովիկն եկաւ բաղմեցաւ սեմական մատենադրութեան ճոխ ու ճոռոմ ասացուածքներու թարմատար ձևերու սեթեթեալ բառերու մասնաւոր հակումը: Այդ աղբեցութեան ներքեւ Ասիական ճոռոմաբանութիւնը մուտ գտաւ հայացի բացատրութեանց մէջ. և ինչ որ կրնար լեզուն բացատրել պարզ և յստակ ձևով մը, բառերու կոյտեր զայն խրթնացոյցին և խեղդեցին իմաստն ու հոգին: Բառերու անօրինակ բարդումներ, երկարաձիգ պարբերութիւններ և ուռուցիկ բացատրութիւններ լաճախեցին: Ը. դարու շարականներն այս լեզուի հանդամանքը կը կրեն: Շատ քիչեր լաջողեցան այս գրական թերութեանց ու տգիտութեանց մէջէն իրենց հանձարին բնատուր գեղեցկութիւնն երևան հանելու: Գրաբարի թերակատար ուսումը դարդարուն և բարձր գրելու տենջանքին հետ միացած՝ նորանշան բռնապետ լեզու մը և ճամարտակ խօսուածք մը չառաջ բերաւ:

52. Է. դարու հալ հեղինարաններու մէջ նշանաւոր տեղ մը կը գրաւէ Մ. Խորենացին իր պատմութեամբ ու շարականներով: Թէև Խորենացին աւանդուած է իբր Ն. դարու մատենագիր, բայց Խորենացուն մասին քանի մը տարիէ ի վեր այնչափ քննադատական բաներ գրուեցան որ ելլել Ն. դարու հեղինակ պնդելը վաղաժամ է, մանաւանդ բանասիրօրէն ալ անկարելի է. Ոսկեղէն դարը կարճ ժամանակամիջոց մը չէր կրնար ըլլալ, կամ անոր իսկոյն անկում չէր կրնար չորդել, ալ այս երկուքին մէջ անցման շրջան մը պէտք է որ են Զ. Է. դարերն: Ն. դարու վերջերը հեղինարան հեղի-

նակներ համարուելը չատ անտեղի է: Լեզուի տեսակէտով Մենդեան շարականներն ու «Մեծացուցէնները» կրնանք ընծաւել Մ. Խորենացուն:

53. Մենդեան տօնը շատ հին է, Գ. դարուն հաստատուած և կը կատարուէր հունուարի 6-ին և որ «Արեւելքի մէջ տարածուեցաւ 376-ին: Ոսկեբերան «Մայր ալոց ամենայն տօնից» կը կոչէ Մենդեանը: Իսկ Մենդեան պահքը հաստատուած է Է. դարուն:

54. Մենդեան Ա. օրուան օրհնութիւնը ղկ. «Խորհուրդ մեծ և սքանչելի» կ'երգէ Աստուծոյ Բանին մարդեղութեան պարագաները և վերջին 9 տունով ծննդեան հանդիսադիր հաւատացեալները կերգեն, փառք կուտան Արդարութեան արեգակին որ ս. կոյսէն մարմնացաւ: Հարցը կ'երգէ, թէ և կոյսէն ծնաւ Քրիստոս, բայց անձառելի միութիւն է, Աստուածութեամբ անբաժանելի է և հայրական ներքին կցորդութիւնն չմեկնեցաւ բնաւ: Մեծացուցէն Աստուծային՝ Հրեշտակային ողջունով կ'երգէ Ս. Աստուածածին իբր «Առաջ մայր» «Աստուածածին կենաց գանձ» և «Միշտ կոյս»: Ուղորմեային մէջ մարդեղութեան խորհրդին պատճառները կը բացատրուին, «Անբաւ իմաստութիւն, այնչափ գթութիւն ու անտկար զօրութիւն», որուն համար «Ամենիմաստ» կը խոստովանի Աստուած, խորհրդին մեծութիւնն ալ կ'երգուի, «Կերպարանք և կնիք հօր» մարդկային բնութիւն կ'առնէ, և անիկա, Որէն, որ կը նստի աստուածային փառքի աթոռը, հրեշտակաց անտեսը, ահա կ'իջևանի և կը բաղմի անբաններուն մտւորը և ժողովուրդը կը հրաւիրէ որ «Ձբանն մարմնացեալ ի կուսէն բարեբանէ հովիւներուն հետ, անոր երկրպագէ մոգերուն հետ և «երկնային զօրքերուն հետ մրախմայն երգէ «Փառք ի բարձունս»: Ճաշուն մէջ ալ հրեշտակին աւետիսն ձիչելով հրեշտակներու հետ կը խնդակցի մօրը:

Բ. Օրուան օրհնութիւնն ալ աստուածաբանօրէն նշանակութենէ զուրկ չէ. Է. տան մէջ Ս. Աստուածածին Անհայտնութեան կը կոչուի, «խնդա և ուրախ լեր, անհարսնացեալ մայր»: Անհարսնացեալ լուսարէն Սիմֆէ-բառին թարգմանութիւնն է զոր լոյն եկեղեցւոյ վարդապետները լաճախ կը գործածեն: Աստուածաբանները այս բառը ասպէս կը մեկնեն. «անմերձ լառնէ, անշաղախ իմարմնական մերձաւորութենէ, և

անհարսնացի ալ կը թարգմանեն *innupta* որ կը նշանակէ պսակեալ, բայց ոչ մերձաւորեալ, ասոր համար Ս. Աստուածածին «Միշտ կոյս» կը կոչենք:

Դ. Օրուան Մեծացուցէին մէջ Ս. կոյսը «պարծանք կուտութեան մարդկան» կը կոչուի ընդ դէմ հրէաներուն որ կուտական վիճակն անպատիւ կը համարէին՝ զաւակ չունենալուն համար, իսկ Ս. կոյսն պանծացուց կուտութիւնը, որովհետեւ զայն պահելով՝ ընդունեց ցանկալի զաւակը: Ս. կոյսը հրեշտակներու ուրախութիւն ալ է, որովհետեւ հրեշտակներու կոյտութեան պակասը Ս. կոյսը գերազանց չափով լեցուց, Ողորմեալին մէջ՝ Բանն Աստուած անպատում փառքէն երկիր խոնարած՝ ախտակիր—կարեկից կ'ըլլալ հոգեղէն բնութեան, այսինքն հոգեղէն բնութեան կարիքն ու ախտը, քաղց, ծարաւ, ցաւ և տրամութիւն կը կրէ, որպէս զի մեղուցեալ նախաջրը կենդանացունէ, իսկ ճաշուին մէջ Ս. կոյսը թէ մալի և թէ աղախն փրկչին մերոյ կը կոչուի. ըստ Դուկասու (Ս. 38, 48): Աւետարանի այդ հատուածէն չալտնի է թէ Ս. կոյսըն իր բերնով ինքզինք երկու անգամ Տիրոջ աղախին կոչեց:

Ե. Օրուան Մեծացուցէին մէջ տիրամայր կը կոչուի «Առաջատ անճառելի բնակողին, այսինքն հարսնարան անճառելի բնակողին, Աստուծոյ բանին որ Ս. կոյսին մէջ մի փեսայացաւ մարդկային բնութեան հետ անլուծանելի ի հօրէն, ոչ միայն փեսայացաւ Ս. կոյսին, այլ բովանտակ եկեղեցւոյ հետ անշէջ սիրով: Ճաշուին մէջ Ս. կոյսը կ'ըկոչուի Ս. Մարգարէն որուն մեկնութիւնը գրած է Վարդան վարդապետը, և եօթնարփեան շնորհքի—հոգւոյն եօթ զօրութեանց ընդունարանը: «Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ» ալ կը կոչուի Ս. կոյսն իբր ծաղիկ կը պտղաբերէ Քրիստոսը: Ս. կոյսը բանաւոր բարունակ ու Քրիստոս համեղաճաշակ պտուղ են ալլարանօրէն: Բարունակի և ողկոյղի նմանցուելուն համար, այս «Անթառամ» շարականը վերափոխման տօնին խաղողի օրհնութեան համար յօրինուած է:

Ծննդեան Ը. օրուան զոր «Քրիստոսի մկրտութիւն» անունով կը տօնենք, շարականն ալ «Այս ի լուսոյ» կը վերագրուի Ս. Խորենացւոյ: Ասոր հարցը «Տնօրինեցաւ» մանաւանդ նշանաւոր է թէ իմաստով և թէ եղանակին անաւոր ներդաշնակութեամբ: Բանն Աստուած հաճութեամբ խորհե-

ցաւ մարդանալով կուսին տրդանդին մէջ. կ'զգենու մարդկային բնութիւնը՝ նախաօր մեղքը բառնալու համար և Աստուածախառն մարմնով կը մկրտուի Յովնանէսէն: Եւ ով է սա որ այնքան կը խոնարհի—Նախա—խառն որդին հօր և սուրբ հոգւոյն փառակիցը, հայրը վերէն կը վկայէ թէ Դա է իմ որդին կրկին ծննդեամբ. այսինքն թէ ըստ աստուածային ծննդեան հօրմէն և մարդկային ծննդեամբ կոչուէն: Եւ Ս. հոգւոյն Աղաւնակերպ իջմամբ Յորդանանու ջուրը կը մաքրուի:

55. Ս. Խորենացւոյ շարականներու մէջ նշանաւոր են «Մեծացուցէները» որ Ս. կոյսը կերպեն ու կը փառաբանեն: Թէն «Մեծացուցէն յարութեան Տեառն» գրուած է, ոչ թէ Յարութեան խորհրդին համար սահմանուած են, այլ որովհետեւ հին ատեն Մեծացուցէ Սաղմոսը միայն կիրակի ու տօն օրերը կերպէին: Յովնան իմաստասէր ասոր պատճառը բացատրած է (Կանոն ԻԳ) Քրիստոսի Յարութեան հիմն ու սկիզբը կուսական ծնունդն ըլլալով՝ զայն Մեծացուցէով կը լինենք. Ս. Ներսէս Շնորհալին ալ «առ Ալեք» գրած թղթին մէջ «Յաղագս կարգաց եկեղեցւոյ, Բ» կըսէ «Այնքան պատուի ի մէջ արժանաւորն պատուոց՝ լերկնաւորաց և լերկրաւորաց մայրն Աստուծոյ Մարիամ, մինչ զի զբանս նորա ոչ ի լոկ աւուրսն ընդ երկց մանկանցն, և ընդ մարգարէին Գաւթի երգեմք բանից, ալ ի կիրակէս և ի Տօնս տէրունականս: Դձ «Անարատ կոյս» ի մէջ քերթողը կերպէ «Վրիս խորհուրդս ի քեզ տեսանի Աստուածածին», անսերմնական լցութեան, անարատ ծնունդ և կուտութիւն անխախտելի, որ մնաց ծնունդէն ետքն ալ Փրկիչը թափանցելով արգանդը՝ չալտնուեցաւ: Տիրամայրն եկեղեցւոյ հիմն է, և Ս. Հոգւոյն խորանը:

56. Տեառնընդառաջի կանոն ալ Ս. Խորենացւոյ կը վերագրուի. Փրկչին «քառասնօրեայ զալուստն ի տաճար» կը կոչուի «Տեառնընդառաջ» յունարէն լեզուի, որովհետեւ Սիմէոն ծերունի ու Աննա մարգարէուհին ընդ առաջ ելան Փրկչին: Եկեղեցական հնախօսները այս տօնը շատ հին կը համարեն: Ոսկեբերանի, Կիւրեղ Երուսաղեմացու, Կ. Ալեքսանդրացւոյ, Գրիգորի Նիւսացւոյ գրուածներէն չալտնի է թէ Դ. դարուն կար այս տօնը. ոմանք կարծեցին թէ Մեծն Յուստիանոս կառուեց օրով 542-ին, Կ. Պօլիս պատահած ժանտախտին պատ-

ճառաւ. սահմանուած էր: Հաւանական է որ ուրիշ եկեղեցւոյ մէջ գոյութիւն ունեցած ըլլալ այս տօնը, և Կ. Պօլսոյ ալք ժանտախտին առթիւ հող ալ մտած ըլլալ: Արեւմտեան եկեղեցւոյ մէջ ալք տօնը լեւոյ փոխուեցաւ testus purification որ կը կատարուի փետր. 2-ին: Յայտնի չէ թէ մեր մէջ երբ մտաւ ալք տօնը, բայց հաւանական է որ Ե. դարուն վերջերը գոյութիւն ունէր ու սկսուած Սկեբերանի և ալլն գրուածքներու թարգմանութենէն ետք: Տեառնընդառաջի շարականները օրուան իշատակը կերգեն ու կը պատմեն Սիմոն ծերունոյ ծանօթ պարագան:

57. «Կանոն գլխատման Յովհ. Մկրտչի որ Մ. Խորենացւոյ կուտան, և ունի աստուածաբանական նրբութիւններ, լատուկ Օրհնութիւն չունի, ալ կ'երգուի Յարութեան Դձ. Տէր լերկնիցները: Հարցին երկրորդ առնին մէջ կ'երգուի թէ «յարգանդին կուսի տեսեալ քո», որովհետեւ շատ մը վարդապետներ կը համարին թէ Ս. Կոյսը Նղիսաբէթն ողջունելու ատեն, մօրն արգանդի մէջ, Աստուծոյ լայտնութեամբ սաղմային վիճակի մէջ Յովհաննէս մանուկն երկրպագեց շուտով Աստուծոյ. և ալք է ակնարկութիւնը «խաղաղով ցնծալը»ը զոր անոր մայրն ծանուց: Ասոր համամիտ են Յովհ. Ոսկեբերան, Հերոնիմոս, Օգոստինոս, Տերտուղիանոս, Կիրեղ Նրուսաղեմացի և ալլն:

58. Ը. դարու Շարականի հեղինակներու գլուխը կը գտնուի Ստեփաննոս Սիւնեցի, Սիւնեաց վարդապետարանի ամենէն փալլուն աշակերտն որ լեւոյ Դունայ կաթողիկոսարանի վարդապետներուն հին ու նոր կտակարանի մեկնութեանց պարապեցաւ: Դաւանական քանի մը խնդիրներու բացատրութեան մասին հակառակութեան հանդիպելով Սիւնեցին՝ Կ. Պօլսոյ եկաւ, ուր միայնակեցի մը քով սորվեցաւ Յովն ու Լատին լեզուները, լեւոյ Աթէնք ու Հռոմ ալ գնաց թարգմանութեանց պարապելու համար: Ստեփաննոս դարձին հետը բերաւ Կ. Պօլսոյ Գերմանոս պատրիարքին գրած մէկ թուղթն ուղղուած առ Հայս՝ կրօնական տեսակէտով՝ զոր Հայերէնի թարգմանեց և Դաւիթ Ա. [729 - 741] կաթողիկոսին հրամանաւ նոյն թղթին պատասխանն ալ գրեց:

Ստեփաննոսի թարգմանութիւններն են Գիորնիոսի Ա. քրիստոնեացւոյն անունով գրուած ընդարձակ գործը, Ս. Կիրիլի

պարապմանց գիրքն և Նեմեսիոսի Եմաացւոյ (կամ ըստ մեր նախնեաց Գրիգորի Նիւսացւոյն) Մարտոնի-Քիւսի որուն վերնագիրն է Յոգոֆ Բիւս-Քիւսի Գրք: Այս վերջինը թարգմանած է Դաւիթ Նիւսացւոյ. «Կենառ. Հռոմայեցի» կոչուած ու Ստեփաննոս միայն կոկած, լարդարած է: Հայր Տաշեան, «Մատենադարանի մանր ուսումնասիրութիւնք». Վիեննա, 1895, էջ 8. դիտել կուտալ թէ «Կենառ» լայտնապէս սխալ գրչութիւն մ'է, փոխանակ Կենա գրելու, որ է Լատինական cellarius բառը, այսինքն Մատենապետ:

Ստեփաննոս իբրեւ բանաստեղծ ու երգահիւս նշանաւոր է, Ուրպէլեան կաւանդէ թէ (Ստեփաննոս) «արար և ճառս բազումս, բաժանեաց և զութն ձայնսն և կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնութիւնսն, երգեաց և կցորդս քաղցրահամս...»: Այս խօսքերէն կերևալ որ Ստեփաննոս երգած է կցորդներու օրհներգութիւններ՝ սաղմոսներու կցուած:

59. Իրեն են Ա. օրհնութեանց ընտիր շարականները [բացի վառ ձայնէն (=Գ. Կ.) որ Շնորհալին երգած է:] Այս շարականներու մէջ Ստեփաննոս Քրիստոսը կը ներկայացընէ Կրքի տէր, ահարկու էակ որ հրով սրով կ'ոչնչացնէ թշնամիները, ինք նստած կառքի վրայ, իբրեւ տէր և իշխան, և ձայնով սարսափ կ'իջեցընէ հակառակորդներուն գլխին: Քրիստոս խորխտ, քաջասիրտ մարդու կերպարանք կստանալ որ Աստուածային բարկութեան հրով կայրէ դժոխքն և կապեալները կարձակէ: Մահը զայն տեսնելով՝ կը լուծուի, Գժոխքին պղնձի տունները կը խորտակուին ու պատերազմին մէջ կը խաղթուի Գժոխքը: Այսպիսի բնորոշութեամբ Ստեփաննոսի շարականները միւսներէն կը զանազանուին:

60. Ը. դարու Բ. երգիչն է Յովհաննէս իմաստասէր Օձնեցի որ գրեթէ ժամանակակից էր Ստեփաննոսին: Տաշեաց Օձուն գեղէն էր Յովհաննէս: Մանկութեան ատեն աշակերտեցաւ Քոթենաւորին: Յովհանն իր բարակ մտաւոր կրթութեան ու նախորդներէն ունեցած աւելի աստուածաբանական ու փիլիսոփայական հմտութեանց համար՝ կոչուեցաւ Իմաստասէր: Նղիա կաթողիկոսին լաջորդեց (718—729), որ իր հայրապետութեան երկրորդ տարին ժողով մը գումարեց Դուլին և հոն Նկեղեցւոյ բարեկարգութեան մասին գեղեցիկ ատենախօսութիւ մ'ըրաւ: Այս ատենները Նւտիքականները Քրիստոսի

անօրինութիւնն առաջօք կամ երեւութական կը վարդապետէին: Օձնեցին ասոնց դէմ հակառակեցաւ: Պաշտօնական ազանդաւորներուն դէմ ալ խօսեցաւ որ Մարկիոնի հետեւողներն էին: Պաշտօնական կոչուեցան՝ Պօղոս առաքելուն հեղինակութիւնը նախամեծար համարելուն համար: Օձնեցին ոչ միայն նշանաւոր է իբրեւ կաթողիկոս, այլ և իբրեւ երգիչ: Կաւանդեն թէ երգած է «Կանոն Գաւթի մարդարէին և Յակոբայ առաքելոյն»։ «Կանոն Ս. Ստեփաննոսի նախավկային»։ «Կանոն Պետրոսի և Պօղոսի զլիսաւոր առաքելոցն» և «Կանոն որդւոց որոտման»։ Կիրակոս Գաւթի և Յակոբայ «Մեղաք չամենայնի և զպատուիրանս» շարականը միայն կընծայէ Օձնեցւոյն: Պետրոսի և Պօղոսի շարականն ալ ոմանք կը վերագրեն Ծնորհալուոյն: Հաւանական է որ մէկ մասը ինքն է գրած միւսն ալ Ծնորհալին:

61. «Բացատրութիւն Ծարակնոցի» հեղինակը, էջ 370-ձեռագիր շարականի մը համեմատ. Հոգեգալստեան «Առաքելոյ աշտունոյն» կուտայ Օձնեցի հայրապետին: Առաջ հոգեգալստը միայն կիրակի օր կը տօնէին, բայց Ծնորհալին որդւոցն 8 օր կատարուի Պենտէկոսէն՝ նոյն օրերու շարականներն ալ գրելով:

Լատինական եկեղեցւոյ մէջ ալ այսպէս էր. նախապէս մէկ օր, իսկ Ը. դարէն ետք որոշուեցաւ ութ օր կատարել Ծնորհալը մինչև հիմա: մէկ օր կը կատարեն այս տօնը:

62. «Առաքելոյ աղաւնոցի» մէջ կը վարդապետուի թէ Հոգին Ս. Աղանակերպ երկինքէն կիջնայ մեծածայն հնչումով ու պայծառափալ լուսով աշակերտները անկիւղելիօրէն կը հրաղինէ: «Կենդանարար Աստուածը մասնաւորապէս կոչում է Կ. Պօլսոյ ժողովին հանգանակին ընդդէմ հոգեմարտներու որ Ս. Հոգին Տէր և Կենդանարար չէին համարեր: Հոգին Սուրբ մարդասէր կը կոչուի. որովհետեւ Սուրբ Հոգին բարութիւն ըլլալով՝ կ'ախորժի մարդոց հետ ապրիլ իբրեւ մարդընտել աղանի՝ զանոնք իր պարզեցնելով շնորհազարդելու համար: Նոյն վարդապետութիւնը հարցին և իր սարօքին մէջ:

Ա. օրուան ճաշուն միայն Օձնեցւոյն չէ, թէ լեզուով և թէ վարդապետութեամբ: Կերևայ որ ԺԲ ու ԺԳ դարերուն լոյն և լատին հայ – եկեղեցւոյ հետ ունեցած վէճին առթիւ:

Երգուած է: Բռնահ խօսք կայ, «որ ի հայրաւոր (սխալ է հայրաւոր կամ լարաւոր գրել, հայրաւոր է, որովհետեւ վարդապետութեան մը ցոլացումն է) ի յաղէէն լառաջ Բռնահ անհատաբար ի յորդոյ տիրապէս Ս. Հոգին, այսօր ի յերկնից աստիկ հեղեալ ի դասս առաքելոցն լցուցի՝ բոլորից»։ Այս ճաշուն համակ ստորագելիք մըն է Ս. Հոգւոյն, և աստուածաբանական սրբութիւններ կը պարունակէ:

63. Սահակ վրդ. Ամատունի «Արարատ» ամսաթերթի 1894, էջ 120—127. Օձնեցւոյն կուտայ բանասիրական ապացոյցներով ալժմ Ծարակնոցի մէջ չերգուած, բայց ձեռագիրներու մէջ միայն իր գոյութիւնը պահած «Անթառամ սիրոյ ծնունդը սիրեալը» վարդանանց օրհնութիւնը որ «Նորահայն» առաջ կերգուէր անշուշտ:

64. Գաւթի շարականին մէջ երգիչը կողմորի անոր քաջութենէն, զայն կը ներկայացնէ իբրեւ լաղթող Գողթիթի: Գաւթի կը ներկայացնէ իբրեւ օրինակ զղջման իր սաղմոսներով, բայց Եբրեւ Բարեբա և յիշէ: Ստեփաննոսի շարականին մէջ կը խնդրուի ներում քարկոծողներուն համար: Որդիք որոտման ըստ աւանդութեան կը համարուին Քրիստոսի սիրելիներն ու իր քարոզութեանց գրի առնողները: Ասոնք ներկայ էին Այլակերպութեան և Քրիստոսի միւս հրաշքներուն: Օձնեցին զանոնք կը ներկայացնէ Քրիստոսի քով իբրեւ յորդաներ:

65. Կրօնական բանաստեղծութեան մէջ եղական երեւոյթ մըն է այս դարուն իդական սեռին ներկայութիւնը: Ստեփաննոս Սիւնեցւոյն քայրն էր Սահակաւոր, բանաստեղծուհի ու երաժիշտ միանգամայն, որ մենարանին դրան առջև ձգուած վարագուրին ետեւէն կ'եղանակէր ու կը սովորեցնէր: Իրեն կընծայուին կցորդներ ու մեղեդիներ, որոնց մէկն է «Մբբուհի Մարիամ» իր անունով յօրինուած: Կուտական մատամբ կուտած բանաստեղծական քնարի մը թելերն հիշեցուց նաև այս դարու մէջերը Սահակաւոր, որու երգերէն մնացած է միայն «Ջարմանալի է ինձ» վահան Գողթնացւոյն ողբանուագ շարականը: Խոսքով իդուլտ վահանի քայրն էր:

66. Թ. դարուն թէև ճօխ եկեղեցական մատենագրութիւն մ'ունեցանք, բայց կրօնական բանաստեղծութիւնն իր թռիչքները ծրարած կերևալ: Աւելի հայ. եկեղեցւոյ Միսրոպայ լաւե-

լուսածններով կամ փոփոխութիւններով զբաղած էին, ինչպէս Մաշտոց կաթողիկոսը:

67. Նախորդ Ը. Թ. ու լաջորդ Ժ. ԺԱ. ու ԺԲ. դարերու հայ մատենագրութիւնն Արաբականին ազդեցութեան ենթարկուեցաւ: Արաբացիները զօրանալով Ը. դարուն հաստատեցին իրենց տիրապետութիւնը հայոց վրայ ալ, որով հայոց մտաւոր կեանքը մտաւ նոր պայմաններու մէջ և սկսաւ զարգանալ արաբական կրթութեան ազդեցութեան տակ, ուստի ալ շրջանը կոչուեցաւ Արաբական: Այս պարագային հայոց կեանքի մէջ լառաջ բերող հանգամանքներն են Ա. հայերն որ մինչև այն ատեն արեւելեան կողմը պարսից և արեւմտեան կողմն ալ լոյներուն լծին տակն էին, այս շրջանին ինկան մէկ ուրիշ, բոլորովին նոր, աւելի զօրեղ ազգի մ' իշխանութեան տակ, որուն հետ բոլորովին ծանօթութիւն չունէին:

Հայերն անծանօթ էին ոչ միայն նոր ազգին կրօնին ու լեզուին, ալ նաև նոյն իսկ բարքին ու սովորութեանց, քաղաքական կարգին ու կանոններու: Բայց արաբացիներն իբրեւ թարմ աղբ մը կանուխ զարգացած ու լառաջդիմած էին: Անոնք կրցան տիրել ազգերու վրայ, ոչ միայն զէնքի զօրութեամբ, ալ և կրթութեամբ ու լուսաւորութեամբ: Ասոնց աւսումնարանները լեցուած էին իրենց հպատակներով որ կ'էմբռնէին մինչև իսկ Բիւզանդական դպրոցներու հետ: Արաբացիները կրօնքով մահմետական էին, որ կը քարոզէր աշխարհային հրապուրիչ կեանք, կը խոստանար հարստութիւն, մեծութիւն փառք անոնց որ կ'ընդունէին այս նոր կրօնքը: Հայերն որ այնքան երկար ատեն կուտած և կրօնքի համար այնքան արիւն թափած էին, վերստին ոգևորեցան եռանդով:

68. Այս նոր ոգևորութիւնը պատճառ եղաւ որ Հայոց մէջ արմատանայ կրօնական կեանքը և նոր հայեացք աշխարհային ոչնչութեան վրայ: Այս պարագան պաշարեց ամենուն մ' տքլ և երբ Արաբացիները տիրեցին հայոց, աշխատեցան զայն պաշտպանել իրենց իշխանութեան տակ: Այդ նպատակին հասնելու համար, անոնք զիմեցին ևս քաղաքական միջոցներու, նախ հայերն ազատել Բիւզանդական ազդեցութենէ, որպէսզի իբրև կրօնակից չմիաբանին Յունաց հետ և իրենց զօրութիւնը չտկարանայ ու երկրորդ՝ աշխատեցան ցեղերը իրարմէ բաժնել՝ երկպառակութիւն ձգելով անոնց մէջ, իրա-

բու հետ կռուեցնել տալով, մէկուն իշխանութեան, միւսին փառք, որով ընդհանուր շահերը կը բաժանուէին, կ'անջատուէին և կը դառնային մասնաւորի: Արաբական այս քաղաքականութիւնն էր որ լառաջ բերաւ Բագրատունիները, Սիւնիք, Արծունիներն ու Կարուցը: Արաբացիները հարկ կ'առնէին ալդ իւրաքանչիւրէն, և ալդ իւրաքանչիւրներն ալ իրաւունք ունէր պահել և հարկ առնել ժողովրդէն: Ուրեմն ասոնք այնքան հարկ պիտի առնէին՝ որ կարենային վճարել Արաբացիներուն հարկը և որ բաւական ըլլար իրենց վարչական ծախքերուն: Հակառակ այս ամենուն, Հայոց կեանքը բնաւ վնաս չկրեց, ալ աւելի լառաջ գնաց, որովհետեւ իւրաքանչիւրը կաշխատէր պահպանել իր ժողովուրդը, բարեկարգ վիճակի մէջ:

69. Որչափ որ երկրի մը մէջ շատ ըլլային կեդրոնները, այնքան շատ կը ծաղկի ալդ երկիրը և լառաջ կ'երթայ և ժողովուրդը կը հարստանայ: Այսպէս լառաջ կուգար երկրի մէջ ընդհանուր մրցում մը, որով շինուեցաւ հիւրանոցներ, ասպնջական տուներ. երկրին ներքին հաղորդակցութիւնը դիւրացան որով կը բացուէր երկրի հարստութեան, վաճառականութեան և հողագործութեան ճամբան: Այդ շինութեանց աւերակները որոնք մնացած են մինչև մեր օրերը, ցոյց կուտան այն ատենուալ ժողովրդի հարստութիւնը: Բոլոր ալդ մեծագործութեանց մէջ առաջին տեղը կը գրաւէին վանքերն որոնց ապահովութեան համար՝ իւրաքանչիւր աւատապետ գեղեր, ագարակներ և ուրիշ զանազան կալուածներ կը լատկացնէր: Վանքերը շատանալով՝ կրօնաւորներու թիւն ալ աճեցաւ:

Կրօնաւորները կը բաժանուէին երկու կարգի, ա. ճէնտարէր որ իրենց օրերը կ'անցնէին օրհնութեամբ ու պահքով և բ. յայեթի հոգեւորականներ որ բացի սոյն պարապմունքէն, ունէին ուրիշ գործ ալ, այն է՝ ուսման ու գիտութեան պարապել և իրենց ձեռքը պահել հասարակաց կրթութիւնը: Անոնց մէ իւրաքանչիւրն ուսումնական կենտրոն մըն էր: Եւ որովհետեւ ապահով վիճակ ու հարստութիւն ունէին, իւրաքանչիւր վանք ունէր ուսումնարան մը ուր կը հաւաքուէին շրջականերու ալն անձերն որ փափագ ունէին ուսման, կը սովորէին նոյն վանքին մէջ՝ ընդունելով հոգևոր կոչում և կամ կ'աւարտէին իրենց դասընթացը և կ'մտնէին աշխարհական կեանքի մէջ: Այսպիսի վանքերու մէջ նշանաւոր էին Հոռոմոսի վանքը:

Ախուրեան գետի վրայ, Անիի մօտ, Տաթևի վանք, Սիւնեաց մէջ, Հաղբոս ու Ստեփան Գուգարաց մէջ, և Նախիչեան վանք Ուշտունեաց մէջ:

Ժ. Իսորու Մայրավանքերն, ուսման կենտրոններն էին Հաղբոսի վանք, Կարմիր վանք, Մարտոշէ մանաւանդ Նախիչեան վանք: Այս վերջինն Անանիա Նարեկացւոյն օրով որ այս վանքին վանահայրն էր, մեծ փառք ստացաւ:

70. Ժ. դարու միակ երգիչն է Գրիգոր Նարեկացի: Թէ և այս դարուն Ստեփանոս Տարօնցի պատմագիրն Առաքել Կոշւած է երաժշտական արուեստին հմուտ ըլլալուն համար, բայց իբրեւ հեղինակ Շարականներու և Տաղերու չի լինուիր:

Անանիա Նարեկացւոյն խնամքին, Նարեկաց վանքը յանձնուեցաւ Խոսրով Անձևացեաց եպիսկոպոսին որդին Գրիգոր որ շատ կանուխէն իրեն վրայ փառքեցուց կեանքի սրբութիւն, հանձար ու գիտութիւն, և քիչ ատենէն իր ժամանակին անուանի եկեղեցականներէն մէկն եղաւ: Այս պատճառով եղաւ որ շարժէր (972—992) նախանձն ապիրատներու և տգէտներու, որ մինչև անգամ դադին Խաչիկ կաթողիկոսին առջև ամբաստանութիւն ընկու Նարեկացւոյն նկատմամբ:

Բայց սուրբն անխռով շարունակեց իր ներանձնական կեանքը, բաղմամբիւ երկասիրութիւններ յօրինելով՝ որոնց մէջ առաջին տեղը կը բռնէ Աղօթք կամ Նորէ հոգեւորնչ գործը. անհամեմատ գերազանց քան ուրիշ երկասիրութիւններ՝ թէ ազգային և թէ օտար հեղինակներու այս օրինակ դրուածքներու մէջ: Նարեկն ալ թէև հայոց կրօնական բանաստեղծութեան ընտիր գոհարներէն է, բայց երգ, շարական չըլլալուն՝ զանց կընենք խօսիլ անով վրայ: Նարեկացւոյն ոճն որչափ որ ալ ասիական հռոմաքանութիւն մ'ունի, սակայն և այնպէս հայերէն լեզուի բնատալ կորովն ու վայելչախօս, առնական առողջութիւնն իր նուիրական գրուածքներուն մէջ խիտ առ խիտ պատկերացընելով վսեմ իմաստներու հետ՝ միշտ բարձրագոյն տեղ մը պիտի գրաւէ: Հայ մատենագրութեան մէջ մանաւանդ իբրեւ հարազատ ծնունդ ստեղծական մտքի ու խանդավառ զեղումներ գգալուն և ազնիւ սրբի:

Նարեկացւոյն անունով շարական չկալ, ալ տաղեր: Քնարական բանաստեղծութեան մէկ սեռը կը կազմեն Տաղերը՝ ինչպէս ըսած ենք: Շատ տաղերու հեղինակները մեղի լայտ-

նի չեն, առաջին հեղինակը կը համարուի Մ. Խորենացի, որուն տաղերը դարերու ընթացքին մէջ ժողովրդականութիւն գտնելով՝ զանազան փոփոխութիւններ կրած են, կամ եթէ ոչ, պէտք է ենթադրել թէ ալդ երգերը որպէս զի դիւրաւ տարածուին, անոր վերագրած են, ինչպէս. Մանգեան տօնին Առաքել: Ասոր հակառակ ալ տաղեր որ թէև ժողովրդական բանահիւսութեան մասը կը կազմեն, բայց մտած են միջնադարեան տաղարաններու մէջ: Ժ. դարէն սկսեալ ժողովրդական բանահիւսութեան մնացորդներ կարելի է գտնել նախնեաց ձեռագիրներու մէջ:

71. Գրիգոր Նարեկացի իր տաղերով ու զանձերով, Մազիստոս, Շնորհալի [Շարականներու հոգևոր երգեր գրող] Վարդան և մանաւանդ Միջնադարեան երգիչներն արժանի են ուշադրութեան ժողովրդական բանահիւսութեան տեսակէտով: Չուտ եկեղեցական վարդապետութիւնը չի կազմեր ատոնց ատաղձը, ալ ժողովրդի վարք ու բարքի, սովորութիւններու, անտախտաշատութեան նիւթեր: Միջինդարեան երգիչներն ընդհանրապէս ժողովրդական ոգով ու լեզուով կը հիւսէին իրենց երգերը: Անոնք ժողովրդական անձեր էին, ժողովրդին գաղափարով ու զգացումներով սնած: Ի՞նչ են Աւետիսները, եթէ ոչ ժողովրդի սովորութեան հետ կապուած հոգևոր երգեր Գրիստոսի ծննդեան մասին, երբեմն նոյն իսկ բովանդակութեամբ և աւանդութիւններով չարեմման ժողովրդական երգերուն: Թէ գրական և թէ ժողովրդական աւետիսները կը պատմեն կամ կը զրուատեն Գրիստոսի ծնունդն ու մկրտութիւնը, կ'օրհնեն մտած տուններին կամ ընտանիքներին, և նուէր կուզեն: Բանահիւսութեան այս տեսակը զժախտաբար մեր բանահաւաքներու կողմէ առանձին ուշադրութեան արժանացած չէ: Հայոց ժողովրդական առակներու մէջ գայլը, արջը, աղուէսը, առիւծը, աղուաւը, կաքաւը սիրելի պատկերներ են մարդոց բնասիրութիւնը նկարագրելու կամ խրատ մը արտայայտելու համար: Այսպիսիներ տաղարաններու մէջ շատ կան, ինչպէս Գեղ մըն կայր նարեկ կասեն,—իւր աթոռն էր վարդապետին—անդ տանուտէր մի կայր,—իւր անունն Գորգի ձալնեն:

Խորենացւոյ անունով ծանօթ երգերէն ետք, չալտնի են. Գր. Նարեկացւոյ Տաղերն ու զանձերը որ կը վերաբերին

Քրիստոսի Տնօրինութեանց, աշխնքն Քրիստոսի Ծննդեան, Յայտնութեան, Յարութեան, Համբարձման ու Վարդավառութեան, Աստուծոյ զատ Նարեկացին ունի Ղազարու Քարութեան, հոգոյն Սրբոյ գայտեան և եկեղեցւոյ տօներուն վրայ տաղեր:

72. Յայտնութեան տաղն որ սովորաբար «Աւետիս» կը կոչուի, կը բովանդակէ հովիւներու աւետիսը: Այսպիսի աւետիսներ ունին Ներսէս Ծնորհալի, Գրիգոր Աղթամարցի, Առաքել Սիւնեցի և ուրիշներ, որոնց մէջ վերջին հեղինակն է Ղազար ճանկեցիին որ ծանօթ է իր «Ղամբարափայլ» ով: Այս ամէնուն մէջ տարօրինակ է Նարեկացւոյն (աւետիսը): Ղախ ձևով շատ տարբեր է անոնցմէ, սովորաբար բոլոր աւետիսներու մէջ կը լինուի Քրիստոսի կեանքէն մաս մը և իւրաքանչիւր տող կը վերջանայ «աւետիսով», իսկ Նարեկացիին ընդհակառակը կ'սկսի «աւետիս»ով և յետոյ իր միտքը կը լստանէ քանի մը տողերով: Բ. տարբերութիւնը կը կազմէ լեզուն, ոճը: Աւետիսները միծ մասամբ ժողովրդին համար ըլլալով պարզ ու անպաճոյճ կը գրուէին, մինչ Նարեկացւոյն «աւետիսը» խրթին ոճ ունի: Եւ Գ. բառերու կամ խօսքերու խրթնութեան հետ կը կցուին նաև բանաստեղծական տարօրինակութիւններ:

73. Նարեկացւոյն «աւետիսը» կարելի է բաժնել 4 մասի, Ա. ի մէջ ներքող Աստուածամօր, որուն իր գրիչը կը խտկանէ վսեմ ստորոգելիքներ, «Հուպ երբակին, լոյս գերազանց, լուսոյն արիի վեհնաճեմ, շողշողենի, փողփողենի էջ մանրահեղեղ, գաղտնի շաւիղ անծանօթի ճանապարհին»: Բ. մէջ ծաղիկներուն և ծառերուն «աւետիս» կուտայ և անոնց ալ կը հաղորդէ Քրիստոսի Ծննդեան ուրախառիթ լուրը: Գ. ի մէջ ջուրերու և աղբիւրներու ցնծութիւնը կը լինէ և անոնց ալ «աւետիս» կուտայ Յորդանանու անունով: Եւ Դ. «աւետիս» կուտայ լեռներուն իբրև սկիզբն ջրերու:

Սոյն տաղերու հետ աղերս ունին Ծննդեան չորս տաղերն որ թէև երևութապէս առհասարակ բնութեան մօտ են, բայց աղոյք Քրիստոսի ծննդեան ալլաբանութիւններն են, ինչպէս «Նրգ զարմանալի», որուն մէջ Նարեկացին կը գովէ կը դրուատէ Քրիստոսը, իբրև ամենէն գեղեցիկ պատկեր անոր դէմքը կը նկարագրէ, նուրբ լոնքերն իբրև իրարու կցուած կամար:

«աչքն ծով իծով ծիծաղախտ», երկու փայլակաձև արեգակի նման, նռնենի աչտերը, կալառութեան, երկթերթեան բերանը, որուն շրթունքներէն վարդ կը կաթէ, վարսերն որոնք եռահիսակ բոլորուած են աչտերու շուրջը: Գեղեցիկ պատմութեանները, թանկագին աղնիւ գօտին, նազելի շարժումը որ իւրաքանչիւր քայլափոխի շողեր կը կաթկթեն փայլերէն ելլել: Թէև այս «Նրգ զարմանալի» բառական աղաւաղումներ կրած է, սակայն և այնպէս կը փայլեցնէ Նարեկացւոյն բանաստեղծական ճաշակը: Սոյն երգին մէջ կը պատահենք բառերու որոնք օտար կամ գաւառական ըլլալուն, իմաստն ուղիղ ու ճիշտ չի հասկցուիր, ինչպէս Կիճէճ, Կիճէճ, Բառի Բերան, Բառի ճաղ, պատիճաղ, Բառի, խաղի խեղեփին հաղրել:

«Փառք Քրիստոսի ամենագօր Յարութեան» տաղն երկու մասէ կը բաղկանայ: Առաջինը բոլորովին կրօնական է, Բ. կ'սկսի Աստուածեալին խօսքէն, կրօնի վերաբերեալ բան մը չկայ, «Խաչանման» բառէն զատ: Այս երգը կը պատկերացնէ հայոց մէջ Քրիստոնէութեան տարածումը. իսկ Վարդավառի տաղը գովեստ է բնութեան գեղեցկութեանց կամ վարդին, շուշանին, ծաղիկներու, ծառերուն ելլելու Որոնց մէջ երգիչն ալլաբանօրէն կը ներկայացնէ Քրիստոսի պայծառակերպութիւնը:

Յարութեան տաղի մէջ նկարագրուած է սալ մը որ կանգնած է Մասիսի աջ կողմը, անոր վրա կան աթոռք, գոհարք, ոսկեղէնք, բնիզք, ծիրանիք, անոր վրայ նստած է որդի արքայի, երկու կողմը կը դռնուին Սերովբէք և Քերովբէք: Առջեւն մանուկներ որոնք բռնած են խաչն Տէրունական, Սաղմոսարան և Քնար, անոր վրայ դրուած են հարկեր խուրձ խորշիճան, վեց կորնկան և մանուշակ մը, բայց սալը չի շարժիր, անոր վրայ լացնաթիկունք, անհագող, հաստաբազուկ ձորաղ ձալն կուտայ եզներուն, ձալն կուտայ աթոռակին, եզները, սե ու սպիտակ են, եզներ են խաչանման և մաղերն՝ հոլ մարգարիտ. այն ատեն սալը շարժում է տեղէն և ճռնշնալով՝ կը մոտէ Նրուսաղէմ, և նոր Սիոնի որդիները կը երգեն «Փառք Քրիստոսի, այսօր արձակեցար»:

Եթէ չըլլային անոր վերնագիրն և վերջը դրուած բացատրութիւնը, կարելի է ընդունել զայն իբրև հասարակ սալ: Ա մը նկարագրութիւնը, բայց վերնագիրը կը բացատրէ թէ

տաղը կ'երգէին Քրիստոսի Յարութեան տօներուն, իսկ բացատրութիւնը ցոյց կուտայ որ Սալլն ալլարանօրէն կը ներկայացնէ Քրիստոնէութիւնը հայոց մէջ որ պատճառ եղաւ հայոց արձակման հեթանոսական կապանքներէ: Այս երգին բովանդակութիւնը կ'երեւայ որ ժողովրդ. բանահիւսութեան կրօնական առասպել մըն է:

Նարեկացին Յարութեան ուրիշ տաղ մըն ալ ունի. «Ն՞ ձալն դառիւծուն ասեմ» ի մէջ կը նկարագրուի թէ ինչպէս սանդարամետը կը դողայ առիւծի ձալնէն զոր կը լսէ Քառաթիւի (=Սալլ) վրայէն: Սա պիտի քաշէր իր ամբողջութիւնները ու աղատէր դերիները: Սանդարամետը երանի կուտայ գերիներուն որոնք ինկան առիւծին: Քրիստոսի աւարի մէջ և չարչարանքի փոխանակ պիտի ընդունին պատիւ: Աս ալ թէ իմաստով կը համապատասխանէ Ս. Գրքի, բայց աւելի կրօնական աւանդութենէ մը առնուած է:

74. Վարդապետի տաղը մանաւանդ ճարտատանական ձևով առաջին տեղը կը գրաւէ, առաջին ձևը զոր Նարեկացին կը գործածէ՝ «Նարեկացի» օր. Սալլ, Առիւծ, Վարդ և Հուշան որոնք ոչ թէ իրենց իսկական իմաստով գրուած են, այլ փոխարեարար. Բ. ձևն ալ է Նարեկացի կամ Նարեկացի (— պարզ միտք մը փոխանակ երկու խօսքով պարզ ըսելու՝ կը խորթացնէ և բազմաբարդ բառերով) — կ'ըսէ օր.

«Գոհար վարդըն վառ առեալ

Ի վեհից վարդիցն արբենից.

Ի վեր ի վերալ վարդից

Ծաւալէր ծաղիկ ծովային»:

Միւս երգերը բնութեան հետ կապ չունին, այլ կը բովանդակեն աստուածութեան վերաբերեալ տեսական գաղափարներ: Այսպիսի երգերու մէջ Նարեկացին սրչափ երբեմն խրթին ու վսեմ միտքեր կը ցայտնէ, սնչափ խրթին ու վսեմ բառեր կը կերակրէ, այնպէս որ բնապանցական ու դժուար իմաց գաղափարները վերլուծելու համար՝ հարկ է նախ խորապատգիւ Նարեկացուն միտքի քակտութեան ծոցն և հասկնալ բառերու նշանակութիւնն ու ներքին կապը:

75. Թէև երբեմն նոյն իսկ բառերը մատչելի կերեան, բայց և այնպէս իմաստը մութ ու անհասկնալի կը մնայ: Այսպէս Նարեկացին ուղած է աստուածային գաղափարներու քըն-

նութիւնը քողարկեալ թողուլ: Զօրօրինակ, Նարեկացին փոխանակ ըսելու թէ Աստուած բոլոր երեւելի և աներևութ արարածներու Արարիչը լաւատենական և անժամանակ է, կըսէ «Էնէին անէին եղանի եղանակ եղելի՝ անեղն աներբից չաւտեանս անհաս իմանալի անկէտ ալժմուս հասու»: Այս նախադասութիւնը կազմուած է նոյնարմատ բառերու փոփոխութեամբ, որով իմաստին ու լեզուին տարօրինակ խրթնութիւն մը տուած է: Այդ խրթնութիւնները շատ անսովոր միջոցներով կազմուած են, ինչպէս վեհենաճեմ, պողինաւաւ, աւղիսինահոս, չերինաթինդ, մատենայօրէն, իջենագոյ, օղինատիպ, մաքրինաճեմ: Երկար բարդութիւններով անընդհատ շարադրութիւն, ինչպէս սաստկակակիծ, քրտնաքալակն էր համբերապատ մահին, օրհաս վաղաւէտ կանխասանման վճիռ համբերգայնոց տաւիղ, գալիլեազուարճք, ոստազուարճ, ձորձածածուկ, լանկարծանչեաց, հրահոսալտակ, խուռնամանուած, բոսորեմինաղարդեալ: Նոյնասկիզբ բառերու բարդութիւններ, ինչպէս գործանաբեր, գարնանաշարժ, զաղէտ աղէտակոծ սրտի, վէմ վիմակառոց, վիմալուր, մաքրող մաքրինաճեմ և այլն:

76. Գրիգոր Նարեկացուց ոճի չափութիւններն են ա. բազմալանկ բառերու անընդհատ գործածութիւն, ինչպէս «Լայնաթիկունք, ծաղկախաչտուցի, ընթացականք»։ բ. Անսովոր բարդութիւններ, ինչպէս տեսանք. գ. Նոյնահնչուն տառերով սկսուող բառերու ստէպ գործածութիւն, ինչպէս «Ի ծոց ծոցի ծաղունն անուն»։ «Կուսէն ծնեալ ծոցոյ ծաղիկ, ծաղիկ ծոցոյ ծոց հայրենիս»։ դ. Անհասկնալի բառերու գործածութիւն, ինչպէս տեսանք նաև և ե. Աչխարհաբար նմանութիւն, ինչպէս փոկեր շարած ծամեր, այդ սասու տոտախ ծառերդ, այն հովէն և այլն:

Նարեկացուն գրածքներն առհասարակ լի են շրջաբանութիւններով ու խրթնաբանութիւններով, ինչպէս կը պահանջէր դարու հոգին արաբական ազդեցութեան տակ:

Ժամերգութենէ դուրս գանձեր ալ ունի Նարեկացին: Անշուշտ ասոնք ատեն մը ժամակարգութեան մասը կը կազմէին: Նարեկացին ունի երեք գանձ, «Ի գալուստ Ս. Հոգւոյն», «Ի Ս. Եկեղեցի» և «Ի Ս. խաչն Աստուածընկալ»: Ասոնք արուեստական ձև ունին և յօրինուած են «Գրիգորի երգ» վեր:

առաւելեալ: Բովանդակութեան տեսակէտով ատոնք առհասարակ բացատրութիւն են նշանակուած օրուան խորհուրդներուն:

77. ԺԱ. դարը ուր նշանաւոր էին Հաղբատ ու Սանահին վանքերը, բաւական ճոխ է Շարականներու հեղինակներով: Ռամկօրէն լեզուն կամ աշխարհաբառը բաւական ընդարձակած էր իր սահմանը, այդ լեզուով գրուեցան առակաները տաղերը, մշակութեան ու բժշկութեան գրքերը, մանաւանդ հրապարակական արձանագրութիւններն, անտարակոյս նաև նամակներն և այլն: մինչ գրաբարն իբրև գիտուններու լեզու մնաց ճառերու, շարականներու և ուրիշ քերթուածներու մէջ:

78. ԺԱ. դարու շարականագէտ հեղինակներէն են Գրիգոր Մագիստրոս ու Պետրոս Գետաղարծ կաթողիկոս: Գրիգոր Մագիստրոս գրած է «Ձորս ըստ պատկերի» խաչի Ե. օրուան «սղորմեան»: Ոմանք Բագրատունի Աշոտին կը վերագրեն որ 400 տարի առաջ էր Գրիգոր Մագիստրոսէն: «Ձորս ըստ պատկերի» իմաստի կողմէ ալ բաւական վէճի նիւթ եղած է: որովհետև «կ'ցոյց տուի ծառայի ք» զոր ի Հռոմայ գահիցն վերապատուեցեր» ալ և ալ մեկնութեանց տեղի տուած է: Ոմանք այս խօսքը Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամի համար է կրօնն, որ նախ Կ. Պոլսոյ կալստէն մեծարուելով իբրև լաջորդ հօր իշխանութեան, չեղած կաթողիկոս ըլլալով Հռոմի պապէն սիրոյ թուղթ ընդունեց: Կան ալ որ իրեն Մագիստրոսի համար է, կրօնն, որ Կ. Պոլսի նոր Հռոմի կալսեբական արքունիքէն Մագիստրութեան պատիւ ընդունեցաւ: Ուրիշներ ալ ըստ Վարդան պատմագրի՝ կրօնն թէ Բագրատունի Աշոտին՝ Փրկչի պատկերին անուանով շինուած եկեղեցւոյն համար է զոր իր համանուն որդին արեւմուտքէն բերած էր:

79. Պետրոս Ա. «Գետաղարծ» կաթողիկոս (1019—1058) որ Անանիա կաթողիկոսի (943—965) Քեռորդին, Խաչիկ Ա. կաթողիկոսին (972—992) եղբայրն ու Խաչիկ Բ-ին (1058—1064) քեռին էր: Այսպէս չրջան մը կաթողիկոսութիւնը «Գետաղարծի» ընտանիքին ձեռքին մէջ մնաց: Իր հայրապետական իշխանութեան միջոցին ըրած սխալները վարագործելով՝ մէջ բերինք իր արձանագրած մէկ խոստովանութիւնն, ուր ինք կը լիշէ Ծիծեռնակի օրինակն որ զարուն կը բերէ, բայց

անիկա չի դուրսանար աշխարհային բնութեան պարզեան զարնան վախճանութիւններով, անոր հաճելի է «հոգւոյ ակամբ տեսանել զգարուն հոգւոյ, յորժամ սառնասառուց բնութիւնս այս սկսանի ընծիւղիլ ի ծագմանէ արեգական արդարութեան»:

որպէս զի ջշուաւ: «Գետաղարծ և զուարճացեալ ճառագայթիւք բանին, Գետաղարծ լեզուի Զոր խաղացեալ է ի ծանոյս յաւիտեան, և արժանաւորագէտ է ծանոս զպարտաւորս իւր, սաղարթալից բնակեցուք ի տան ճեառն»: Գետաղարծ կաթողիկոսի այսպիսի վսեմ փափագը պտուղ է իսկապէս անոր դառն փորձերուն ու տարածամեալ գիտակցութեան: Բայց անիկա շատ ուշ զգացումներն ու խոստովանութիւնը գեղեցիկ կերպով գրոշմեց իր ողբից շարականներու մէջ (հմտ. Կ. կոստանեանց «Տ. Պետրոս Ա. Գետաղարծ» էջմիածին, 1897, էջ 46—47):

Երեք խումբի կը բաժնուին Գետաղարծի յօրինած Շարականները, Մարիտրոսաց, Ննջեցելոց և Մանկունք կոչուածները: Մակայն այդ երեք խմբի շարականները բոլորն ալ Գետաղարծին չեն, որովհետև նախ՝ նոյն խմբերու մէջէն դարձեալ այդ դարու հեղինակ Սարգիս Սեանցլոյն երգած «Սարնափելի որոտմամբ և ահագին զօրութեամբ» և Յակոբ Սանահնեցւոյն «Յանսկզբնական ծոցոյ հօր խոնարհեալ բանդ» շարականները, երկրորդ՝ ոճի ու բառի տեսակէտով կը տարբերին ատոնք: Պետրոս Գետաղարծի յօրինած հոգևոր երգերու մէջ կ'երևան նուրբ ճաշակ, վսեմ գաղափարը ու իր հոգեկան վիճակի բնական արտայայտութիւնը: *

Գետաղարծ հայրապետն որ ունէր ցեղական ճոխութիւն, հինգ հարիւր գեղ ու առատ գանձեր, որ իբրև հոգևոր տէր ոչ միայն հինգ հարիւր գաւառատեսուչ եպիսկոպոսներ ունէր ձեռքի տակ, այլ և ամբողջ հայոց կապողն ու արձակողն էր: Կամ ըստ Գր. Մագիստրոսի, իբրև «Սուրբ հայրապետ բացող մեղ դրանն արքայութեան», երբ ամէն բան կորսնցուց, իրաւունք ունէր երկարօրէն մտածելով՝ իմաստունին նման բացազանչելու «ունայնութիւն ունայնութեանց»: Այդ միտքն իր ձեռով, իր աստիճանին ու կոչման համեմատ ամփոփուած այնպիսի հոգևոր երգի մէջ որ ամեն ատեն ու անդադար կը հնչէ Հայ. եկեղեցւոյ մէջ իբր իրաւո ամենուն, «Ուրիշ էղեալս տակաւնայն, գեղեցիկաբարմար շինուածոյս քակտումն. իմաստունս յեմբեցայ, ի չալեաց մեղաց յոր ընկղմեցայ, և այժմ արաչեմ ըզ-

* Գրիգոր արք. ոչ ի շարական գրած է, մանաւանդ Մարիտրոսաց և Հանգստեան շարականներէն, որի հիւսիսէն Գետաղարծի շարականները:

Ստեղծողը ամենից, ընչալ և հանգստի զերծարեալ հոգին յեօթնասուրբութեան շնորհիւ խորան» և այլն. Հեռաւոր պանդխտութեան մէջ կարօտ իր հօրենական հաճելի վիշտակներուն, բաշագանչեց. «Պաշտեցաւ, յաղթփռեց, և զիս Քուրբ զկէսն ուշադէմ. և մարմին ունայնութեան դարձաւ ի հող ուստի ստեղծաւ, ուստի կաղթէ առ Աստուած «յիս վարդապետեան, բաղմագութ փրկիչ, և փառանքս զցաւս անձին իմոյ»:

Տասն և չորս տարի շարունակ խղճարութեան մէջ, զղջման և ապաշաւանքի կիրքերով յուզուած՝ անոր սիրտը կը բաբախէր միայն մահուան ակնկալութեամբ որուն սարսափները զինք պաշարած էին: Գետադարձ կը տեսնէ իր ոչնչութիւնն Աստուծոյ ահաւոր մեծութեան դատաստանին առջեւ, երբ «Ատեանն զնի և զպրովունք հրաշիցն բանին և դատաւորն անհղ յակնարկել իւր չարարածս՝ հատուցանէ վարձս ըստ գործոց իւրաքանչիւրոցն»:

Դատողի արդարութեան ու գթութեան պատկերը միանգամայն անոր առջև կը պատկերանայ «Արշողն եհաս վերին կոչողին, կոչնատէր անհղ, կոչողն ահաւոր, դատաւորն անաչառ, դատաստանն արդար, հրեշտակք անողորմ դատին զմեղաւորս»: Ինքն իր սխալը խոստովանող և ճշմարտապէս զղջաց որ իմաստուն քրիստոնեաներէն մէկը կերակայ այս երգերուն մէջ. Գետադարձի շարականներէն այս հատուածներն չառաջ բերելով կարելի է գաղափար կազմել թէ ինչպիսի հոգի սիրտ ու հոգի կը բնակէր անոր մէջ. Այդ մարդուն սխալանքը ժամանակին վատթար ազդեցութեան հետեանք չի կրնար նկատուիլ:

Գետադարձ կը հանգչի Սեբաստիոյ Ս. Նշան վանքը:

80. ԺԲ. դարէն սկսեալ հայոց բանահիւսութիւնը նոր շրջան մը կսկսի, որ կը կոչուի վաղեմի և կը տեսնուի ԺԲ—ԺԷ դարը:

Այդ շրջանի բանահիւսութիւնը բոլորովին կը տարբերի նախնեցեան թէ իր ձևով, թէ բովանդակութեամբ և թէ բարբառով:

Ինչ է տարբերութեան պատճառը և որոնք են տարբերութիւնները: Մինչև ԺԲ. դարը հայերը կապրէին իրենց սոփորութիւններով իրենց օրէնքներով, ունէին իրենց խառնակ տէրերն որոնք թէպէտ և արարացուց հարկատու, բայց և այնպէս ներքին կառավարութեամբ բոլորովին անկախ էին:

այդ ազեկամի տոհմապետներու հովանաւորութեան տակ կը բազմանային լուսաւորութեան կեդրոնները՝ վանքերը, որոնք ապահոված ըլլալով տոհմապետներու ընծայած կալուածներով՝ իրենք զիրենք նուիրեցին միայն գրականութեան: Մինչև ԺԲ. դարը հայերը կը կազմէին իրենց ծննդավայրին մէջ՝ զօրեղ տարր մը, զօրեղ բազմութիւն մը, աւանդաբար միեւնոյն հողի վրայ ծնած և ունեւած բազմութիւն դարերու ընթացքի մէջ: ԺԲ. դարէն ետք, այդ հանգամանքներն որոնք մեծ ազդեցութիւն ունէին Բանահիւսութեան վրայ, կը փոխուէին՝ փոխելով նաև իրենց հետ և բանահիւսութեան բնաւորութիւնը: ԺԱ. դարէն սկսած Յունաց խարդախութիւնները վերջ կուտան տոհմապետներու ճոխութեանց, հայերը այլ ևս վարչական մարմին չեն կազմեր, կը փոխուի կառավարութիւնը, կը փոխուին օրէնքները, կսկսին չաճախել զանազան նախնական ազգերու արչաւանքները՝ ինչպէս սելճուկեանց, թաթարներու որոնք բոլորովին տակն ու վրայ կընէին, կը քանդէին, կը կործանէին հին սրբութիւններն և լուսաւորութեան կեդրոնները: անխնայ կը խորտակէին, կաւերէին ճարտարապետական փառաւոր յիշատակները և կը խլէին նոյն իսկ կեանքի ապահովութիւնը: Հայերն այդ հանգամանքներու երեսէն կը սկսին թողուլ իրենց ծննդավայրը և թափառել կեանքի վրա՝ տանգներէն ազատելու համար: Անոնք կը գաղթեն զանազան երկիրներ՝ Ռուսաստան, Լեհաստան, Անատոլիա, Ալիլիկիա և այլն: Այսպէս անոնց տեղ հետզհետէ բուն կը դնեն նախնական վիճակ ունեցող սելճուկներն և թաթարները, որոնք խառն ի խառն կապրէին հայերու հետ, փոխելով մասամբ անոնց կեանքի պայմանները, սովորութիւնները և այլն: Իսկ զաղթական հայերը խմբուելով զանազան երկիրներու մէջ, իրենք կը չարմարէին տեղական հանգամանքներու, իրենք աւելի փոքրաթիւ ըլլալով կիլիկիայի իրենցմէ զօրեղ տարրերու ազդեցութեան տակ: Ար փոխուին առաջուան օրէնքները, սովորութիւնները, կառավարութիւնները և այլն: Անոնք այդ օտար երկիրներուն մէջ կը կազմեն նաև կրթութեան նոր կեդրոններ, որոնք նոյնպէս օտարներու ազդեցութեան տակ էին: Այն հայերը, որոնք Ալիլիկիոյ բարձունքը հաստատուած էին, հանդիպեցան արեւմտ. Եւրոպայի ազգերուն, որոնք ալ ժամանակներն Եւրոպայէն կը գիմէին զէպի արեւելք խաչակա-

բաց արշաւանքներու պատճառով և կը նուաճէին Պաղեստինը, և Կիւիկիայի մօտակայ երկիրները, ուր նաեւ կը կազմէին քանի մ'առաքելական իշխանութիւններ: Այդ իշխանութիւններն այնքան ազդեցութիւն կունենան հայոց վրայ որ մինչև անգամ Լեոններ իրենց տունն անոնց նմանութեամբ կը կազմակերպեն և շատ սովորութիւններ փոխ կառնեն անոնցմէ: Հայոց եկեղեցականներն ևս իրեն հօտի հետ գաղթած էին Կիւիկիա. անոնք կսկսին լատիններու նման վանական միաբանութիւններ և քանի մը կարգերու սովորութիւններ փոխ առնել անոնցմէ, այդ վանական միաբանութիւնները զանազան արտօնութիւններ և կալուածներ ստանալով՝ կապահովեն իրենց վիճակը և կը նուիրեն Գրականութեան և Ուսման: Կը ծաղկի ատոնց մէջ քրիստոնէական ուսումն և կրթութիւնը: այնպէս որ այդ վանքերէ խրաքանչիւրը մէկ մէկ պատուար կը դառնայ դրացի աշակերտներու դէմ: Այդ վանքերէն կելլեն նշանաւոր հեղինակներն ու կաթողիկոսները:

81. Կիւիկիայի վանքերէն նշանաւորներն են Սէ-Լէրան վանքը (Կարմիր վանքը), Հոմօլէ, Գրադալէ վանքը ևայլն: Արեւելեան հայոց մէջ ալ հետզհետէ կը նորոգուին քանդուած վանքերը կամ նորերը կը շինուին, որոնց մէջ նոյնպէս կը սկսի ծաղկիլ Գրականութիւնը: Այդպիսի վանքերէ նշանաւոր են Հաղբատու, Սանահնայ, Տաթևու, Ս. Թադէի և Նրդըն-կայի Ս. Լուսաւորչի վանքերը: ԺԲ. դարէն ետքը հայոց ուսման և կրթութեան գործը միմիայն այդ վանքերուն մէջ կը պահուի և այն ալ բացառապէս հոգևորականներու ձեռքով: այդ պատճառաւ ալ այդ շրջանը (ԺԲ.—ԺԷ.) կը կոչուի վանական:

82. Վանական շրջանի բանահիւսութեան տարբերութիւնը նախընթացէն կարելի է որոշել՝ ուշադրութիւն դարձնելով նախ՝ բովանդակութեան վերայ, երկրորդ՝ ձևի վերայ և երրորդ՝ բառերի վրայ: Նախընթաց շրջաններուն մէջ բանաստեղծութեան բովանդակութիւնը միակերպ է և այն ալ միմիայն կրօնական, իսկ վանական շրջանի մէջ անոր բովանդակութիւնը բազմակերպ է, կրօնականի հետ միասին հանդէս կուզան վիպական երգեր, աշխարհական կեանքէ, կեանքի ալ և ալ դէպքերու ողբեր, խրատներ, հանելուկներ և առակներ: Վանական շրջանի բանաստեղծութեան ձևի մէջ ալ կա

բազմակերպութեան և տաղաչափութիւնն աւելի շատ արուեստունի: Հոս կարելի է գտնել հնգոտեան ոտանաւորներէ ըսկած մինչև հնգետասանոտեան չափեր, նաեւ որ տունները կազմուած են ալքուրեանական կարգով, երգիչները կը սիրեն հիւսել տներ իրենց անուններու սկզբնական, և այնպիսի երգեր որոնք հին հայկական չափով են:

Կեդրոններու բազմութեան և իրարմէ հեռու գտնուելուն պատճառաւ, վանական շրջանի մէջ բարբառներու միակերպութիւն չկայ, ալ խրաքանչիւր հեղինակ առանձին բարբառ ունի, մինչև իսկ միևնոյն հեղինակը ինչպէս Շնորհալին քանի մը տեսակ բարբառ կը գործածէ: Այդ բարբառները կը շանազանուին Արաբական շրջանի բարբառներէն անով որ չունին ալ ևս անոր խրթնութիւնն և արուեստականութիւնը: Մեծ մասամբ կը կիրառուի պարզ գրաբառը՝ բայց և այնպիսիներ որոնք կը գործածեն այն ժամանակի աշխարհաբարը. և կը խառնեն իրենց լեզուն օտարազգի բառերով և ալլն:

83. ԺԲ. դարու մատենագիրներն ուղեցին շունչ ու ոգի ալ նախորդ դարերու գրական լեզուի նուազումներուն՝ կորստեան վտանքէն զերծ պահելու համար զայն: Ասոր համար մօտեցան գրաբարի ջինջ ու յստակ աղբիւրակին, որուն ջուրերը դարաւոր հոսումներու մէջէն պղտոր ու տղմաթաթաւ կը հասնէին իրենց: Եւ եթէ մատենագիր մը գրչին ներքեւ երբեմն լեզուն, իբրեւ խրընթացքէն մեկուսի խորաձորի մը մէջ ամփոփուած ուղիի մաս մը՝ իր նախկին պայծառութեան դառնալով՝ կրնար ցոլացնել մատենագրին հանճարը: Սակայն չպիտի ունենար անշուշտ աղբերակին կենդանութիւնն ու զով ցատումները: ԺԲ. դարուն Կարմիր վանք, Սէ-Լէրան, Գրադալէ վանքերուն մէջ. նոյն շրջանի գլխաւոր ուսումնարանները, եկեղեցական ուսումներու հետ մշակուեցան նաեւ կրօնական բանաստեղծութիւնը, մանաւանդ Շնորհալու քերթուածքներով, բայց չանպաւոր քերթելու ծալրահեղ հակումն ոչ նուազ քերականական նորօրինակ ձևերու և այլալիւթեանց պատճառ մը դարձաւ, և մանաւանդ նոյնալանդ տողերու երկարաձիգ շարքերը տաղտկալի միակերպութիւն մը տուին քերթողական ոճին: Այս դարուն նշանաւոր երգիչներն են՝ Գրիգոր Պահլաւունի, Կամ Փոքր վիպասէր, Ն. Շնորհալի, Ն. Լամբրոնացի, Խա-

չատուր Տարօնեցի, Յովհաննէս Սարգաւազ վարդապետ, նաեւ
կը լիշուի թէոգորոս Աւախօսիկ:

84. Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսը, Ս. Ներսէս Շը-
նորհալուց երէց եղբայրը, երգեց Աւետեաց (Ս. Աստուածած-
նի) գեղեկապարմար շարականը «Խորհուրդն անճառ»: Ոմանք
այս շարականը կը վերագրեն Գրիգոր Մագիստրոսի որդի
Գրիգոր Վկայաւերի որ կաթողիկոս ընտրուեցաւ 1065 թն. «Խոր-
հուրդ անճառ» դեռ չօրինուած ճրագաւուցի (Աստուածալայտ-
նութեան) կանոնը «Ուրախացիր Սրբունին» կ'երգւէր ուր կը
լիշատակուի Գաբրիէլի աւետիսը: Եւ նոյն օրուան աւետարանն
«Եւ լամսեանն վեցերորդի» ըլլալով, յոյները կարծեցին թէ
հայերը Ծնունդէն մէկ օր առաջ կը կատարեն (Յունուար
5ին) աւետման տօնը: Շնորհալին առ Ալեքս գ. ած թղթին
մէջ կը լարէ թէ «Մեք զԱւետեացն տօն վեցն Ապրիլի կատա-
րեմք, ոչ ի հինգ Յունուարի, վասն որոյ ի ճրագաւուցի աս-
տուածալայտնութեանն՝ լիշատակութիւն տնօրինութեանցն
Քրիստոսի»: (Տես բացատրութիւն Շարականաց. Վինետիկ,
1814. էջ 26), Սակաւն ուրիշ լիշատակարաններու մէջ կը
հանդիպինք որ հին ատեն հայերը ուրիշ կերպ և ուրիշ օր կը
կատարէին Աւետեաց տօնը: Որովհետեւ Սամուէլ Կամրջաձորեցի
(Ժ. դար) իր «Տօնապատճառք»-ի մէջ կը գրէ, թէ Աւետեաց տօնը
կը կատարուէր Ծննդեան Դ. օրը: Ասոր ապացոյց այն է որ
Ծննդեան Դ օրուան կանոնն Աւետեաց խորհուրդը կ'երգէ
«Այսօր Գաբրիէլ ցնծութեամբ երգեաց ու պատարագի աւետա-
րանն ալ Աւետմանն է, իսկ Յովհանն Իմաստասերի համեմատ,
կանոն իդ «Աւետիքն և Ծնունդն և Մկրտութիւնն Քրիս-
տոսի» ի միասին առեալ տօնախմբեն: Զեռագիրներու մէջ
Քարութեան շարականներէն Ա. Կ. ձայնին կարգը դրուած է
որ «Յայն չորեքշաբթի, Աւետեաց Աստուածածնին տօն է» և
կ'աւելացընէ թէ նոյն օրուան հարց դձ. «Ուրախ լեր, Մա-
րիամ ս. աստուածածին, Յինանցն ասի: Այս հարցը Կեղ. կը
կոչուի՝ լատուկ մեծացուցէ չունենալուն համար: Արդ կը
կարծուի թէ երբեմն Աւետեաց տօնը կամ միշտ կը կատա-
րուէր նոր կիրակիին լաջորդող զշ. օր. և կ'սմ թէ և Ապրիլ 6ին
սահմանուած էր տօնը, բայց երբ Աւագ շաբթուն կը հան-
դիպէր չէին կատարէր, այլ կը լեռնաձգեն սոյն զշ. օրը: Իսկ
եւտոյ սովորութիւն եղաւ անշարժ տօնել Ապրիլ 6ին և յօ-

րինուեցաւ աւուր պատշաճի ամբողջ շարական: Մեր մէջ այս
պիսի փոփոխութիւն թող զարմանք չպատճառեն, որովհետեւ
այս տէրտնական երկրորդական տօները հետզհետէ կարգա-
ւորուած են և քրիստոնեայ զանազան ազգերէ փոփոխութիւն
կրած են ժամանակի ընթացքին մէջ: Լատինները նոյն ատեն
մարտի 25 ին կը տօնէին Աւետման տօնը, մինչ սպանիացի-
ները զայն փոխադրեցին դեկտ. 18 ին, Թուրքոյի ժողովին
(656) ա. կանոնի համեմատ:

Աւետման տօնն Արևմտաքի մէջ է. դարուն հաստա-
տուած էր, ինչպէս կը լիշուի Սօլեմոյի ժողովին և չետոյ 692
ին Կ. Պոլսոյ Տրուէեան ժողովին մէջ: Մեր մէջ Լ. դարուն
ակիղքը մտած պիտի ըլլայ. Բ. = Ժ. Բ. դար այս տօնին կ'եր-
գուէր ճրագաւուցի կանոնը, ինչպէս ըսինք:

85. «Խորհուրդ անճառ» հարցի ա. տօնն «Որ անիմանա-
լիդ ես» աստուածաբանական տեսութեամբ նշանակել է, անի-
մանալի կ'ըսուի «չեւթեան» ոչ թէ միայն Աստուածութեան
բացարձակ բանին համեմատ, այլ և ըստ հայրական իսկու-
թեանն ալ, որովհետեւ մարդկային միտք չի կրնար բովան-
դակել թէ ինչպէս Հայր է լաւիտենական առանց բաժնուե-
լու որդիէն ըստ չեւթեան. միայն ծնող և ոչ ծնեալ Հայր անըս-
կիցքն և անպատճառ: Անիմանալի = չունարէն Աստուծոյ
Աստուծոյ ստորոգելիքներէն մէկն է: Մեծացուցէին մէջ ալ
Ս. Աստուածածին ալլաբանօրէն կը կոչուի «Իսուն փակեալ»,
«Աղբիւր կնքեալ»: Առաջինը եղեկիէլի (խգ. 1. 2.) տեղեան կու-
սին ծնունդի ալլաբանութեան մէկ ակնարկութիւնն է, իսկ
երկրորդը երգոյն (Դ. 12) համեմատ: «Տէր լերկնիցը» ու
կըսը ալլաբանօրէն կը կոչուի «Քերովբէ հողեղն», այսինքն
մարմնաւոր, բայց լուեղնայն կ'իմացուի հրեղէն» Քերովբէներէ
ևս առաւել բարձրագոյն, «Սիւն հրեղէն» «Լուսոյն աշտանակ»
«Սափոր սկի», «Գեղմ իմանալի», «Ամպ թեթե», Դուստր
լուսոյ: Հաշուի մէջ ալ անապական տաճար, «կենդանի տա-
պանակ», Համբարձիին մէջ ալ լղացումը՝ ծաղկել ու ծնիլը՝
պտղաբերել նշանակուած է ալլաբանօրէն և Ս. Աստուածածնի
բարեխօսութիւնը կը մաղթուի:

86. Ս. Լուսաւորչի աթոռը նստող նշանաւոր հայտա-
պետներու մէջ, որոնք իրենց մեծագործութեամբ ու չքնաղ
առաւելութեամբ անջինջ լիշատակ մը թողուցին մեզի, շատ

բարձր դիրք մը կը գրաւէ Ս. Ներսէս Կլայեցի, որ իր սրբա-
ւէր վարքին համար՝ կոչուեցաւ Շնորհալի: Ծանօթ է ամենուն
թէ այս մեծանուն կաթողիկոսը ԺԲ. դարուն եղած է երկրորդ
Սահակ պարթև մը: Ո՛չ միայն իր եռանդուն հովուապետու-
թեամբ ու իմաստուն նախանձաշուջութեամբ եկեղեցական
հրահանգներու, այլ և ժողովրդին վրայ ունեցած մեծ ազդե-
ցութեամբ, Բայց ոչ նուազ հռչակաւոր է նաև իր գրական
գործունէութեամբ, և եթէ չենք սխալիր, իր ոչ նախորդնե-
նուն և ոչ ալ լաջորդներուն մէջ գտնուած են իրեն նման
բաղմաբեղուն գրչի տէր անձեր: Աեղ հոս զբաղեցնողը պիտի
ըլլան միայն իր հոգևոր երգերը գորս սրտայոյզ կ'եղանակէ
հայ եկեղեցին և որ շարակնոցին մէջ ամէնէն անգին գո-
հարները կը համարուին: Շնորհալուն բոլոր երկերն ալ միև-
նոյն բարձր հանձարի, լստակ հակաքանութեան և սահուն
ոճի դրոշմը կը կրեն, միայն իր արձակ գրութեաներուն մէջ
հրէշտէց յերջը լուսաբան է և խրթին, որովհետև հետեողու-
թիւն մըն է Դիոնեսիոս Արիսպագացւոյն ընծայուած համա-
նուն գրութեան, և Չափաբերականներու մէջ Վիդառնութեան
իւր մանկական հասակի երախայրիքն ըլլալով՝ չունի այն աշ-
խուժն ու արուեստն որ կը տեսնուի հեղինակին միւս քեր-
թութեաներուն մէջ: Շնորհալուն երջանիկ մահը հանդիպե-
ցաւ 1172 օգոստոսին, 70 ամեայ հասակին մէջ: Ո՛չ միայն
Հայերը, այլ և Յոսերն ողբացին այս անմահ հայրապետին
մահը: Շնորհալին (1166—1172) կապրէր աշնայիս ատեն մը
որ կաթողիկոսական աթոռը 100 տարի աստանդական ըլլալէ
ետք, հաստատուեցաւ Հռոմիլլալ (==Քումգալէ): Շարականներն
երգեց մեծ մասամբ հոս իր ծերութեան ատեն, ատոնցմէ գառ-
ունի նաև եկեղեցական երգեր, գանձեր, մաղթանքներ և եկե-
ղեցւոյ դուռն երգելու տաղեր և այլն:

87. Նշանակութեան արժանի կէտ մըն է Շնորհալուն
տաղաչափական արուեստը, իր երգերն և ոչ —երգ ոտանաւոր-
ները որոնց բովանդակութիւնն ալ մեծ մասամբ կրօնական է,
գրուած են արուեստական տաղաչափութեամբ. ոտքերու քա-
նակութեամբ բաղմատեսակ են իր ոտանաւորները, անոնց
մէջ կան հնգոտնեան ոտանաւորներ, ինչպէս «Աշխարհ ամե-
նայն» և «Առաւօտ լուսոյ», կան և աւելի շատ քանակ ունե-
ցող ոտանաւորներ ալ: Իր վերջին շափն է հնգետասանոտ-

նեան: Նմանաչափերը շատ կը սիրէ Շնորհալին, մեծ մասամբ
լանգերն են էալ. ա. ա. ա. ի. ի. ի. Շնորհալին կը սիրէ նաև ծայ-
րանունութիւնը, ինչպէս պիտի տեսնենք: Ծարանունութիւն-
ները կամ իր անունը կը կազմեն կամ երգուած սուրբը, ինչ-
պէս Հռիփսիմէի տաղը՝ «Հռիփսիմէ»: Այբբենական կարգով
տուներ հիւսելու ատեն, անդրադարձութիւն կընէ. այսինքն
ինչ տառերով որ սկսի տաղը, նոյն տառերով կը վերջացնէ,
երբեմն կսկսի այբէն և կը հասնի մինչև ք. և երբեմն ընդ-
հակառակը կսկսին ք-էն և կը հասնի մինչև աբ, ինչպէս
«Բաղդրագունիս այս բաղձանք»: Այբբենական կարգով հիւ-
սուած են «Ասօր անձառ», «Աստուած անեղ», «Արարչականը»,
«Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն»:

88. Երբ կաթողիկոսարանը տեղէ տեղ կը թափառէր,
եկեղեցւոյ կարգերն սկսան խանդարուիլ: Իւրաքանչիւր առաջ-
նորդ ինքնազուլս մնալով՝ իր կամքին համեմատ կը կարգա-
դէր ժամասացութիւնը: Գր. Պահլաւունի կաթողիկոս (1113—
1167) իր վերջին տարիներն ու Ն. Շնորհալի մեծ ուշադրու-
թիւն դարձուցին եկեղեց. ժամերգութեան վրայ, որովհետև
այդ ատեն կարծարծուէր միութեան խնդիրն ալ, և եկեղեցի-
ներու մէջ միակերպութիւն չկար: Գ. Պահլաւունի աւելի զբա-
ղած ըլլալով եկեղեցւոյ միութեան խնդրով՝ բարեկարգութեան
գործը մնաց Շնորհալուն: Հարկ էր ընդհանուր միակերպու-
թեան վերածել ժամասացութիւնը, որ քանի մը տեղեր թերի
կը կատարուէր, որովհետև մոռցուած էին հին երգերը, ուրիշ
տեղեր միայն սաղմոսերգութիւն կը կատարուէր: Սոի կող-
մերն ունէ հոգևոր երգ մը երեք տարբեր եղանակով կ'երգէին:
Շնորհալին նախ աշխատեցաւ վերականգնել հինը, իսկ պա-
կասը լրացնել նորոգ. լետոյ սահմանեց տօներ՝ նոր աղօթք-
ներով: Միակերպութիւն մտցնելու համար՝ գործածեց այն ծի-
սարաններն որ մնացած էին է. դարէն: Այս բանին մէջ չա-
ջողելու համար՝ զիմեց Մայր վանքերուն թէ որուն ժամաւա-
ցութիւնն ամենէն մաքուր մնացած է: Ուստի թուղթեր գրեց
և վարդապետներ զրկեց Արեւիկան Հայոց: Շնորհալին ընտ-
րեց Մաքրինոյի և Թեղենեաց վանքերուն (ծաղկած է. դա-
րուն) որոնց ժամասացութիւնն իբրև օրինակելի համարեց,
որովհետև այս վանքերու միաբանները խստակրօն ու բաւա-
կան աղատ մնացած էին օտար ազդեցութիւններէ և այդ վան-

քերու մէջ էր որ անխափան կը կատարուէր ժամերդուլթիւնը նախնեաց սահմանաժին համաձայն որ արեւելք կը կոչուէին: Իրեն ծանօթ էին նաեւ միւս եղանակներն ալ, մանաւանդ որ ինք լաւ երգիչ էր և «երգեցող» կը կոչուէր: Արարկոս Գանձակեցի կաւանդէ թէ Շնորհալիւն բաղում ինչ կարգեաց լեկեղեցի. քաղցր եղանակաւ խորհոյժին ոճով շարականս և մեղեգիւս և տաղս և ոտանաւորս ... Այս խօսքերէն կը հետեւի որ աւելի Արեւելեան եղանակն ընտրեց քան Արեւմտեանը: Ասոր պատճառը թերեւս այն է որ արեւելեանները շատ կը տարբերին Արեւմտեան եկեղեցւոյ ժամատացութենէն, և որովհետեւ մասամբ մ'ալ Արեւելեան եկեղեցւոյնը քաղցր էր: Շնորհալուին ատեն Տէրունական տօները թերի կը կատարուէին, կամ քանի մ'օր միևնույն շաբաթանը կերգէին, և այս ալ լարմար շարականներու չգոյութենէն: Ինքն էր որ սահմանեց քաղմօրեայ Տէրունական տօներ ու ատենց չատուկ շարականներու պակասը լրացուց:

89. Կիրակոս կ'որոշէ Շնորհալուոյն գրած շարականները «Յարութեան, օրհնութեան Գ. կողմն, և Աստուածածնի՝ փոխման երկուց աւուրցն, և Աւագ շաբաթի երկից աւուրց օրհնութիւն, Բշ. Դշ. և Դշ. և երկու շաբական Յարութեան ճաշու»։ Գրած է նաև Աւագ Ուրբաթի օրհնութիւնը, «Արծաթախրութեամբ մոլիալ», թէն և իշ. օրուան շարականները զոր Սահակ Պարթևի կը վերագրեն, բայց իրն են նաև՝ Նոյնպէս գրած է Վարդավառի, Հոգեգալստեան Բ. և միւս օրերուն շարականները, Չարչարանքի շարականներէն «Այսօր անճառ», «Նորոգող»։ Ասոնք Տէրունական տօներու շարականներ են, որոնք ցոյց կուտան թէ առաջուան խանգարուածները նորոգած կամ ինք նորէն խմբագրած է։ Շնորհալուոյն են նաև Բուն բարեկենդանի, Փառասնորդական կիրակիներու ասպաշխարութեան կամ պահոց Ակ. Բձ. Գձ. շարականները, ինչպէս նաև Ղազարու Յարութեան ու Ծաղկազարդի շարականները։ Միւս շարականներու մէջ առաջին տեղը կը գրաւեն Քրիստոսի ժամանակակից սուրբերու կամ Հայ. եկեղեցւոյ առաջին գործողներուն շարականները, ինչպէս առաքելոց, եօթամանայի աշակերտաց որոնք Քրիստոսի գործակից մերձաւոր սուրբեր են։

90. Այդ ժամանակ հաստատուեցաւ. «Բեթղէմէ մին՝
կանց» տօնը: Առաջին զարերու. եկեղեցւոյ վարդապետները:

Կապիտալիզմի զարգացումը
 և առաջադիմացի տնտեսական
 և քաղաքական հարաբերությունների
 ձևավորումը, որն առաջին հերթին
 շարժվում է դեպի արդյունաբերական
 հեղափոխություն: Չնայած
 և առաջադիմացի տնտեսական
 և քաղաքական հարաբերությունների
 ձևավորմանը, որն առաջին հերթին
 շարժվում է դեպի արդյունաբերական
 հեղափոխություն: Չնայած
 և առաջադիմացի տնտեսական
 և քաղաքական հարաբերությունների
 ձևավորմանը, որն առաջին հերթին
 շարժվում է դեպի արդյունաբերական
 հեղափոխություն: Չնայած

Նրանոս, Ռրոզինէս, Կիպրիանոս և յետագաները կը լիշատա-
կեն և կը ներբողեն զանոնք իբրեւ ճշմարիտ մարտիրոսներ՝
մեռած ոչ թէ միայն Քրիստոսի տեղ, այլ և Քրիստոսի համար,
ալսինքն Քրիստոսի շխարհ գալու վկայութեան: Լատին ե-
կեղեցին «Անմեղ մանկանց» անունով տօն կը կատարէ զայն
‘Նեկ. 28-ին, յուները Փետ. 29-ին: Իսկ մեր տօնացոյցը զայն
կը կարգէ Հոգեգալստեան երկրորդ շաբաթ օր:—Բեթղեհէմի
մանկանց շարականը աստուածաբանական նրբութիւններ կը
բովանդակէ: Առաքելոյը կար ժԲ դարէն առաջ, որուն
պացոյցը կրնաջ ըլլալ Նարեկացւոյն ճառը: Թերեւս այդ տօնին
պատշաճ շարական չկար, և ուրիշ սուրբերու շարականներով
ասուռէին, Ներսէս նորեր գրեց այս տօներու առթիւ:

91. Յովհաննու Մկրտչի անունով երեք տօն կայ, Յովհ. Մկրտչի և Աւետիքիէն Էփեսոսոսի, Յովհաննու Գլխոսմոն և Յովհաննոս-Ծննդեան: Այս երեք տօներ ալ միևնույն ատեն չեն հաստատուած: Առաջին երկուքը, կըսուի, սահմանած է Ս. Լուսաւորիչ և կը տօնուէին խորենացւոյն վերագրուած Գձ. շարահաններով ըստ աւանդութեան: Յովհաննու Կարապետին ծննդեան տօնը միւս եկեղեցիներու մէջ հին տարիէ ի վեր գոյութիւն ունէր: Օգոստինոս և ուրիշներ ճառելի գրած են՝ իսկ մեր մէջ ծննդեան տօնը թերեւ Ենոքիայի լրացուցած է՝ տեսնելով որ Արեւմտեան եկեղեցին կը կատարէ այս տօնը: Յովհաննու ծննդեան օրհնութիւնն «Արեգական արդարութեան» գրած է Գրիգոր Սկիւսացի, իսկ հարցն իր սարօք՝ Ենոքիային: Հրեշտակապետաց տօնն առաջին դարերուն մէջ չալանի էր, Ենոքիային հաստատեց և դրեց իր «Որ լանէից»ը: Ենոքիայւոյն են նաև նոր ժամանակները հաստատուած սուրբերու շարականները, ինչպէս Անտոն Անապատական/, Թէոդոսի/, Ս. Տրդատի/, Ս. Հայրապետաց, Ս. Ոսկեանց, սրբոց Վարդանանց շարականները:

ՊԶ. Թէն այս վերջինն Անանիա Շիրակացոյ կ'ընծայուի,
բայց հաւանական է, ինչպէս կը տեսնուի Շարականի վեր-
տառութենէն կամ ճշդորոշութենէն: Մայրանուն կը կոչուին
այն ոտանաւորներն որուն տուներու սկզբնատառերն իրարու
քով բերելով կը կազմեն հեղինակին անունը, ինչպէս են Շը-
նորհալու քերթումներէն ոմանք, «Նալեայ սիրով», «Նո-
րոգի», «Նորաստեղծիայ» և այլն: Ս. Ղևոնդեանց Շարականի

մէկ մասը, դձ. «Որ լառաջագոյն սահմանեցեր» միայն Ներսէսինն է, իսկ միւս մասը ճաշուն «Պաշտառացան ալսօր» Յովհ. Սարկաւազ վրդ. ինչ Ներսէսինն է նաեւ Ս. Յակոբ Մծբնայ հայրապետինը, Յովաննու, Ս. Սարգիս զօրավարին:

93. Գրիգոր Պահլաւունի շատ քիչ զբաղուած է եկեղեցւոյ բարեկարգութեամբ: Ասոր անունով կը լինէին Աւետեաց շարականը «Խորհուրդ անճառ», Երկրորդ Ծաղկազարդի օրհնութիւնը «Մեծահրաշ ալս խորհուրդ» և Լուսաւորչի վրայ գրած ընտիր մեղեդի մը՝ «Ի լեւս արեւու»: Ծագեցաւ մեզ չարեմտից, — Զամայն արեղական ծածկոյթ — Աւտորոսեան հօտէն հալածեաց: — Օրիորդ մաքուր հարսինն — Աւետիս տալ փեսային. — Զարթիր զուարթուն անուն. — Եւ զարթն զթմրեալս ի մեղաց:

94. Բաց ի շարականներէ, Շնորհալին ունի նաեւ Տաղեր որոնց մէջ ինք կը հանդիսանալ իբրեւ նշանաւոր երգիչ: Հաջերը ցրուած ըլլալով զանազան տեղեր, պարզ էր որ ենթարկուէին օտարներու ազդեցութեան և անոնց սովորութիւններն իւրացնելէ զատ, անկարելի էր որ չլուարճանալին անոնց երգերով ալ: Ասով ոչ միայն անոնց կրօնական զգացումը կը խախտէր, այլ և կրնային մոռանալ իրենց Մայրենի լեզուն ալ: Այս ամենքն հասկցած էր Շնորհալին, և անոնց առաջն առնել փութաց: Այս նպատակաւ գրեց իր Այբուրեանականն ու լանձնեց մանուկներուն: Ռամիկ ժողովրդի համար, որոնք օտարոտի զուարճութիւններէ համ կ'առնէին, յօրինեց 33 հանելուկ, աւելի քաղցրաճաշակ մտքով: (Տես ալս վերջինի մասին Հ. Ղևոնդ վ. Յովնանեան, «Հետազօտութիւնք նախնեաց ռամիօրէնին վրայ, Վիեննա, 1897. էջ 57—67): Հռոմկլացիներուն համար ալ հիւսեց «Յիշեսցուք» և «Զարթիք» գեղեցիկ երգերը: «Յիշեսցուքն անմիջապէս լաջորդող՝ «Անբաժանելին» ժէ. դարուն աւելցած է: Այսպէս երգի միջոցաւ ամէն դասակարգի ու հասակի համար տարածեց բարոյական ու կրօնական գաղափարներ: Շնորհալին ի պատիւ աշխարհի վեցօրեայ արարչագործութեան երգեց իր Աբուշալան և է. օրը Աստուծոյ հանգստեան լիշատակին՝ «Նորաստեղծեալը»:

95. Անտոն Անապատականի հարց «Նախսկիզբն միանձանց» ի մէջ, Ն. Շնորհալի, Եկեղեց. պատմութեան աւանդածին համեմատ, Ս. Անտոն կը համարի հեղինակ Միանձան-

կան ու վանական կարգի (Գ. դարու սկիզբը): Թէև հայր Անտոնէն առաջ կալին ուրիշ անապատական ճգնաւորներ, բայց միայն ճգնութեանց կը պարագլխին առանց աշակերտներ ունենալու և աճեցնելու զանոնք միանձնական կարգերով: Հ. Անտոնէն սկսեալ անոր հետեւողութեամբ անապատները դարձան միանձնեցու բնակութիւն: Հ. Անտոն միանձնական կեանքի Առաջնորդ ընտրուելով Թեքայեան մէջ — որովհետեւ երկնաւոր բարիքին միայն լոյս ունէր. — արհամարհեց երկրային բոլոր հեշտալին և վշտալին և եղաւ Քրիստոսի զինուոր, խաչակրօն անդադար սաղմոսերգութեամբ: «Տէր լերկնից» ի մէջ խաչակրօն լիշատակ ըսելով՝ կիմանանք խաչակիր կեանքի լիշատակը, և «Մանկունքի» վերջին տունին մէջ Ս. Անտոնի բարեխօսութիւնը կը խնդրուի: Նախնիք այնպէս կը ըմբռնէին որ բարոյական կեանքի ծաղիկն ու վաղելութիւնը վանականութիւնն է: Ժամանակին եկեղեցւոյ բոլոր մեծ վարդապետները վանականութենէ լառաջ եկած են: Աթանաս, Բարսեղ, Գր. Նազիանցի, Ոսկեբերան, Եփրեմ, Հերոնիմոս, Գրիգորիոս և ալլն: Իրենց վարքու վարքին ծանրութիւնն ու դարմանալի զգաստութիւնը, վարդապետութեան իմաստութիւնը, մտածութեան խորութիւնն և խօսքերու օծութիւնն ոչ թէ այն արտաքին զրոյմն էր զոր Աթենացւոց ու Ադեքսանդրացւոց դպրոցներէն առին, այլ և անոնց ճգնաւորական կեանքը:

Ս. Անտոնի գործն լառաջ տարաւ Պաքոմիոս որ միանալութիւն մը հաստատեց (340) Նեղոսի Տաբինա կղզւոյ մէջ: Հայոց և Փոքր Ասիոյ մէջ վանականութեան տարածողն եղաւ Եւստաթէոս Սեբաստացի: Թէև վաղէս կայսրը վանականներու թիւը պակսեցնել կը ջանար, զանոնք զօրք գրելու համար, բայց իզուր: Վանականութիւնն ամենէն աւելի Արեւելքի մէջ զարգացուց Մեծն Բարսեղ Կեսարացի որ ոչ միայն ինք կանոններ գրեց, այլ և Նէոկիսարիոյ մէջ վանք ալ հիմնեց: Արիանտութեան դէմ պայքարելու համար: Վանական կեանքի բաղմազան եղանակներու մէջ ամենէն զարմանալին էր Սիմոն Սիւնակեացը որ Անտիոքի մօտ սիւնի վրայ կապուէր, արեւելքի մէջ ասոր բաղմաթիւ հետեւողներ եղան, ինչպէս Դանիէլ երէց ու վանական՝ Կ. Պոլիս, արեւմուտքի մէջ, Պալմիրայի սարկաւազ Տրեմիւրացւոց կողմերը:

կին ու աղջիկ վանականներ ալ կային, ասոնց կանոնները գրեց Պաքովոս: Մեծն Բարսեղ այս սովորութիւնը կապաղովկիա մտցուց: Ի սկզբան քող, խուրակ էր կուսութեան պսակը, երբեմն ալ մատնի:

96. Թէոդոսի կամ սրբոց թագաւորաց օրհնութեան մէջ Շնորհալին կը գրէ թէ երկրաւոր թագաւորութիւնն իրկնալի՞նն օրինակ է և մասնաւորելով Թէոդոսի վրայ՝ կըսէ Ս. Խաչի զօրութեամբ լաղթութիւն տարաւ թշնամույն վրայ և ուղղափառ հաւատքով իր կեանքը կատարելով՝ ոչ միայն իր անձն անխառն պահեց մոլար հաւատքէն, այլ և ժողովուրդն ալ լափառ հերետիկոսներու դէմ: Մանկունքի մէջ «երանելի ամենեցուն» կը կոչուի, ոչ թէ լոկ հոգևոր բարեպաշտութեամբ ալ և իր թագաւորական պատուով, և ոչ աջնչափ զէնքի քաջութեամբ քան սրչափ աղօթքով թշնամին վանած կերգէ Դարականը:

Մեծն Թէոդոսի բարեպաշտ կեանքի մասին Ս. Սմբոսիոսի Արձանականին = Դամբանականին մէջ գրուած է, իսկ Թէոդոսի տօնին մասին կը վկայէ Ս. Յովհան Ոսկեբերանը: Մեծն Թէոդոս թաղուած է Կ. Պոլսոյ առաքելոց եկեղեցին: Տրդատ թագաւորի շարականին մէջ քերթողը կերգէ թագաւորին խողի կերպարանքի փոխուիլը զոր բժշկեց նոյն ինքն Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

97. Հայրապետաց օրհնութեան ա. տունին մէջ Նիկիոյ ժողովին դաւանանքը կերգէ, երկրորդին մէջ Կ. Պոլսոյ ժողովին կանոնները պատմողաբար մէջ կը բերէ: Նոյն իմաստը Ողորմեալի ու Տէր լերկնիցի մէջ: Մանկունքի մէջ ալ նոյն բանը, բայց աւելի խտացած է վարդապետական մասը և կը նշուի հերետիկոսները: Մանկունքի վերջին տունին մէջ, մանաւանդ տպագրուած շարականին մէջ, Քաղկեդոնի ժողովն ու Լեոնի տոմարն ալ կը նշուի: Ոսկան վրդ. իր տպագրած շարականին մէջ ալ հատուածը վերցուցած է: Խնդիր է գիտնալ թէ Մանկունքի լորինման ատեն կնք այդ վերջին նշովքը: Հին ձեռագիր շարականներ պրպտելու է: Տեսած ձեռագիր շարականներս Ժ. Դարէն անդին չեն անցնիր և ամենքն ալ այդ նշովքը կը պարունակէին:

98. Ս. Ոսկեանց «Որք արժանաւորեցաւք» ի ա. տան մէջ իրենց Ս. Թաղէոսի աշակերտելն կերգուի որոնք աստուածա-

լին մաքրողական հրով իբրև ոսկի փորձուեցան և երկրորդ տունին մէջ կերգուի թագաւորական արքունիքի մէջ քարոզութիւններն, Սուքեսեաններուն, իրենց ձեռքով քրիստոնէութեան դառնալն ու Նիքիայի = Արածանիի ակնադրութիւնը քով մկրտուելն և անոնց բարեխօսութիւնը կը խնդրուի:

99. Ս. Վարդանանց օրհնութիւնը «Նորահրաշ պսակաւոր» ու մանկունքը «Արիացեալք» գեղեցիկ են ու բազմիմաստ ու երգահիւսին իմաստութեան արժանի:

«Նորահրաշին մէջ Ներսէս Շնորհալի կը կազմէ նահատակուած տանուտէրներու անունները խորհրդածութեամբ մը: Առաջին տունին մէջ կը լինուի քաջն Վարդան զոր կը կոչէ «Նորահրաշ պսակաւոր» քաջ մեռնելու ատեն և քաջ մեռցընելու ատեն: Հոգևոյն զէնքով՝ հաւատքով ու աստուածային խօսքերու քարոզութեամբ վառուած էր մահուան ու սատանային դէմ: Վարդան անունին վրայ խորհրդածելով, բայց ոչ լեզուաբանօրէն, այլ իբրև եկեղեցական մեկնիչ մը, կերգէ թէ իր վարդապոյն արիւնով կը պսակէ եկեղեցին, և երանելին ոչ թէ միայն մարմնական բանակին, այլ և մարտիրոսներու հաւատքին գլուխն էր և ուրիշներու պսակուելուն առաջնորդ եղաւ:

Երկրորդին մէջ Խորէն Խորխոռունի իր անունին պէս խորհրդական ըլլալով՝ աստուածային իմաստութեամբ խոհեմացած կը վկայէ խաչուած Քրիստոսին և կը պսակուի իր արիւնով:

Երրորդին մէջ Արտակ Պալուսնի որու անունը (պարսկերէն ա. — ջուր, ատր — արտ) կը նշանակէ հրագոյն, Շնորհալին ասոր վրայ խորհրդածելով՝ կըսէ (ո)րենական այսինքն աստուածային լուսով լցուած ու հրափալ երեցած քաջ Արտակ, թախտուած բոսորային կարմրութեան մէջ:

Չորրորդին մէջ Հմայեակ Գիմաքսեան՝ մկրտութեան արքայալ զգեստով և այլ հոգևոր պատրաստութեամբ զարդարուած՝ բանասարկուն խաբէութիւնները կը խորտակէ և կը լաղթէ պատերազմին մէջ:

Հինգերորդին մէջ Տաճատ Գնթունի՝ որ նահատակուելով՝ երկնքի մէջ հրեշտակներու դասը կելլէ և Երրորդութեան տաճար կըլլայ իր անունին պէս:

Վեցերորդին մէջ Վահան Գնունի՝ որ իր խորհրդաւոր

անունին պէս ստանձնած հաւատքի վահանը, լուսոյ զրահները և խաչն իբրև սաղաւարդ՝ դեռ առողջ հասակի մէջ կը նահատակուի:

Եօթերորդին մէջ Արսէն Ընծայեցի՝ որ իբր անարատ թռչուն ինքզինք ողջակէզ ըրաւ Աստուծոյ իր անունին պէս՝ որովհետեւ Արսին=Արսէն կը նշանակէ Արազի:

Ութերորդին մէջ Գարեգին Սրուանձտեանց իր երկու եղբայրներով՝ կը կոչուի «գլուխ և աւարտ մարտիրոսացոյց» գլուխ կը կոչուի, որովհետեւ առաջին անգամ ինքն էր որ Յազկերտի առջև Յիսուս Քրիստոսը խոստովանեցաւ, և աւարտ տանուտէրներու կարգին մէջ վերջինն ըլլալուն համար:

Իններորդին մէջ կերգէ անունով չիշուած նահատակները. «բամկական խումբը» և 8-ին մէջ երրորդութեան վառք տալով այս նահատակութեան համար՝ սուրբերուն բարեխօսութիւնը կը հայցէ:

Մանկունքը Նորահրաշին խտացումն է:

100. «Բացատրութիւն Ծարականաց»-ի հեղինակը հ. Գ. Վ. Աւետիքեան, էջ 601 — 613 կրօնական խնդիր մը կը լուզէ, թէ պատերազմի մէջ հաւատքի համար մեռնողները մարտիրոս կրնան կոչուիլ: Երկարօրէն ճառած է այս խնդրոյն վրայ մանրակրկիտ վկայութիւններով և կ'ընդրակացնէ թէ հաւատքի ճշմարտութեան համար պատերազմի մէջ մեռնողներն արժանի են մարտիրոսութեան պատկան, համաձայն եկեղեցական աւանդութեան: Եթէ չըլլար, կ'ըսէ՝ հարկ էր նա և ոչ գիտակցութեամբ մեռնող ջարդուող զենեմի հազարաւոր մանուկներու տօնն ալ չկատարել:

101. Ս. Ղևոնդեանց օրհնութեան մէջ կը պատմուի Ս. Ղևոնդեանց նահատակութիւնը ըստ պարթեական տեղանորոշիչ աշխնքն Մեծն Սահակ Պարթևին տեսիլքին (Եջմիածնի մէջ) որով առաջուրէն Աստուծմէ լալանութիւն ընդունեց թէ Ս. Գրիգորի հոգեւոր որդիները պատկանելով այլտի զարգարուին: Այդ տեսիլքին հարազատութեան քննութիւնը մեր նպատակէն դուրս է, միայն սաչափը կ'ըսենք ըստ արդի քննութեան: Վարդանանց պատերազմէն ետք յօրինուած է: Իններորդ տունին մէջ կը յորդորէ ունկնդիրները որ հետևող ըլլան Ս. Ղևոնդեանց, միանան Քրիստոսի հետ, անբաժան մնալով եկե-

ղեցիէն, որպէսզի փառին ու պայծառանան երկնային առաքաստին մէջ:

102. Ծնորհալին հրեշտակաց «Որ լանէիցը» երգահիւսած է իր կաթողիկոսութենէն առաջ: Առաջին տան մէջ կը վարդապետէ հրեշտակներու գոյացութեան, էութեան վրայ, երկրորդին մէջ հրեշտակներու անթիւ բաղմոթիւնը: Հարցին և միւս շարականներուն մէջ ալ սոյն վարդապետութիւնը: Հարցին գործատունին մէջ՝ հրեշտակներու ինն դասը, հրեշտակք, հրեշտակապետք, պետութիւնք, իշխանութիւնք, զօրութիւնք, տէրութիւնք, սերովբէք, քերովբէք, աթոռք:

103. Ծնորհալի Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին օրհնութեան մէջ կը պատմէ Ս. Հայրապետին առաքելական գործը: Գործատունին մէջ լառաջ կը բերուի այն աւանդութիւնը թէ Կոստանդիանոս կայսրը տեսած է որ հրեշտակներու կապաստորէին Ս. Յակոբին: Հարցին Բ. տունին մէջ Ս. Յակոբի պաշտպանութիւնը կը խնդրուի ժանտախտին դէմ: Որովհետեւ կաւանդուի թէ Ս. Յակոբ աղօթքով այդ համաճարակը դադարեցուցած ըլլալ, հետեւապէս Ս. Յակոբ ժանտախտի դէմ պաշտպան սուրբն է: Ժանտախտի և ուրիշ զէպեւրու առթիւ, սովորութիւն է հսկման ատեն այդ Բ. տունը «Չարժանահաս մահ տարածման»ը երգել: Գործատունին վերջին տունին մէջ կ'ակնարկուի այն աւանդութիւնը թէ երբ Պարսից Շապուհ թագաւորը Մծբն քաղաքը կը պաշարէր, Ս. Յակոբ հրեշտակներէ շրջապատուած՝ զարհուրեցուց պաշարողն որ ելաւ գնաց: Ճաշուին առաջին տունին մէջ քերթուրը կը ջանայ հաստատել թէ Մասիս լեռան վրայ դեռ կալ տապանը զոր Մծբնայ հայրապետն ալ լեռն ելլելով՝ աչքովը տեսած է:

104. Ծնորհալիէն առաջ Բուն բարեկենդանին ու Քաւանորդական կիրակիները Յարութեան հարցերը կերգէին ձայնին համեմատ, ասոր համար ձեռագիրներու և տպագրուած հին շարականներու մէջ այնպիսիներու քով լուսանցքի մէջ կը նշանակէ Առջ. աշխնքն Աղուհացի կիրակիին երգելու է. ինչպէս Աձ «Ընդ երիս մանկունս», Ակ «Որ լաթու փառաց», Բձ «Որ գթացար», Գձ «Փառաւորեմք զքեզ», Դձ «Որ եկիր կամաւ հօր», Եկ «Որ ամենազօր զօրութիւնդ»: Ծնորհալի ատեն յարմար շարականներ գրեց, խորհրդածութեամբ: Նշա-

նաւոր են Անառակին, Տնտեսին, Գատաւորին, Գալստեան շարականները թէ իմաստով և թէ եղանակաւ:

105. Աւագ հինգշաբթի օրուան Մանկունքը «Այսօր կանգնեցաւ աւագան մկրտութեան» բաւական նիւթ մատակարարած է աստուածաբանական վիճաբանութեանց: Վերջերս Վենետիկ 1898-ին տպագրուած «Ժամակարգութեան» արտօնագրին մէջ, հայ հռոմայականներու հանգուցեալ Աղարեան պատրիարքն ալ «Աւագան մկրտութեանն իր դաւանանքին չարմար չդատելով՝ բացատրութիւն խնդրած է հրատարակիչ Գեր. Իգնատիոս Արքեպիսկոպոս Վիւրեղեանէ: Հրատարակիչը «Բացատրութեան շարականացի» էջ 232—235 չառաջ կը բերէ ուր գրուած է թէ «Ապաքէն ի բանս վարդապետաց հայոց գտանեմք ուրեք ուրեք ասել թէ լուացումն ոտից զոր արար Քրիստոս, ոչ միայն յօրինակ խոնարհութեան էր, այլ և խորհրդով մկրտութեան: Սամուէլ Կարմշաճորեցի ի դիրս եկեղեցւոյ (եր. 322) ասէ. թէ Քրիստոս ի Հինգշաբթի մեծին սկիզբն արար խորհրդով աւագանին՝ լուացմամբ ոտից աշակերտաց: Իգնատիոս վրդ. ի «Մեկնութիւն Վուկայ», եր. 356. ասէ «Թէպէտ զօրինակ խոնարհութեան և զմեծին ծառայել փոքուն՝ հաստատեաց աչտու, սակայն զմկրտութեան խորհուրդն ընուառ նոսա: Նման աչտ խօսի և Բարսեղ վրդ. «ի մեծն Մարկոսի. գլ. ԺԻ»: Նոյնպէս որ Ոտնլուացի կարգին աղօթքին և քարոզներուն մէջ ալ կը չիշատակուի այս մկրտութեան խորհուրդը:

106. Շնորհալին «Արծաթսիրութեամբ մոլեալ»ին Ա. տունին մէջ ողորմագին ձայնով կը բացատրէ մատնիչ Յուդայի անօրէնութիւնը: Արծաթսիրութեան ախտը կամ չարավաստակութիւնն անանկ չիմարեցուցած էր Յուդան որ իր աննման վարդապետը մատնեց 30 արծաթի վարձքով: Բ.-ին մէջ կը բացատրէ թէ համբոյրն որ սիրոյ ու հաշտութեան նշանակ է, Յուդա «նենգութեան համբոյր» ըրաւ՝ Փրկիչը նենգութեամբ համբուրելով: Գ.-ին մէջ հրէական մէկ աղտոտ քարքը կը պատկերացուի, կաշառքով կուրցընել դատաւորները: Որչափ վեհութիւն և որչափ ահաւոր ներգաշնակութիւն ունի «արծաթսիրութեամբ» ի Տէր չերկնից «Ով սքանչելին» որ խաւարման գիշերը, ճրագները բոլորովին մարած, կերպուի: Չկայ մէկն որ «ով սքանչելիին» ահեղ տալաւորու-

թիւնը կրած չըլլայ, եթէ մանաւանդ վեհ ու սուր ձայնով մը երգուի խոր մթութեան մէջ: Մասնաւորապէս ինձի նկատմամբ խօսելով՝ չկալ շարական մը որ այնչափ խորապէս ազդէ վրաս քան թէ այդ «Ով սքանչելին»: Եւ որչափ սքանչելի են այն քարոզներն որ «Ով սքանչելիին» կը չաջորդեն մթութեան մէջ: Տպաւորութեան զգացման յորդութենէն մարդուս այն պահուն քարոզիչ ըլլալ կուգայ:

107. «Այսօր անձառ» և «Նորոգող տիեզերաց» չարչարանքի երգերը հռչակաւոր են և բազմախորհուրդ: Եթէ Շնորհալին ուրիշ երգահիւսութիւն մը չունենար, դարձեալ պիտի չաւերժանար այդ երգերով, որովհետեւ այնչափ վեհ են: Հայ եկեղեցւոյ շարականներէն շատերը ժողովրդականութիւն չեն գտած, բայց Շնորհալուն այս «Այսօր անձառ», «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» այնչափ ընտանեցած ծաւալած են որ չկայ մէկն որ չգիտնայ և չուզէ երգել թէ ձայն ունենայ թէ ոչ: Հապա այն խորհուրդներն որոնց վրայ Ն. Շնորհալին կը խորհրդածէ «Այսօր անձառին» մէջ, որ իսկզբան Մեծի ուրբաթի համար յօրինուեցաւ, բայց յետոյ չատկացուեցաւ ուրիշներու համար ալ ժէ դարուն:

108. Շնորհալին Աւագ Շաբաթի օրհնութիւն «պարգեատունին» մէջ իբրեւ վեհիմաստ վարդապետ մը կը փայլի. խօսքը թէ և մթին չէ, բայց իմաստներն այնչափ խոր են որ քիչ կը թելադրեն անոնց վրայ խորհրդածել: Քրիստոս ամենուն պարգեատուն թէ և, բայց ինք իբրեւ պարգև Պիղատոսէն կը խնդրուի, Յովսէփ Արեմաթացին մարմինը կը խնդրէ և Պիլատոս կը չնորհէ: Լոյսն իբր հանգերձ զգեցողը Յովսէփէն պատիւ չանձն կառնէ: Արթուն բնութեամբն այսօր կը ննջէ մարմնով գերեզմանին մէջ: Արարածոց ցնծութիւն Քրիստոսն այսօր կողբան, Անբովանդակելին Աստուած մահով ամփոփուած՝ կը դրուի նոր գերեզմանին մէջ՝ նորոգելով մարդը մեղքի ու մահուան ապականութենէն և գերեզմանը կը կրնա քուի անփակ գրով — է՝ որէն ով:

109. Շնորհալին երգեց նաև Յովնան մարգարէին ձեռքով Նինուէի ապաշխարհութեան հարցն իր սարօք շարակալնը: Ասորինքը իրենց ժամերգութեան մէջ կը չիշեն այդ պառագան, որովհետեւ Նինուէի ապաշխարութիւնը նախատիպ օրինակ էր հեթանոսներուն՝ առաքեալներուն քարոզութեամբ:

«Բազմավէպ» ամսաթերթերը կը հրատարակեն: «Ուրախացիր, պսակ կուտից»-ին մէջ Տիրամօր ուրախութիւնը կը բացատրուի իր որդին ալակերպուելով՝ հայրենի փառքով փալլելուն համար: Թափոր ու Հերմոն կը ցնծան Քրիստոսի անունով ըստ թաղմոսներգուին գօր քերթողն ալ տաղաչափած է:

114. Ամէնուն ծանօթ տօն մըն է Ամանորը կամ Նա-
ւասարդի տօնը «Աշխարհախումբ տօն» որուն շահապետող
աստուածն էր «Հիւրընկալ» կամ «Վանատուր» Արամազդը:
Զրադաշտական կրօնքի մէջ Ամանորը=Նէփթիս ի պատիւ
Որմզդի և ի պատիւ Արարչագործութեան սահմանուած էր:
Ասկէ զատ կալին նաև Գահաճօրը=Արարչութեան վեց շրջան-
ները չիշատակող ուրիշ տօներ ալ: Միևնոյն խորհրդով կը
կատարուէր Նաւասարդի տօնը: Տարիներու ընթացքին մէջ
Նաւասարդի տօնն ինչ ինչ փոփոխութիւններ կրեց: Այդ տօ-
նը մեր եկեղեցւոյ հնագոյն աւանդութեան մը համաձայն փո-
խանակուեցաւ Քրիստոսի պայծառակերպութեան տօնով: Նոյն
օրը կատարուած արարչագործութեան չիշատակի մը հետքե-
րէն կը նշմարուի ջուրի սրսկման և աղանիւններ թռցնելու
սովորութիւնը: Աղանիւնները կը լիշեցնեն Աստղիկ դիցունին,
Արամազդի դուստրն որուն տօնը հօրը հետ կը կատարուէր
և որուն նուիրական կամ խորհրդանշանական չատկութիւնն
էր այդ սիրատարի թռչունը: Դիցունւոյն նուիրուած էր կամ
անոր նշանակն էր վարդը, գեղեցկութեան ծաղիկը: Ասկէ մեր
մէջ Վարդապետ: Նոյն օրը բագինները, մահաանները, քուրմերը
Վարդերով կը վառէին, կը պսակուէին:

115. Աստուածամօր կուսի երկինք վերափոխման տօնը զոր չոյները Մեղրուի և կամ Քէֆիօ (==ննջում) ու լատինները Աստուծոյ կը կոչեն, քրիստոնէական տաղին դարերուն գոլութիւն չունէր: Թէն Աթանաքինէսի, Հերոնիմոսի, Օգոստինոսի և ուրիշներու անունով Վերափոխման վրայ ճառեր կան, բայց անհարազատ են: Զ. դարուն նախապէս սկսաւ Գաղիլայի մէջ, է. դարուն՝ Հռոմ ու 847-ին Լեոն Դ. պապը հրամայեց որ Վերափոխումն ութ օր կատարեն: Յոյն եկեղեցւոյ մէջ սկսաւ 582- Մօրիկ կայսեր ատեն, թէն նոյն իսկ է. դարուն վերջերը քիչ եկեղեցիներու մէջ կը կատարուէր այս տօնը, ինչպէս կը վկայէ Անդրէաս Կրետացի. Երուսաղէմի Մոտեստիոս պատրիարքը իր Վերափոխման ճառին մէջ կըսէ

թէ իրմէն առաջ Վերափոխման տօն չէր կատարուեր: Հազիւ
ԺԲ. դարուն կիւ Մանուէլ կայսեր օրով ընդհանրացաւ տօ-
նը: Մեր մէջ Լ. դարուն մտած է, և Շնորհալուոյն օրով ալ՝
աւելի մեծափառ, մեծահանդէս տօնուեցաւ: Եւ որպէս զի ա-
ւելի մեծափառութեամբ պատուեն Տիրամօր յարութիւնն ու
վերափոխումը, որոշեցին կիրակի օր տօնել, կիրակին՝ որ մի-
այն Գրիստոսի յատկացուցած էր:

116. Վերախոյսման օրհնութեան մէջ Շնորհալին կերգէ Տիրամօր երկնալին եօթնաստեղեան խորան—հրեշտակներու եօթ դասակարգութեան մօտեւել իբրև Տիրուհի և պարագաները: Մեծասցուցէն Տիրամօր ստորոգելիքը կը թուէ: Նոյն իմաստն է որ լարասութիւններով կը կրկնուի միւս օրերուն շարականներուն մէջ:

117. Դնորհաւուրն երգած շարականներուն մէջ նշանաւոր է նաեւ 72 աշակերտացն ու մարգարէիցը, Ոսկեբերանի, Բարսէի, Եփրեմի, Գրիգոր Աստուածաբանի, Աստուատիոսի և երկուց բիւրուց մանկունքը:

Որոշ չի գիտցուիր թէ Ծնորհալուոյն ան ինչ քանակութեամբ շարականները Միւռոնի Բ. շարականը «Հալը ամենակալն» յօրինուած է երգելու հանգիստաւոր միլիտովեան ատեն որ հին ատեն կը կատարուէր Աւագ շաբաթ օր։

118. Ծնորդալուոյն տաղերը գրուած են զանազան տօնե-
րու առթիւ, որպէսզի աստոնց լիշատակութիւնը կամ նշանակու-
թիւնն եկեղեցիէն դուրս ժողովրդին մէջ տարածուի: Այս տա-
ղերուն կրկնող զարձուածքներէն կը լատնուի թէ արդեօք
եղանակ ալ ունին: Թէև նպատակը լսեմ, բայց քիչ մը տաղ-
տուկ կ'ազդեն տաղաչափութեան արուեստականութեան պատ-
ճառաւ: Տաղերու նիւթն Աւետարանէն առնուած է: Բացա-
ռութիւն կը կազմեն սա ճետեալներն որոնք բովանդակու-
թեամբ ու կազմութեամբ տարբեր են, ինչպէս «Մեծի ուրբա-
թի» և «Խաչելութեան Տեառն»: Առաջինը կիսակատար մնա-
ցած ու գրուած է այբուբենական կարգաւ: Այս երգին մէջ
Ծնորդալին կերպէ թէ ինչպէս Քրիստոս իր հոգին աւանդելէ
հտք, իջաւ Դժոխք, Մահուան դէմ պատերազմելու: Մահն ու
Դժոխք լսելով՝ կը սարսափին, Քրիստոս խաչի լուսով կը
սաստէ, կը հալածէ խաւարը: Հող Աղամ կը ճանչնայ իր Տի-
րոջ՝ զալստեան նշանը, կամչնայ և ահուզողով կը լեցուի:

Քրիստոս իր ձեռքը կերկարէ, ցուց կուտայ իր վերքերը, իր փշէ պսակը, կը լիշէ իր կրած նախատինքն ու չարչարանքը, և քաջալերելով՝ կը մխիթարէ Ադամն և կըսէ թէ ամէնքը կրած է զայն ազատելու համար: Իսկ խաչելութեան երգին մէջ Շնորհալին կը պատկերացնէ այն սքանչելի փոփոխութիւններն որ տեղի ունեցան Քրիստոսի խաչելութեան ատեն, քնութեան մէջ ու Վժռիսքի մէջ:

Շնորհալին ունի նաև երգեր զանազան սուրբերու վրայ, այսինքն Աստուածածնի վերափոխման, Յովհ. Կարապետի, Ստեփ. Նախավկայի, Առաքելոց, Մարգարէից, Հայրապետաց, Որդւոց Որոտման, նաև երկու երգ հրեշտակապետաց և ամենայն երկնային զօրաց, առանձին յորդորակով: Ունի նաև տաղեր հայոց սուրբերու վրայ, Ս. Լուսաւորչի, Ս. Ներսէսի, Ս. Հռիփսիմեանց ու Ս. Տրդատի:

119. Շնորհալին երկու գանձ ունի. «Վարդավառին» և «Փոխման Աստուածածնի», Ներսէսի երգ վերտառութեամբ: Ինչպէս ըսինք, հայ եկեղեցին Շնորհալուցն օրով նախանձելի վիճակ մը չունէր, Յունաց ու Հայոց մէջ կարծարծութիւն կրօնական միութեան խնդիրը: Շնորհալին այս միութիւնը հալածապետական իմաստուն հեռատեսութեամբ կը համաձայնեցնէր ներքին կապերով միայն: Ներքին փոխադարձ սիրոյ ու միութեան հաստատութեան համար, Հայ եկեղեցին կաղօթէ իր Գանձերուն մէջ: Շնորհալին նոյն գաղափարը կարծարծէ նաև իր «Ընդհանրականին» մէջ: Այս իմաստով են իր «Ի մի լրութիւն կաթողիկէ, լօղեալ ի գլուխ եկեղեցւոյ» և «Ի մի բնութիւն Հաւատոյ և Սիրոյ» գանձերը: Այսպէս Շնորհալին կուզէ հասկացնել որ եկեղեցիները փոխադարձ սիրով ու համերաշխութեամբ կենդանի պահելու են Քրիստոսի քարոզածը: Նոյն իմաստով գրած է նաև «Բարձրացո՛ղ զեղջիւր եկեղեցւոյ քում սրբոյ»: Թէ՛ Նարեկացւոյ և թէ՛ Շնորհալուցն գանձերուն մէջ կը լիշուի քանի մը սուրբերու բարեխօսութիւնը, ինչպէս Աստուածածնի, Յովհ. Կարապետի, Ստեփ. Նախավկային, Առաքելոց, Մարգարէից, Լուսաւորչի ու ձգնաւորաց:

120. Շնորհալին ետք ԺԲ. դարու շարականներու նշանաւոր հեղինակն է Ս. Ներսէս Լամբրոնացի, ծնած 1153-ին բարեպաշտ ու ազնուական ընտանիքէ: Հայրն է Օշին Լամբրոնի իշխան ու մայրը՝ Ն. Շնորհալուց եղբօր զուստրը Շա-

հանդուխտ: Սմբատ մանուկն, ասիկայ է Լամբրոնացւոյն աւագանի անունը, առանձնացաւ Սկևռաց վանքն որուն առաջնորդ կարգուեցաւ լեւոյ 23 տարեկան հասակին մէջ Շնորհալուցն յորդորով ու ձեռքով ընդունեց եպիսկոպոսութեան աստիճանը: Իր գիտութեամբ ու սրբութեամբ թէև հիանալի, բայց ոմանց նախանձն ու ատելութիւնը գրգռուեցաւ իրեն վրայ, այնպէս որ բարուրանքներ չերկրեցին իր կրօնական կարծիքներու նկատմամբ: 24 տարեկան հասակին մէջ խօսեցաւ Հռոմկլայի ժողովին մէջ իր նշանաւոր Առաքելաբանութեան, որուն նիւթ են Քրիստոնէական սէր ու եկեղեցւոյ խաղաղութիւն: Վերանորոգեց քանի մը կարգեր և ոմանք ալ փոխ առաւարկմուքէն: Շարականներն իր Ատենախօսութեան Պատգամաբանութեան մեկնութեան վաչելուչ ու ընտիր շարադրութենէն զուրկ են, որով իր Աստուածաբանական յորդ ու հմուտ լիզուին հետ չի կրնար կցորդուիլ քերթողի մը հանձարը: Ակեռայ կամ Լամբրոնի վանքի նորոգութեան ատեն, մինչ ինք Տարսոնի եպիսկոպոս էր, երգեց «Կանոն նոր կիւրանքի» թէև այս շարականն չատկապէս Ակեռայ վանքին համար է, բայց այդ տօնը Նոր կիրակիին ինկած ըլլալով՝ լեւոյ ընդունուեցաւ իբրև Նոր կիրակիի շարական: Նոր կիրակին կը տօնենք ի չիշատակ մարդոյ նորոգութեան մեղքի ու մահկան հնութենէն, իբրև նաւակատիք մեր բնութեան: Լամբրոնացւոյն են նաև «Այսօր չարեաւ» ը. «Կանոն որդւոց և թոռանց Ս. Գր. Լուսաւորչի»: Առաջինին մէջ կը ձգտի միութիւն արձարծել եկեղեցիներու մէջ» քանի որ անոր զլուխը Քրիստոս է միայն. երկրորդին մէջ ալ կը ներկայացնէ Ս. Լուսաւորչի շառաւիղին բարոյական արժանիքը: Այսօր չարեաւի մէջ եկեղեցին հարս ու Քրիստոս փեսայ կոչուած են ալլաբանօրէն:

«Համբաժման» շարականն ալ Ն. Լամբրոնացւոյ կը վերադրուի:

121. ԺԲ. դարուն Արևելեան հայոց մէջ իբրև հոգևոր երգահիւս նշանաւոր էին Յովհաննէ Սարգսիս Վարդապետ որ Արցախու շրջանէն: Յովհ. սարկաւազ վարդապետ որ Արցախու Փառխոս գաւառէն քահանայի մը որդին էր, իր պատանեկութեան օրերն անցուց Սանահինի ու Հաղբատի վանքերու մէջ, իետոյ Հաղբատի վանքին առաջնորդ կարգուեցաւ: Գիտու-

Թեամբ Սոփի: «...» կոչուեցաւ և իր սրբասէր վարքով պատկառելի եղաւ ամէնուն: Իր ուսումնական գլխաւոր արդիւնքներէն մէկն ալ եղաւ Մովսէս Բ. եղիվարդեցւոյ օրով կարգադրուած Տոմարական շփոթութիւնները վերցնել շարժական տօներու մասին: Այս Տոմարական կարգադրութիւնը կը կոչուի սաբա-սաբաբ: Սարկաւագ վարդապետ Թադուած է Հաղբատի վանքին մէջ: Սարկաւագ վրդ «Պալծառացար Այսօր» ով կերդէ Ղևոնդեանց նահատակութիւնն ու այս առթիւ հալեկեղեցւոյ պալծառութիւնը, լուրջ զոր աստուածասէրները միայն կը տեսնէին և ոչ թէ մարմնասէրները կամ աշխարհասէրները:

Ղևոնդեանց համբարձին «Երգեմք ձեզն» ալ Սարկաւագ վրդի կրեալ: Հալեկեղեցին հրեշտակալին ձայնով լաւերով կերդէ սուրբերուն նահատակութիւնը, որոնք իրականացուցին ինչ որ իրենց Յաղկերտին գրած թղթին մէջ կըսէին: «Ի բէն տանջանք, և ի մէնջ լանձնառութիւն, սուր քո և պարանոց մեր»:

122. Կիրակոս կաւանդէ թէ Արեւելեան հայոց մէջ մոռցուած կամ ալլափոխուած էին երգերը, զոր ուղղագրեց ու շատերուն սորվեցուց խաչատուր Տարոնեցին: Ասիկա Հաղարծնի վանահայր կարգուեցաւ և ալ և ալ երգեր ու գանձեր գրեց, որոնց մէջ գեղեցկագոյնն է Խորհուրդ Խորհի որուն սկզբնատառերն իր անունը կը կազմեն: Այս երգը շարագրեց Տարոնեցին. երբ Զաքարիա սպասալար մեծ իշխանն պատարագ մատուցանելու համար՝ բացօղեալ տեղ մը վալելու խորան մը կանգնեց: Խաչատուր ծանօթ է իբրեւ լաւ երգիչ. լաւ ձայն ունէր և հմուտ էր եղանակներու:

«Խորհուրդ Խորին»ի մէջ վալելու լմաստներով կը բացատրուին թէ ինչպէս որ Աստուած երկինքը հրեշտակներով ու նախատեղծ մարդուն զբախտ ստեղծելու ատեն զանոնք զարդարեց պատշաճօրէն, նույնպէս եկեղեցին—երկրի վրալ երկինք—հիմնելու ատեն ուղեց պալծառագեաց վալելու: Թեամբ գեղազարդել անոր բնակարանն ու արարողութիւնները, մանաւանդ որ Քրիստոսի շարչարանքով երկրորդ նորոգութեան՝ մարդը հոգեւոր անկողողպտելի զգեստներով զարդարուեցաւ որուն ապացոյց են արտաքին զգեստներ ու զարդերը: Եւ տունին մէջ կը խորհրդածէ պատարագովն զօտուոյն վրալ

ըսելով «ով Տէր զօրութեանց, ինչպէս որ փառքի սրբութիւնը մէջքդ կապեցիր, աչնպէս ալ մեր մտքի մէջքը սրբութեամբ կապէ որուն նշանակն է զօտին»: Վեցերորդին մէջ քահանային բազարանին վրալ, ինչպէս որ Քրիստոս իր արարչական բազմակները խաչին վրալ աստղերուն հանդէպ տարածեց, աչնպէս ալ պատարագովն բազմակները հոգւոյն զօրութեամբ զօրացնէ՝ ժողովրդին համար միջնորդելու ձեռքի համբարձմամբ: Եթեմբերդին մէջ պատարագովն սաղաւարտին և զգալարանները պատող խաչանիշ ուրարին վրալ: Վերջին տունին մէջ ալ եկեղեցւոյ դասակարգութեան աստուածակերպ զարդերուն վրալ:

Իսկ պատարագի խնկարկութեան Շարականը «Յայտ լարկ» լալտնի չէ թէ ով երգած է: Վերջին դարերու գործ կերակ: Խնկարկութեան օրինակ կը բերուի հին ուխտէն Զաքարիա քահանային խնկարկութիւնն որ օրինակ էր իր աղօթքին:

123. Լեզուի տեսակէտով Հալ հին մատենագրութիւնը բաժնած են «...», «...», «...» դարերու: Ոսկեդարն է Ե. դարած Զ. ԺԱ. դարն անցման շրջանն է, ԺԱ.—ԺԳ.—ը արծաթի դար, ԺԳ.—ԺԵ. պղնձի դար, ԺԵ.—էն ետք կսկին նոր մատենագրութեան շրջանի ծիւերը:

ԺԲ. դարուն գրաբարի հինաւորեց մարմնոյն երակներուն մէջ կենսախալտ քալակը ներարկեցին ճարտար ձեռքեր, և գեղեցիկ ձերունին կանդնեցաւ առոյգ ու զուարթ, և դեռ ԺԳ. և ԺԴ. դարերու մէջ կենդանութեան իբրեւ նշու երեցան իր ալտերուն վրալ կարմիր ցոլմունքներ, բայց ճգնաժամի տագնապ մ'էր աչն և ոչ ալ ինչ: Գրաբարը՝ պատուաստուած դաւառաբարբառներով՝ շփոթ կերպարանք մ'առաւ զանազան հակազդեցութեանց պատճառաւ: Այսուհետեւ գրաբարը խոնարհեցաւ իր բարձունքէն ու առանձնացաւ վանքերու խորշերը: Լեզուի սոյն լատիութիւնը կը տեսնուի այս դարու հոգեւոր երգերու մէջ:

124. ԺԳ. դարու կրօնական բանաստեղծութեան գլուխը կը գտնուի Գրիգոր Սկեռացի, Լամբրոնացւոյն աշակերտը: Սկեռացի վանքին միաբան ու լաւ ձայն ունէր, նշանաւոր էր տաղերով ու աչբուբնական կարգաւ գրած Յովհաննէս Մկրտչի ծննդեան «Արեգակն արդարութեան» շարականով: Գր. Սկեռացի վարդապետը ալ շարականին մէջ ամփոփած

է Ս. Յովհաննու կարապետին մասին ինչ որ եկեղեցին կընդունի կամ կը վարդապետէ: Արեգական արդարութիւնը դեռ չերգահնաւ, Խորենացուն վերադրուած շարականը կերպուէր: Խնկ ալ կը կոչուէր Սկեռացին, այս պատճառաւ ոմանք կը կարծեն որ Խնկ կոչած եղանակին հեղինակն ինք եղած ըլլալ:

125. Այ նուազ նշանաւոր է նաև այս դարուն իբրև հոգևոր երգի հեղինակ վարդան վրդ. Բարձրբերդցի, որ ջաջորդաբար վիրապի, Սաղմոսավանքի և Թեղենեաց վանքի մէջ պաշտօն կատարեց: Վարդան վրդ. ծանօթ է նաև իբրև պատմիչ, ատենախօս ու մեկնիչ: Ասոր անունով հասած են կանոն Յովակիմայ և Աննայի. «Որ նախիմացի» «Մեծացուցէ»-ին մէջ Ս. Աստուածածին ալլաբանօրէն կը կոչուի Դրախտ Աստուծոյն, Արեւելի Եմանայ, Տաղանայ տղայացիէ, Սափոր Կիլի, Տաղաւոր Աբրահամէն և «Ճաշուին» մէջ ալ Տաղանայ Կոռիլ, Խորհրդաւոր Խորան, Ժորժորէի Կանդիկոսան, Գրտաւան Կենաց Ժորժիկան, Երթաւորան Եօթնորփէան շնորհաց, Կոռիլի տաղաւոր տղայացի: Այս վերջինը խորհրդածութիւն է Ս. Կուսին անունին, իբր թէ անունին համեմատ համաթիւ է աշխարհի ստեղծագործութեան: Բացատրենք. Մարիամ հայ թուարկութեան համեմատ կընէ 5422, այս թուին մօտ է ըստ Եօթնասանից աշխարհի ստեղծման թուականը մինչև Քր. որ է 5202: Իսկ եթէ լատիններուն և չոյներուն համեմատ առնենք Մարի կը պակսի 200, որով աշխարհի արարչագործութեան թուականը կըլլայ 5222:

126. Այս դարու մատենագիրներու մէջ ամենէն նշանաւորը կրնայ համարուիլ Յովհան Երզնկացին, որ կը կոչուի նաև ղլղ (— Խորհրդաւոր), ու Ծործորեցի: Երզնկացին իր ձերութեան հասակին մէջ սովորեցաւ նաև լատին լեզուն երբ ունիթոններն եկան և սկսան լատինականութիւն քարոզել Լաւոց մէջ:

Իբրև հոգևոր երգերու հեղինակ կը լիշուի իր կանոն Ս. Առսաւորչի. «Վերինք ամենայն», (իսկ «Ով երջանիկը» Յ. Մանգակունտ է, կըսեն), ի պատիւ նշխարաց Ս. Ներսիսի Ժրբ անոր ոսկերքը գտնուեցան Թին աւանի մէջ. և «Որ զլուս անձաւ», շարականներով, «Յամենայն ժամ օրհնեմք» և «Այսօր ձայնն հայրական» Զրօրհնէքի տաղերով, որոնց մէջ կը փալի Երզնկացուն բանաստեղծական հանձարը նաև «Եթն խոտաճաքակացը»: Ասոնցմէ զատ ունի ի պատիւ Վերափոխ-

ման Ս. Կուսին «Առաջնաճաշակ պողոյն» տաղը: Կիրակոս Արևելցին ալ գրած է այբուբենական կարգով «Արևելք դերարփին» շարականն, որուն վերջին ութ տողին մէջ գետեղուած է իր անունը:

127. Ժ. Դարու հոգևոր երգերու հեղինակներու շարականը կը վերջանայ Յակոբ Ա. Կլայեցի կաթողիկոսով (1268—1286) որ լատինասէր ու ծիսափոխ էր: Ասիկա գրած է «Կանոն հրաշափառ ծննդեան Տիրուհուն ի Յովակիմայ և ԿԱՆՆԱՅԷ»:

Քրիստոնէական եկեղեցին, բացի Քրիստոսի հրաշափառ ծնունդէն, նաև Ս. Աստուածածնին և Յովհաննու Մկրտչէն, սուրբերու ծնունդը տօնել սովորութիւն չէ ըրած: Յով. Մկրտչին մաքուր ծննդեան հանգամանքներուն մասին Աւետարանը կը վկայէ, իսկ Ս. Կուսին «անախտ» ծննդեան մասին թէև լատինապէս Ս. Գրոց մէջ բան մ'աւանդուած չէ, սակայն որովհետեւ Քրիստոսի մայր եղաւ, եկեղեցին մաքուր կըմբռնէ Ս. Աստուածածնի ծնունդը իր մօր արգանդի մէջ լղանալու և աշխարհ ծնելու ատեն:

Եկեղեցւոյ առաջին դարերու մէջ Ս. Աստուածածնի ծննդեան տօնախմբութեան մասին լիշատակութիւն մը չիկայ: Հռոմի մէջ Ս. Աստուածածնի ծննդեան տօնախմբութիւնն սկսաւ Է. դարուն վերջերը, Սերգիոս ա. պապին օրով. ինչպէս կը լիշեն գրապետ Անաստաս ու Ալկուինոսն. Յոյներն Է. դարուն սկսան տօնել. ինչպէս որ Անդրէաս կրետացի. նոյն դարուն ներքոյ մ'ունէին այս տօնախմբութեան լատուկ: Հետզհետէ ուրիշ եկեղեցիներու մէջ ալ մտաւ, Ը. դարուն՝ Գաղիա ու Սպանիա: Ժ. դարուն Կիւ Մանուէլ Կոմնենոս կայսրը որոշեց որ Տիրամօր ծնունդը ուրիշ երեւի տօներու կարգը դասուի: Ուրեմն Տիրամօր ծննդեան տօնն Է. դարէն սկսելով մասնաւոր եկեղեցիներու մէջ, Թ. դարէն ետքը ամեն եկեղեցի ալ ընդունեց, մինչև որ Ժ. դարուն 1245-ին, աւելանալով մէջ, Իննովինտիոս Գ. պապին օրով Լոնդոնի ժողովով սահմանուեցաւ ութօրեայ տօնախմբել զայն:

Սոյնպէս մեր աղգին մէջ ուշ մտաւ այս տօնը, այսինքն Ժ. դարուն, ինչպէս որ կը տեսնուի Ս. Աստուածածնի ծննդեան օրուան առաջին դարէն՝ «Նրգեցէք որդիք» զոր երգեց Յակոբ Կլայեցի ա. կաթողիկոս 1267-ին, իսկ Բ. պատկերը

«Որ նախիմաց» երգած է Վարդան վարդապետը—«Որ նախիմաց» շարականը այլ և այլ մակագրութիւն ունի. տպուածները սովորաբար կը դնեն «Կանոն Յովակիմայ և Սննայի ծնողաց Սուրբ Աստուածածնին, ասոր նման քանի մը ձեռագիրներ ալ, բայց ուրիշ ընտիր ձեռագիրներ «Այլ կանոն ծննդեան Ս. Աստուածածնի»): Կերեալ որ նախապէս Ս. Աստուածածնի ծննդեան Բ. օրուան յատկացուած էր այս շարականը և որ չետոյ Ս. Աստուածածնի ծնողաց տօնին ալ երգուեցաւ:

«Ներգեցէք որդիք» ի մէջ Ս. Աստուածածին կը նմանցուի՝ Բորեք լեռը վառած և ոչ այրած մորենիին, Ս. Աստուածածին աստուածային հուրն իր մէջ կրելով՝ անոր կուսութիւնը մնաց անկիզելի։ Վարդապետական տեսակէտով՝ այս շարականէն կը սորվինք որ ինչպէս Աստուծոյ փառքը Սինա լեռան վրայ երևալով՝ մարդոց ու գաղաններու անմատչելի եղաւ, այնպէս ալ Աստուծոյ բանը Ս. Կոյսին մէջ յայտնուելով՝ Ս. Կոյսն անհաղորդ սահուեցաւ մարդկային մերձաւորութենէ ու գաղանային դեբեր չկրցան մերձինալ անոր։ Խաբելով, և կամ իմանալ անոր ծննդեան գաղտնիքը, աս ալ ընդդէմ հերետիկոսներու որ Աստուածամօր աշխարհային կենցաղին վրայ չարափառութիւններ կը տածէին։

128. ԺՎ. դարուն ալլևս կը դադրի Շարական լօրինելու փափագը, տօներն ու ժամակարգութիւնն իրենց վերջնական կատարելագործումը գտած էին: Անուհետև կսկսի անհատնում շարք մը դանձերու և տաղերու: Ասոնց հեղինակները ծանօթ չեն, ոմանք կը վերագրուին Մկրտիչ Նաղաշին: Այս դանձերն ընդհանրապէս լատկացում են զանազան հասակներու և գրում են դարուն ռամկօրէնով ու բաւական սրտաշարժ են:

Չանազան եկեղեցական երգեր ալ ունինք ժ.Գ.— ժ.Ե.
դարերուն, որոնց հեղինակներն են Կոստանդին Արևելցին,
Կիրակոս Երզնկացին, Գրիգոր Շերենց ու Առաքել Սլանցին:
Գրիգոր Շերենց ահագին հատոր մը թողած է երդերու: Եր-
գերէն ոմանք են ի գովեստ Ս. Էջմիածնի, ասկէ կը լալա-
նուի թէ Էջմիածին սրբան մեծ նշանակութիւն ունէր կամ
ժողովրդականացած էր:

129. Քիչ մ'ալ մեր կրօնական բանաստեղծութեան հրա-

Ֆիդայան կամ մեր նախնեաց լեզուով ճարտասանութիւն արժէքին վրայ: Ինչ որ հիմա մենք գրադիտութիւն կըսենք, նախնիք ճարտասանութիւն կըսէին: Առկէ 20—25 տարի առաջ գրադիտութեան կանոնները մեր մէջ կաւանդուէին ճարտասանութեան անունին տակ: Ճարտասանութիւնը դասական ուսումնեւորութեան վրայէն էր լրումն օրինացը: Ճարտասանութիւն կարդալ գիտնալմեծ բան էր, համալսարանական կրթութիւն մը առածի չափ, մինչ հիմա ճարտասանութիւնը Գրադիտութիւն անունով կաւանդուի բարձր նախակրթարաններու մէջ, և իր տարրական կանոնները՝ նախակրթարաններու մէջ անգամ՝ աղէկ խօսեալ և աղէկ գրելու համար:

Զ. Նփրեմ վ. Սևթեան իր «Արհեստ ձարտասանութեան»
(Վենետիկ, 1832. էջ 42) իրաւամբ գիտել կուտայ, «ձարտա-
սանութիւնդ անունն ըստ ձայնին նշանակելոյ լսի՝ ճարտարու-
թեամբ ասել, իման պերճաբանել։ Ասի եւ հռետորութիւն ա-
ռեալ ի Յոյն բաղէն Ռէօ՝ ասել, պերճաբանել։ Սակայն ըստ
գատուկ նշանակութեան դպրոցս զանազանին ի միմեանց
Հռետորութիւն եւ ձարտասանութիւն, ընդ որս նոյնանշան
առնումք մեք եւ զատենախօսութիւն։ Զի Հռետոր նշանակէ
զվարժապետն Ատենախօսութեան որ վարդապետէ զկանոնս՝
ձարտասանութեան չունին աշակերտեցոյ, մարդէ զնոսա ըստ
կանոնաց արհեստին։ Իսկ ձարտասան է որ ատենախօսէ եւ
Բեմքասաց լինի ի լսելիս բաղմութեան ըստ կանոնացն զոր
աւանդէ ձարտասանութիւն։ Հռետոր է վարժուին, ձարտասան
է վարժեալն։ Արք թէպէտ ի Հայունս համանշակք են ձար-
տասանն եւ Հռետորն, այլ մեք ջանացաք հաստատուն պա-
հել զզանազանութիւնն»։ Մեր նախնի մատենագիրներուն եւ
հոգեւոր երդերու հեղինակներուն մեծ մասը «մեծ քերթող»
կոչուելէ զատ, կը կրեն նաև «Հռետոր» տիտղոսը զի իրենց
անչափահաս ու չափահաս աշակերտեալներուն կաւանդէին
Հռետորական արհեստը Գերթողականին հետ։ Բանաստեղծու-
թիւն ու հռետորութիւն գիրկընդխառն էին, իրար կը լրաց-
նէին, առանց հռետորական արուեստին բանաստեղծութիւն
չկայ, եւ տաւանց բանաստեղծութեան՝ հռետորութիւն։

Ընտիր բանաստեղծները ճարտասանեցին քերթովու
ատեն, քերթեցին ճարտասանելու ատեն, Կարբուհ, Բաղլուհ-
ձան ու Աղլուհ հանդէսներու առթիւ Կարգական (յունարէն

131. Փոխարեութեան սքանչելի օրինակներ, «Աղանի» քաղցրաբարբառ հեղաբանել զՏէր Յիսուս, քացրաբարբառ աղանին, աշինքն Ս. Կիրակոս մանուկը «Տէր Յիսուս» կը մըմնջէր: Հոս կենդանիի մը, աղանին սեփական լատուս:

134. Նախնիք ճարտասանորեն գործածելով
նառառ բառերը, որպէսզի մտքերն արթնութիւն ու խօսքին
կենդանութիւն տան: Այս մասին հիւանալի է Նարեկացին.
«Գոհար վարդն վառ առեալ»-ի վեհից վարսիցն երփենից,—

Ի վեր, ի վերայ վարսիցն—պղպջէր ծաղիկ ծովային:—Շուշանն շողէր հովտին—Շողշողէր դէմ արեգական,—Գոհար վարդն, այսինքն Կրէ-բուլեւեան վարդ (Rosa Centfolia) «Ծաղկանց թաղուհին, վարդադուին—Վառ բացուած էր վեհ երփենի վար-սերով—Թերթով, թերթերուն վերն, թերթերուն վրայ կը պղպջէր ծովային ծաղիկ, Շուշանը հովտին մէջ կը շողար և Արեգական դէմ կը շողշողար:

135. Ո՞ր թողունք Կիստոսեւելանք կամ Բարտասեւելանք (Յուն. Բյուզէնէւ, լատ. Conformatis) որ նոյն իսկ անշունչ արարածներու խօսեցնել և կեանք կուտայ, ինչպէս Շարակաւնին մէջ, «Անուանեալ փայտ գիտութեան, զմեզ ի կենացն հանեալ արտաքսեցոյց, որով յարեաւ մայրն Նւա, և պատրեաց զնախահայրն: Իսկ փայտ խաչի քո կենսատու գաւազան զօրութեան կենաց մարդկան և յոյս հաստատութեան, առաջնորդ եղև մեզ ի կեանսն յաւիտենից»։—Թէն «Մառ գիտութեան» կոչուածն Նւայի յանցանք զործել տուաւ և նախահայրը խաբեց, մեզ կեանքի զրախտէն հանեց, արտաքսեց, սակաւն քո խաչափայտ, որ մարդկային կեանքի զօրութեան կենսատու գաւազան ու հաստատութեան յոյս է, մեղի առաջնորդ եղաւ դէպի Յաւիտենական կեանքը։—Կարձեալ, Զորհնէքի տաղին մէջ Յորդանանու զարհուրանքն՝ իր ակիքներուն մէջ Յիսուսի կոխելու ատենը։ «Գետ, մի զարհուրիր, քո արարիչն եմ եմ»։ Եկեալ մկրտիմ և յուանամ զմեզս»։

Խաչի տաղերէն, «Հաւիկ մի պայծառ տեսի աննման»—
Ի յայն խաչափայտին վերայ աննման—Աննմանիդ ով նման,
դու նման.—Չթեա արծաթափայլս ունէր աննման.—Արեղակաւն
չողոյն նման աննման: Զձայնիկն ողորմուկ ածէր աննման,
—Գաբրիելեան փողոյն նման աննման:—Չաչերն արտասուօք
լնոյր աննման:—Առաւօտեան ցողոյն նման աննման:—Յա-
րութեան մեղեղիներէն. «Նս ձայն զառիւծուն ասեմ, որ դո-
ւնէր ի քառաթեկն գոյէր—Չայն առնէր ի սանդարամետն,
—Չայն առնէր ի սանդարամետն.—Հաւուն հաւուն արթնա-
ցեալ՝ Դիտելով ըզհեթանոսս.—Չայնէր, ձայնէր տատրա-
կին,—Սիրասնունդ սիրելոյն:—Սէր չառաւօտէ, սէր չառաւօտ
է—ձեմեալ իր անձուկ ծաղմամբ:

Բարառնու թեան ձկին նման է Բացարարչու-Լիւնն (Յուն.
Աբսարրոֆէ լատ. Aversio). որ սեռած կամ բացակայ անձկրու

խօսք կուղղէ: Այս մասին Ծնորհաւուն՝ Քրիստոսի Դժոխք իջնելով, արդար հողիներն ազատելու տալն հիանալի է, «Ծանեալ Ագամ զնշան գալոյն Տեառն ի դժոխս»:

136. Շարականները մանաւանդ իրենց վստմութեամբ գերազանց զիրք մը կը գրաւեն մեր եկեղեցական մատենագրութեան մէջ: Բերթողը Բրիստոսի խաչելութեան ատեն ոչ միայն լուսաւորներուն բանաւոր արարածի մը գործ կը վերագրէ, այլ և աշաւոր ու շքեղ օրինակով կը բացատրէ անոնց խաւարիլը, որպէս թէ անոնք Անեղին արեան գոյնով ներխաւարիլը, որպէս թէ անոնք Անեղին օդին մէջ սրսկելով:— Կոնեցան, խաչելութեան ատեն Արիւնն օդին մէջ սրսկելով:— «Նկալեալ լուսաճեմ տարերցն զգոյնս արեան Անեղին»: Այլ պէս քերթողն Արեգական խաւարելու պատմութիւնը կը վստմացրնէ:

Պարզութեան մէջ վսեմութիւն «Անապականութեան աղ-
բիւր և ի Մահու կեանք զքեզ ծանեան հրանլութիցն սեռք և
բանական կենդանիք».—հրանլութեբու (—հրեշտակներու) Գա-
սակարգութիւններն ու բանական կենդանիները քեզ անա-
պականութեան աղբիւր ու մահով կամ մահուան մէջ կեանք
ծանչցան, ալսինքն անոնք դիտցան թէ մեռնելէ ետք քեզմով
պիտի ապրին—Յաւիտենական կեանք: Այս հատուածին մէջ
նշաւի վսեմ է Աստուծոյ, հրեշտակներու և մարդոց բնութեան
բացատրութիւնը, նշնաւի ալ քերականական կազմուածքը
պարզ ու յստակ է: Թէև քերականօրէն դիւրին կը վերլուծուի,
սակայն բանաստեղծօրէն հիանալի է յօրինուածքը:

Ուրիշ վսեմ մ'ալ կայ, որուն օրինակն լաճախ կը տես-
նուի Շարականին մէջ: Աս է Ուժգնութիւնն ու Անօրինակ հա-
մարձակութիւնն, ալնպէս որ մտքերը վախով մը կապշեցնէ:
Սահակ Զորավորեցիին խաչի Զդ օրուան կանոնին մէջ խա-
չափալտին պարծանքը ալնչափ վսեմութեամբ կերգէ:

Յարութեան, Ծննդեան, Խաչի և Աւագ օրհնութեան շա-
բախաններուն մէջ լեցուն են այնպիսի վսեմ իմաստներ և
կարծես կը մրցեն երբայական բանաստեղծութեան հետ։ Շա-
բախանները Վերածնունդն են. իսկ երբայականն, Ս. Գրքին
մէջ նահուէշաշունչ։ Ո՛րչափ վսեմ ու ահաւոր է ժէ. սաղմուդը,
սակերտ խռովեցաւ ու դողաց, լեռներու հիմերը սասանեցան
ու խռովեցան, որովհետեւ Աստուած անոնց վրայ բարկացաւ
Անոր [Աստուծոյ բարկութենէն ծուխ ելաւ, Անոր գէմքէն

[կամ բերանէն, ըստ եբրայեցերէն բնագրին] հուր բորբոքեցաւ, և Անկէ կալծակներ թափեցան: Երկիրքը ցածցուց ու իջաւ. Անոր ոտքին տակ մէդ կար [ամպերու վրայ նստած]: Ամբակում մարգարէն [Գ. 6]:—[Աստուած կեցաւ, և երկիրը շարժեցաւ, հալեցաւ *], և աղբերն հալեցան, լեռները զօրութեամբ խորտակուեցան և լաւտեհնական բլուրները հալեցան»: Նաև Դատ. [Ե. 4] «Տէր Սէիրէն ելլելու և Եդովմի անդամտաններէն Բէնէլու ատենդ, երկիրը շարժեցաւ, երկիրքը խորացաւ և ամպերը ջուր ցօղչցին»: Ստորագծուածներն ոչ թէ լատով փոխաբերութիւններն են, այլ լափշտակուած մտքի մը խօսքերը:

137. Շարականներու քերականական զարտդութիւնը. 1. Մէտապոն հոլով փոխանակ Գրեգորիանի, «ընդ հաշու արկեալ թագաւորութեան» (Բ. կիր. Մեծ պահոց, հարց), «Ունդ հողեղէն բնութեան» (Կանոն ծնդ. Յով. Մկրտ. օրհ. ԺԹ. տուն) «Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգումն» (Հոգեգալստ. Գ. օր), 2. Հայտնի հոլով Տէր Բայն, «Ձքեղ ուր թագաւորդ թագաւորաց ի ծառայէ դատապարտւալ» փոխանակ ըսելու «Դու որ թագաւորաց թագաւորդ ես ի ծառայէ դատապարտեցար». «Ձծագումն լուսոյ... տեսնալիւր բազմութեան ժողովոյն», եթէ Զ. գրչագրական սխալ չէ, պէտք է ըսել թէ քերթողը երաժշտութեան ազատութեան հետեւելով՝ զանց ըրած է քերականական կանոնը: Այսպիսի զանցառութիւն կը տեսնուի նաև «Սրբութիւն Սրբոց» չարականին մէջ, «Տեսիլ անճառելի խորհրդոյն զոր լառաջագոյն ցուցաւ», փոխանակ ըսելու որ լառաջագոյն ցուցաւ:

3. Յարութեան գերանունի արարողութիւն, «Կոյս Մարիամի զոր ողջունարեր աւետեօք կրեցեր զտուղն ի քեզ զօրէնն ողջունի» (Կանոն Աւետեաց, օրհ. Կ.բդ տուն) «Զոր ոչ բնութիւնք արարածոց զԱստուած տանիւր, մահուամբ սահմանեալ զնի ի նոր գերեզմանի» փոխանակ ըսելու՝ Աստուած զոր բնութիւնք Արարածոց ոչ տանէին, սահմանեալ զնէին ի նոր գերեզմանին»։ Յարաբերական գերանունն իր չարաբերեալէն առաջ զրուած և չարաբերեալը փոխանակ սեռականի՝ ուղղական

*) Կալիլ՝ վարէն վեր, ցածէն բարձր, իսկ Կալիլ՝ վերէն վար՝ բարձրէն ցած Կալիլն է:

«Խախտացելուն չորրվախի հոգևով ի Ծննդեանն Քրիստոսի որ ի փրկութիւն աշխարհի լախնեցաւ Աստուած բանն»։ Ասիկա չըջուած նախադասութիւն մըն է, Բերականութիւնը կը պահանջէ սապէս. «Խախտացելոյն չորրվախի հոգևով ի Ծննդեանս Քրիստոսի Աստուծոյ բանին որ ի փրկութիւն...»։

4. Յարմարեալն Լաւճաբոյ, «Ամպ թեթեւ ու լուսաւոր, որ զանձրեն կենաց ի քեզ հեղեալ ի լերկնալին ծովէն շուր հոսեցեր ի լերկիւր ծախաւոտ»:

5. Խախտիլ է ընթացած, չեն եղև վայրաբնակիլ (հ) մայրաքաղաքն Երուսաղէմն. (Խաչի Գ. օր), «Զծագողմն լուսոյ Աստուծայիւն նշանի քոյ ճառագայթիւք տեսանիւր (հ) բազմութեան ժողովուն»:

6. Սեփականի Կաթնաշառի, «Որ զնախաձայն մարդարէիցն եկիր ի լրումն խորհրդոյ» փոխանակ ըսելու «որ նախաձայն մարդարէիցն եկիր ի լրումն խորհրդոյ»: Հոս բայանունն ի բալին ալս հալցական հոյով խնդիր առած է:

7. Թուի անհամաձայնություն.— «Զոր ոչ բնութիւնք արարածոց աստուծոյ՝ (—տանէին): «Ի իշատակի քահանայապետաց աստուծայնոց՝ (=Աստուածայնոց (=Աստուածայնոց): «Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան լետոյ լիմարեցոյց (=լիմարացոցին) զթագաւորն (Անձինք նուիրեալք): «Խորհուրդք հոգեւորք լղութեանցն լալտնէր (=լալտնէին) (=նոյն): «Աղեղն հօրաց նուազեցեալ» (=նուազեցաւ):

Յայտնի է թէ այդ հոգևոր երգերը մեր նախնեաց հայ-
եացքով թանկագին քարեր, գոհար, լակինթ, մարգրիտ էին,
ուրեմն ինչու չճանչնանք առոնց լարղը։ Աստոնց լարղը ճանչ-
նալն չի նշանակեր միայն մեքենաբար մտիկ ընել կամ եր-
գել ։ Թափանցելու է անոնց ոգւոյն, և այլն։ Եթէ երգիչ են,
երգել այդ շարականներու հեղինակներու ոգւոյն համաձայն,
ոգևորուած ներշնչուած, և ոչ թէ կախինք մէջ խաղեր և ոչ—
նուիրական երգեր եղանակելու պէս։ Գեղեցեղանքը, Շեշտը,
Բամբը, Որոտումը, Դաշն ձայնն հոն՝ ուր Շարականներու ո-
գին կը պահանջէ, բայց ոչ երբէք ձեքձեքում ու քաշքշէ-
կն ուր չէ մեղանշողը նախատինք ըրած կըլլայ այդ սրբա-
ղան հեղինակներուն դէմ։ Ահա այդչափ ակնածանքով երգե-
լու է մեր հոգևոր երգերը։ Չեզի կը հարցնեմ, Շարականքի

ցուններու ճաշակին ու կրքին խաղալիք դարձած էր, Պօլսոյ հայոց պատրիարքարանը ազգային եկեղեց. եղանակները մօտայլուտ կորուստէ վրկեւու համար գործի սկսաւ: Բայց այս քարի ձգտումը իրագործելու համար՝ հարկ եղաւ Պօլսոյ բազմակարծիք և ինքնահաւան տիրացուներէն չանձնաժողով մը գումարել: Պատրիարքարանը գործի ղեկավարութիւնը չանձնեց Ուսումնական խորհրդին: Սա 1864 սեպտ. 25-ին բոլոր տիրացուները հրաւիրեց որ Ղալաթիոյ եկեղեցին երաժշտական ժողով մը գումարեցին: Բայց այդ բազմատեսակ տիրացուներէն մենակ երկուքը ներկայացան. Արիստակէս Յովհաննիսեան և Նզիա Տնտեսեան, որոնք աւանդապահ և կանոնաւոր երաժիշտներ էին: Ժողովը տեղի չունեցաւ: 1864 դեկտ. 8-ին Ուսումնական խորհուրդը երկրորդ հրաւեր մը կրնէ որ տիրացուները ազգ. կրօն. ժողովին ներկայանան: Այս անգամ մեծամասնութիւնը կը բարեհաճի գալ: Հոն կորոշեն կազմել մասնախումբ մը որ եկեղեցական եղանակները բարեկարգելու հոգ տանի: Բայց նոյն իսկ այս առաջին նիստէն ետք երկրորդ մը տեղի չունինար և ժողովը կը խափանի: Այս անգաջողութիւնը աւելի կը խրախուսէ տիրացուներու կամայականութիւնը: Անգաջողութեան հետեանքը կըլլայ նոր հոսանք մը, անհատական ճաշակի երաժշտութեան հոսանքը: Խժգժական բազմաթիւ մեղեդիներ, տաղեր, «Տէր ողորմեա»ներ, Ամէն և ընդ հոգւոյդ քումներ, «Քրիստոս պատարադեար»ներ, մէկ խօսքով յորքական շարգի. Էւթէի, Տոնի, Խոնի եղանակներով պատարագի օրարողութիւններ, ծաղկադիր տեորակներով, հոգածութեամբ զրուած: Այսպէս աւանդեցին եկեղեցական երաժշտութիւնը որուն նմուշները մինչև այսօր շատ կը տեսնուին թէ մայրաքաղաքին և թէ շրջականներուն մէջ:

Այս շրջանի եկեղեցական երաժշտութիւնը աչքի կը ղարնէ իր անճաշակ, եթէ չըսենք անհամեստ, գոնէ խառնի խուռն, երաժշտական աւիւնէ բոլորովին զուրկ ձայնանիշներու կուտակումով։ Ա՛լ չենք խօսիր թէ եղանակներն ու բառերու ներքին իմաստը որքան անհամաձայն էին իրարու հետ։

Սանճարձակ տիրացուներու շրջանը տեսց 1864—1873, եբբ ազգ. եկեղ. երաժշտութեան համար նոր շրջան մը բացուեցաւ։

Այս իննամսեայ շրջանին աւանդապահ տիրացուներն ալ

ձեռք ղարկին իրենց հաւած հոգևոր եղանակները ձայնագ-
րելու, որ դրնէ եղածները ազատեն անկող տիրացուներու
ճանկերէն։ Հոս պէտք է լիշենք որ խակ տիրացուներու թե
ու թիկունք սուլին քանի մը տեղական առաջնորդներ և
գլխաւորապէս Պօլտոյ ամիլաները, չեմբայինը և առհասարակ
ուսնետր և կարող անհատները, որոնցմէ ամէն մէկը տիրացու
մը կը հովանաւորէր, կը կերակրէր, հետեւաբար եկեղեցական
եղանակներն ալ մէկին հալար պստուղ տուին...:

Շարականները ձախագրելու առաջին փորձն ըրաւ երա-
ժիշտ տիրացու Պապա Համբարձումն իր նոր հնարած ձայնա-
նիշներով 1839-ին, ինչպէս ըսինք: Ձախագրեց մինչև Ս.
Ջատիկի օրհնութիւնը «Այսօր յարեալ»ը: Բայց վերահաս մահը
գործն ընդհատեց և կարճ ժամանակէն իր ձայնագրածներն ալ
անչալտացան: Երկրորդ փորձն ըրած է երաժիշտ Նշիա Տնտե-
սեան և աւարտած է 1870-ին: Երրորդ ձախագրողն է Համ-
բարձում Զեյքեան որ մինչև հիմա Արմաշի դպրիւմանքին մէջ
եկեղ. երաժշտութեան դաս կուտայ: Նշիա Տնտեսեանը գրած
է. «Այս գործին կարելի է որ ուրիշներ ալ ձեռնարկած ըլ-
լան, բայց մեզի մենակ ծանօթ է այն որ Պալեան Կարապետ
ւան, բայց մեզի մենակ ծանօթ է այն որ Պալեան Կարապետ
է, բայց մէկ երգողի, մէկ ձախագրողի և չունի այն քննական
ուղղութիւնը որ անհրաժեշտ է այդպիսի ձեռնարկութեան մը
համեմատ: Միայնգամայն կը նշմարուի որ ձախագրողը քիչ
չառ լանդուզն փորձեր ըրած է մեր եղանակները տաճկակա-
նին վրայ սրբագրելու»: Կըսուի թէ Արիստակէս Յովհաննէ-
սեան և Թերես ուրիշ տիրացուներ ձախագրած ըլլան շարա-
կանը, բայց մեզի յայտնի չէ:

Առաջին շրջանը կը փակուի երրորդ երաժշտական շրջանով:
Նախորդով մը, որ տեղի կունենայ 1873 ապրիլ 22-ին և կը
տևէ երկու տարի մինչև 1875:

Յանձնաժողովի առաջին նիստին ներկայ էին բոլոր
շամները 14 հոգի, բայց քիչ մը ետքը ոմանք անձնական
կրքերու հետեանքով կը հեռանան, մնացեալները եղիա Տըն-
տեսեանի ձգնադրած շարականը լարմար կը գտնեն և կորո-
շեն անոր տպագրութեան ծախքը հալթհալթել: Մեղի լատնի
չէ թէ Յանձնաժողովը աւարտեց իր աշխատութիւնը, կամ թէ
որո՞ւ քով մնաց Տեսեսեանի գործը, ինչ եղաւ, սոսկ չափը գի-

տենք որ 14-էն չորսը մենակ մինչև վերջը անդամակցեցան:

Հանգուցեալ Գէորգ կաթողիկոսն 1874-ին էջմիածին հրաւիրեց հանգուցեալ բարեխառակ տիրացու Նիկողոս Թաշեան, մեր երաժշտութեան դասատուն, որ թէ չարական և թէ ժամագիրք ձայնագրելով՝ տպագրեց, աջակցութեամբ պալատու դպրապետ տիրացու Կարապետի: Թաշեանի գործը հանրածանօթ է, չենք ուզեր երկարել:

Գ. ԽԱՉԿՈՆՅ



Վ Ո Ւ Մ Ա Յ

գրական հանդիսից արտատպուած գրքերը

1. Իս. Յարութիւնեան. Ստեփաննոս Պալասանեան գ. 25 կ.
2. Պօտապէնկօ. Մի կտոր հաց. թարգմ. Գ. ք. Աղանեանց գ. 10 կ.
3. Սենկէիչ. Դէպի Աթէնք. թ. Գ. ք. Աղանեանց գ. 15 կ.
4. Դաստիարակութեան զգրութիւնը. թարգմ. Ս. Մանդինեան գ. 30. կ.
5. Բակ. Կիլիկիա գ. 15 կ.
6. Ն. Տէր-Կարապետեան. Խաչատուր Արտիկեան գ. 60 կ.
7. Անժամանակ թատրոն և ընթերցանութիւն. թարգմ. Ս. Մանդինեան գ. 25 կ.
8. Իս. Յարութիւնեան. Աշակերտի լույստետրը գ. 30 կ.
9. Ստ. Աւետիքեան. Ղեկավարներ գ. 40 կ.
10. Պետալօցցի. Լինհարդ և Գերտուդ. թարգմ. Իս. Յարութիւնեան գ. 1 ր. 50 կ.
11. Մեղքիսդեկ եպիս. Մուրատեան. Պետրոս Շանչեան պատկերով. գ. 50 կ.
12. Իս. Յարութիւնեան. Զղացմունքների աշխարհ գ. 30 կ.
13. Յար. Թումանեան Մելիք Իսուփ. պատմ. պօէմա գ. 20 կ.
14. Մ. Սօկալի. Ուրացողը. թ. Իս. Յարութիւնեանց գ. 20 կ.
15. 1901. սուրբ էջմիածնի ժՁ դարադարձը. գ. 25 կ.
16. Նր. Շահաղիդ. Մկրտիչ էմին գ. 60 կ.
17. Գ. աւ. ք. Աղանեանց. Հնից-նորից ա. պրակ. գ. 30 կ.
18. Կարապէնկօ. Կոյր երաժիշտը. թարգմ. Մուշէ վարդապետ. գ. 60 կ.
19. Չորրորդ դարու հայ եկեղեցին գ. 25 կ.
20. Նրուանդ Շահաղիդ. Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը. գ 40 կ.
21. Իս. Յարութիւնեան. Իմ օրագիրը. գ. 25 կ.
22. Մեծ Ներսէս. գ. 25 կ.
23. Գ. Խաչկոնց. Հալոց կրօնական բանաստեղծութիւն գ. 60 կ.
24. Իս. Յարութիւնեան. Ն. Սպիրի. կին վիպագիր. գ. 15 կ.
25. Օր. Ն. Աղանեան. թարգմ. Սև հացեր. գ. 5 կ.
26. Շրաչնէր. Մատուռի աւերակներում. թարգմ. Գլուս ա. ք. Աղանեանց գ. 5 կ.
27. Մ. Գօրկիլ. Զեւկաչ. թարգմ. Մուշէ վ. գ. 25 կ.

28. Եր. Շահաղիզ. պատմական պատկերներ. դ. 60 կ.
29. Յ. Փաղէոսեան. Քուչակ նահապետի երգերը. դ. 15 կ.
30. Է. Շատրիան. Անտառապետ Ֆրէզէրիկ. թարգմ. Գլուտ ա.
ք. Աղանեան. դ. 40 կ.
31. Կանոնք ժողովոց. հայ. եկեղեցւոյ. խմբ. Արիստ. ա. ե.
Դաւթեան. ա. պրակ 40 կ.
32. Կարալէնիօ. Դատաստանի օրը. թարգմ. Մուշէ վ. դ. 40 կ.
33. Կ. Կոստանեանց. Շարժի ապրեգրութիւնը հայոց մէջ.
դ. 20 կ.
34. Գարեգին վ. Յովս. Մանրանկարչութեան արուեստը հայոց
մէջ. դ. 25 կ.
35. Ներսէս մեծի լաջորդներ. դ. 25 կ.
36. Սահակ Պարթեւ. դ. 25 կ.
37. Ժ. Լսպարր. Ապուշը. թարգմ. օր. Նստարդ Աղանեանց.
դ. 5 կող
38. Վարժապետը. թարգմ. Լ. Մ. Ա. դ. 5 կ.
39. Հազարան ըլբուլ. Յ. Փումանեանց. դ. 30 կ.
40. Ժ. Ժ. Ռուսօ. Էմիլ. Լ. թարգմ. Իս. Յարութիւնեանցի.
դ. 50 կ.
41. Եր. Շահաղիզ. Խորէն արքեպս. Ղալֆապեանը և Նալբան-
դեանի Աղցմիքը դ. 50 կ.
42. Լ. Յուլզա. Հերոտրատ. թարգմ. Տ. վ. դ. 50 կ.
43. Ի. Տուրգենև. Հայրեր և զաւակներ. թարգմ. Մուշէ վ.
դ. 75 կ.
44. Վ. Փափաղեան. Ալէմդիր. դ. 50 կ.
45. Գ. Ենդ. Սաի հոգեբանութիւնը դ. 10 կ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0375706

63.907